



Armenia



## Ն. Մնացականյան

**Թրաֆիքինգը և անօրինական միգրացիան Հարավային Կովկասում**



«Եգեա»  
Երևան – 2006

Հեղինակը իր շնորհակալությունն է հայտնում Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության Երևանյան գրասենյակին փորձագիտական և խմբագրական օժանդակության համար:

Մնացականյան, Նորա

Թրաֆիքինգը և անօրինական միգրացիան Հարավային Կովկասում.-Եր.: Եգեա, 2006, 92 էջ:

Գրքում ներկայացված է Վրաստանում և Թուրքիայում իրականացված ուսումնասիրության արդյունքները՝ կապված մարդկանց առևտրի (թրաֆիքինգի) խնդրի հետ: Բերված են միջազգային իրավական փաստաթղթերը, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի թրաֆիքինգին վերաբերող օրենսդրությունը:

Գիրքը նախատեսված է թրաֆիքինգի բնագավառում աշխատող հասարակական կազմակերպությունների, իրավաբանների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց համար:

Ուսումնասիրությունը և հրատարակությունը իրականացվել է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի և ՄԱԿ-ի Զարգացման Հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

Գրքում ներկայացված կարծիքները հեղինակային են և կարող են տարբերվել Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի և ՄԱԿ-ի Զարգացման Հայաստանյան գրասենյակի կարծիքներից:

ԳՄԴ 67.91

ISBN 99941-64-00-7

© Մնացականյան Նորա, 2006թ.

Ամեն տարի 2 միլիոն մարդ դառնում է մարդկանց առևտրի զոհ,  
նրանց կեսից ավելին կանայք և երեխաներ են:

## Անտոնիո Կոստա

ՄԱԿ-ի թմրամիջոցների հսկման  
և հանցագործությունների կանխարգելման  
գրասենյակի տնօրեն

## Ներածություն

Մարդու իրավունքների ոտնահարման ձևերից մեկը մարդկանց առևտուրն է՝ թրաֆիքինգը: Մարդկանց թրաֆիքինգ նշանակում է<sup>1</sup>. «շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրում, տեղափոխում, փոխադրում, թաքցնում կամ ձեռք բերում ուժի գործադրմամբ կամ այն օգտագործելու սպառնալիքով կամ այլ ներգործման միջոցների, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանության կամ վիճակի խոցելիության չարաշահման, կաշառքի, վճարների կամ շահի միջոցով ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունը ստանալու համար: Շահագործումը, առնվազն, ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևեր, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման իրավիճակները, անազատ վիճակ կամ մարմնի օրգանների կորզում»:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդկանց թրաֆիքինգի առարկա են դառնում հիմնականում կանայք և երեխաները, որոշ չափով էլ՝ տղամարդիկ<sup>2</sup>: Հանցագործության այս տեսակը գոյություն ունի նաև Հայաստանում:

Օգտագործելով երկրում տիրող ծանր տնտեսական վիճակը, գործազրկությունը, քաղաքացիների իրավական պաշտպանվածության ոչ կատարյալ լինելը՝ հանցավոր բիզնեսի կազմակերպիչները մարդկանց տեղափոխում են արտասահման աշխատանքի համար, որտեղ նրանք ենթարկվում են դաժան շահագործման՝ վաստակելով չնչին միջոցներ իրենց, և հսկայական միջոցներ՝ կազմակերպիչների համար: Կանայք

<sup>1</sup> ՄԱԿ-ի 2000թ. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայի, լրացուցիչ արձանագրություն «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, արգելման և պատժի մասին»

<sup>2</sup> Այս ոլորտում իրականացվող հետազոտությունների մեծ մասը կենտրոնացած են բացառապես կանանց և երեխաների թրաֆիքինգի վրա և Արևմտյան Եվրոպայում տղամարդկանց թրաֆիքինգի մասին կան բավականին սակավ տվյալներ: Բայց ԱՄՆ-ում հետազոտությունների փորձը, օրինակ, ցույց է տալիս, որ տղամարդկանց մեծ քանակ նույնպես վաճառվում է հարկադիր աշխատանքի համար. Amy ON eill Richard, International Trafficking in Women to the United States: A Contemporary Manifestation of Slavery and Organized Crime, 1999, [www.cia.gov/csi/monograph/women/trafficking.pdf](http://www.cia.gov/csi/monograph/women/trafficking.pdf)

հիմնականում ներգրավվում են օրինական և անօրինական սեքս բիզնեսի մեջ, տղամարդիկ շահագործվում են շինարարությունում, տնկադաշտերում (պլանտացիաներում), գործարաններում: Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) Հայաստանյան գրասենյակի 2001թ հետազոտությունների համաձայն, հարցմանը ենթարկված անօրինական միգրանտներից 32,6%-ը մեկնել են Թուրքիա, 29,5%-ը՝ Արաբական Միացյալ Էմիրություններ, 4,5%-ը՝ Հունաստան: Արտասահման մեկնելու պատճառների թվում հարցվողների 76,2%-ը նշել են աշխատանք փնտրելը, 18,6%-ը սեքս ծառայությունների մատուցումը, մնացածը՝ բիզնեսը և ամուսնությունը:

Վիզային ռեժիմի պարզեցվածությունը և նշանակակետ երկիր մուտք գործելու ենթադրվող հեշտությունը գրավում են ապագա միգրանտներին: Սակայն հետագայում, տեղում, կեցությունը արտերկրում շատերի համար վերածվում է անլուծելի պրոբլեմի, քանի որ միայն ժամանելուց հետո է պարզ դառնում իրական դրությունը՝ դաժան շահագործում, մարդկային արժանապատվության նսեմացում, հաճախ իրենց կամքից անկախ օրենքների խախտում: Նշանակակետ երկրի լեզվի, օրենքների և սովորույթների չհմացությունը, անձանոթ միջավայրը, գործատուից բարոյական, նյութական, հաճախ և ֆիզիկական կախվածությունը, առանց օրինական ձևակերպված փաստաթղթերի երկրում գտնվելը, ոստիկանության հանդեպ վախը՝ գործատուների կողմից օգտագործվում են անօրինական միգրանտների դաժան շահագործման համար: Նրանցից շատերի համար հայրենիք վերադառնալը կապված է բազմաթիվ դժվարությունների հետ՝ գործատուներից պարտքի կախվածության մեջ գտնվելը, ճանապարհային ծախսերի համար գումարի բացակայությունը, ժամկետանց վիզաները, իրավապահ մարմինների կողմից պատժի ենթարկվելը և հարազատների առջև ամոթի զգացումը, կազմակերպիչ-կավատների կողմից հնարավոր վրեժի ահը:

Անօրինական միգրանտներից շատերը վտարվում են վիզային ռեժիմը խախտելու, մարմնավաճառությամբ զբաղվելու կամ երկրի այլ օրենքները խախտելու համար: Ի վերջո, քաղաքացիության երկիր են վերադառնում բարոյապես կոտրված, ֆիզիկապես հիվանդ մարդիկ:

Աշխատանքային միգրացիայի և թրաֆիքինգի մասին հրապարակված նյութերը վկայում են, որ Հարավային Կովկասից մարդկանց հոսքերը ուղղվում են սահմանակից Թուրքիա՝ որպես տնտեսապես առավել բարենպաստ երկիր: Անօրինական աշխատանքային միգրացիայի և թրաֆիքինգի մասշտաբների մասին կարելի է դատել ՄՄԿ Թուրքիայի գրասենյակի 2003թ. զեկույցից, որտեղ վիճակագրական տվյալներ են բերվում Թուրքիայում գտնվող անօրինական միգրանտների քանակի մասին: Տարեկան միայն Վրաստանից և Ադրբեջանից ժամանում է 300 հազ. – 350 հազ. հոգի: Թուրքիայում անօրինական միգրանտների քանակը 1995-2002թթ. ընթացքում կազմել է 6 352՝

Ադրբեջանից և 8 113՝ Վրաստանից. 1996-2001թթ. ընթացքում վտարված Վրաստանի քաղաքացիների քանակը կազմել է 11 670, իսկ Ադրբեջանից՝ 8 206: Սակայն զեկույցում չի հիշատակվում Հայաստանից ժամանած անօրինական միգրանտների, առավել ևս՝ թրաֆիքինգի ենթարկված ՀՀ քաղաքացիների մասին: Հայտնի է, որ Սարվիի սահմանային կետով օրական մինչև 1000 հոգի անցնում են վրաց-թուրքական սահմանը, որոնցից 30-40-ը Հայաստանի քաղաքացիներ են: ԱՄՆ Պետ. Գեպարտամենտի՝ թրաֆիքինգի մասին 2003թ. զեկույցում Թուրքիան մատնանշվում է որպես նշանակակետ երկիր Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրների, ներառյալ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի և այլ երկրների թրաֆիքինգի զոհերի համար<sup>3</sup>: Ինչպես պարզվեց, Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը խոչընդոտ չի հանդիսանում Հայաստանից Թուրքիա ուղղվող միգրացիոն հոսքերի համար, իսկ Թուրքիայի «բաց դռների» քաղաքականությունը և վիզային ռեժիմի մատչելիությունը նպաստում են այդ հոսքերի ակտիվությանը:

### **Անօրինական միգրացիայի խնդրի հետազոտությունը Հարավային Կովկասում**

Թրաֆիքինգի և անօրինական միգրացիայի խնդրի վերաբերյալ հետազոտությունները Հայաստանում անցկացվում են 2000թ.-ից: Այսպես, «Գործարար կին» հասարակական կազմակերպությունը իրականացրել է անօրինական միգրացիայի խնդրով սոցիոլոգիական հետազոտություն կանանց շրջանում: Հարցմանը մասնակցել էին Հայաստան վերադարձած 300 կին անօրինական միգրանտներ: Ստացված տվյալները վկայում են, որ կանանց համար աշխատանքի նպատակով առավել հաճախ ելքի երկիր է հանդիսանում Թուրքիան: Այդ են նշել հարցվողների 14,2%-ը<sup>4</sup>: Նույն թվականին «Հույս և օգնություն» հասարակական կազմակերպությունը, «Մարմնավաճառ միգրանտների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում» ծրագիրը իրականացնելիս, պարզել է, որ ՀԿ դիմած կանանց 35%-ը մեկնել է արտասահման՝ մարմնավաճառությամբ զբաղվելու համար: Նրանց գրեթե կեսը մեկնել է Արաբական Միացյալ Էմիրություններ, 17%-ը՝ Թուրքիա, մնացածը՝ այլ երկրներ՝ Հունաստան, Ռուսաստան, Լեհաստան<sup>5</sup>: 2001թ. ՄՄԿ Հայաստանի գրասենյակի «Կանանց և երեխաների թրաֆիքինգ» զեկույցում հարցվող 43

<sup>3</sup> Trafficking in persons report <http://www.state.gov/g/tip/rls/tiprpt/2004/33192/htm>.

<sup>4</sup> «Կանանց անօրինական միգրացիան և արտագաղթի թաքնված էությունը» /սոցիոլոգիական հետազոտություն, Երևան 2000թ./

<sup>5</sup> «ՄԾՓՀ/ՄԻԱՎ-ի կանխարգելումը միգրանտ մարմնավաճառների շրջանում» եզրափակիչ հաշվետվություն, «Հույս և օգնություն» ՀԿ, 2000թ., Երևան

կանանցից 61,4%-ը Թուրքիայում ենթարկվել են սեռական շահագործման<sup>6</sup>: 2002թ. «Հագարաշեն» ազգագրական հետազոտությունների հայկական կենտրոնը հրապարակել է «Մարմնավաճառություն և երկրաշարժի գոտու քաղաքներում մարդկանց անօրինական տեղափոխում» հետազոտության արդյունքները, որտեղ տվյալներ են բերվել մարմնավաճառությամբ զբաղվելու նպատակով կանանց (այդ թվում նաև անչափահաս) Թուրքիա տեղափոխման մասին<sup>7</sup>: ԱՄՆ կառավարության 2002-2004 ամենամյա զեկույցներում Թուրքիան նշվում է որպես Հայաստանից թրաֆիքինգի գոհերի նշանակակետ երկրներից մեկը<sup>8</sup>: ՀՀ Ոստակաճանության և Գլխավոր Դատախազության տվյալների համաձայն Թուրքիան և Արաբական Միացյալ Էմիրությունները այն երկրներն են, որտեղ հայ կանայք ներգրավված են սեքս բիզնեսի մեջ և հաճախ դառնում են թրաֆիքինգի գոհեր<sup>9</sup>:

Նման իրավիճակ է նաև Վրաստանում: «Կովկասյան կանանց ցանց» ՀԿ-ի հետազոտությունում նշվում է, որ Վրաստանի քաղաքացիների համար Թուրքիան առաջին տեղն է զբաղեցնում նշանակակետ երկրների շրջանում:

2003թ. «Մարդու ներդաշնակ զարգացման աջակցության ընկերություն» ՀԿ-ն (Վրաստան) հրապարակել է «Անօրինական միգրացիայի կանխարգելումը և մարդկանց առևտուրը» նյութերի ժողովածուն, որտեղ Թուրքիան ներկայացվում է որպես թրաֆիքինգի հիմնական նշանակակետ երկրներից մեկը:

Հայտնի են Մերձավոր Արևելքում ադրբեջանցի կանանց անօրինական միգրացիայի և, հետագայում, սեռական շահագործման հարյուրավոր դեպքեր: Ինչպես վերը ներկայացված է, տարբեր տարիներին Հարավային Կովկասի երկրներում անցկացված հետազոտությունները փաստում են, որ մարդկանց թրաֆիքինգի խնդիրը արդիական է տարածաշրջանի բոլոր երկրների համար, իսկ Թուրքիան առավել գրավիչ է մարդավաճառների համար որպես նշանակակետ երկիր:

Վերը նշված տեղեկատվությունը դարձավ նախապայման անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի երևույթի հատուկ հետազոտության համար, հասկանալու, թե ինչ է կատարվում Հայաստանից/Վրաստանից Թուրքիա ժամանման ճանապարհին, անմիջականորեն Թուրքիայի տարածքում և տարանցիկ երկիր Վրաստանում: Բացի այդ,

<sup>6</sup> «Կանանց և երեխաների անօրինական փոխադրումը ՀՀ-ից» հետազոտություն, ՄՄԿ Հայաստան, 2001թ., Երևան

<sup>7</sup> «Մարմնավաճառությունը և մարդկանց անօրինական տեղափոխումը աղետի գոտու քաղաքներում» եզրափակիչ հաշվետվություն, 2002թ., Երևան

<sup>8</sup> <http://www.state.gov/g/tip/rls/tiprpt/2004/33192/htm>

<sup>9</sup> <http://www.stopvaw.org> և Անդրկովկասյան տարածաշրջանային հիմնադիր կոնֆերանս «Բռնությունը կանանց նկատմամբ Անդրկովկասյան տարածաշրջանում», զեկույցների ժողովածու /Երևան 2000թ., էջ 164, 198, 211/

ավելի վաղ կատարված բոլոր հետազոտությունները անց էին կացվել արդեն իսկ ծագման երկիր վերադարձած միգրանտների շրջանում:

## **Թրաֆիքինգ: Իրավիճակը Հայաստանում**

Թրաֆիքինգի խնդիրը Հայաստանում պետական մակարդակով արդիական դարձավ սկսած 2002թ., երբ նույն թվականի հունիսին ԱՄՆ Պետ. Դեպարտամենտի ամենամյա զեկույցում Հայաստանը դասվեց 3-րդ խմբի այն երկրների շարքին, որտեղից իրականացվում է մարդկանց թրաֆիքինգ, սակայն միջոցներ չեն ձեռնարկվում այդ երևույթի դեմ պայքարելու համար: Նման խմբում գտնվելը ենթադրում էր Հայաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառում: Հայաստանին ժամանակ տրամադրվեց իրավիճակը շտկելու համար: Չեկույցում Հայաստանը ներկայացված էր որպես թրաֆիքինգի գոհերի համար ծագման և տարանցիկ երկիր: Հայաստանի քաղաքացիների համար հիմնականում նշանակակետ երկրներ են Թուրքիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, ինչպես նաև Ռուսաստանը, Հունաստանը: Վրաստանը օգտագործվում է որպես տարանցիկ երկիր Հայաստանից և Ադրբեջանից անօրինական միգրանտների տեղափոխման համար:

ՀՀ Կառավարությունը սկսեց մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ակտիվ աշխատանք

- Ստեղծվեց թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպման Միջգերատեսչական հանձնաժողով (ՀՀ Վարչապետի Որոշում 551-Ա, 14.10.2002թ.),
- Ընդունվեց «Հայաստանից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի դեմ պայքարի՝ 2004-2006թթ. գործողությունների ազգային ծրագիր»,
- Ընդունվեց ՀՀ նոր Զրեական Օրենսգիրք, որը ուժի մեջ մտավ 01.08.2003թ.: Այս օրենսգրքում տեղ գտավ հոդված 132-ը («Մարդկանց առևտուր»),
- Ընդունվեց Կոռուպցիայի դեմ պայքարի ազգային ծրագիր (ՀՀ Նախագահի հրամանագիր 01.12.2003թ.)

2003թ. հրապարարակված ԱՄՆ Պետ. Դեպարտամենտի ամենամյա զեկույցում Հայաստանը տեղափոխվեց երկրների 2-րդ խումբ: Դրան նպաստեցին ՀՀ Կառավարության կողմից ձեռնարկված ակտիվ քայլերը: Այսպես, 2003թ. ՀՀ

Ոստիկանության կողմից 2 քրեական գործ է հարուցվել ՀՀ Քրեական Օրենսգրքի 132 հոդվածով և 17 քրեական գործ՝ ՀՀ Քրեական Օրենսգրքի 262 հոդվածով, որոնցից 9-ը վերաբերվում էին արտերկրում սեռական շահագործմանը: Որպես դրական արդյունք, զեկույցում նշվում է Ոստիկանության և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը, որի արդյունքում աճեց հարուցված և հետաքննվող գործերի քանակը<sup>10</sup>:

2004թ. հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Ոստիկանության տեղեկատվական կենտրոնի տվյալների համաձայն Ոստիկանության հանրապետական քննչական մարմինների և ՀՀ Դատախազության կողմից կանանց թրաֆիքինգի հետ կապված 24 քրեական գործ է հետաքննվել, այդ թվում նաև 1 գործ՝ ՀՀ Քրեական Օրենսգրքի 132 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 1 գործ ՀՀ Քրեական Օրենսգրքի 261 հոդվածի 1-ին մասով և 22 գործ՝ ՀՀ Քրեական Օրենսգրքի 262 հոդվածով:

Թրաֆիքինգի կանխարգելման տարբեր ուղղություններով զբաղվում են ՀՀ Արտաքին Գործերի Նախարարությունը, ՀՀ Ոստիկանությունը, ՀՀ Դատախազությունը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը և Սահմանային գերատեսչությունը, Միգրացիայի և Փախստականների հարցերով վարչությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, տեղական հասարակական կազմակերպություններ: Միջազգային կազմակերպությունները (ՄՄԿ, ՄԱԿ-ի Չարգացման Ծրագիր, ԵԱՀԿ, UMCOR) աջակցություն են ցույց տալիս նրանց: Այս կազմակերպությունների համագործակցությունը համակարգվում է թրաֆիքինգի դեմ պայքարի Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

ՀՀ Կառավարության կողմից միջոցներ են ձեռնարկվել փոխադարձ իրավական օգնության մասին երկկողմանի համաձայնագրեր կնքելու նախկին ՍՍՀ միության երկրների, Բուլղարիայի, Ռումինիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների հետ<sup>11</sup>: Ձեռնարկվել են կոռուպցիայի դեմ պայքարի միջոցներ, քանի որ մարդկանց թրաֆիքինգը անհնար է առանց պետական պաշտոնյաների և իրավապահ մարմինների կոռուպցիայի: ՀՀ Նախագահի 01.12.03 թ. հրամանագրով կոռուպցիայի դեմ պայքարի ազգային ծրագիր է ընդունվել, իսկ 2004թ. ՀՀ Գլխավոր Դատախազության համակարգում ստեղծվել է կոռուպցիայի դեմ պայքարի բաժին:

<sup>10</sup> Այդպիսի համագործակցության օրինակ է Ոստիկանության կողմից 8 օտարերկրացի կանանց «Հույս և օգնություն» ՀԿ թրաֆիքինգի զոհերի համար ապաստարան ուղղորդումը: Դրանք Ուզբեկստանից Հայաստան սեռական շահագործման նպատակով կանանց թրաֆիքինգի դեպքեր էին:

<sup>11</sup> Trafficking in persons report <http://www.state.gov/g/tip/rls/tiprpt/2004/33192/htm>,



## Անօրինական միգրացիան և թրաֆիքինգը Հայաստանից Թուրքիա

Հայտնի է, որ Հայաստանը Թուրքիայի հետ չունի դիվանագիտական հարաբերություններ, սակայն մեր երկրի քաղաքացիները այցելում են Թուրքիա: Հայաստանից միգրանտների հոսքերի տեղաշարժը դեպի Թուրքիա տեղի է ունենում տարանցիկ երկրի տարածքով, այդ նպատակով օգտագործվում է Վրաստանի տարածքը: Թուրքիայի սահմանը հատելը ոչ մի դժվարություն չի ներկայացնում: Մուտքի վիզան ձեռք է բերվում անմիջապես սահմանի վրա: Վիզա չի տրամադրվում այն անձանց, որոնք նախկինում վտարվել են Թուրքիայից: Տուրիստական վիզայի ժամետը 30 օր է, և այն չի ընձեռում աշխատանքի իրավունք: Վիզայի ժամկետը լրանալուն պես այն կարելի է երկարացնել համապատասխան վճարի դիմաց: Վիզայի ժամկետի խախտումը ենթադրում է վտարում՝ համապատասխան տուգանքի վճարումով և մինչև 5 տարի ժամկետով Թուրքիա մուտք գործելու արգելքով:

Դեպի ստրկություն ճանապարհը սկսվում է այն պահից, երբ աշխատանք գտնելու հույսով մարդիկ հավատում են գրեթե անծանոթ անձանց պատմություններին, աշխատանքի տեղավորման կասկածելի գործակալություններին, տուրիստական գործակալություններին կամ «այնտեղից» եկած «քարյացական» ծանոթներին: Ամենից հաճախ հենց նրանք են հավաքագրողներն ու միջնորդները՝ հանցավոր խմբերի առաջին օղակը: Հավաքագրող-միջնորդները կապված են հանցավոր խմբերի հետ, որոնք իրականացնում են կանանց և երեխաների փոխադրում և վաճառք սեռական շահագործման, իսկ տղամարդկանց դեպքում՝ աշխատանքային շահագործման նպատակով: Ծանր, ցածրորակ և քիչ վարձատրվող աշխատանքը իրականացվում է ընդհատակյա արհեստանոցներում, շինարարություններում, կաղնու պլանտացիաներում: Տղամարդկանց հիմնականում տեղափոխում են խմբերով և հազվադեպ՝ մենակ:

Մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչների համար լավագույն թիրախ են ամուսնալուծված կամ մարմնավաճառությամբ զբաղվող կանայք, անչափահասները:

Թրաֆիքինգի մեջ ներգրավումը տեղի է ունենում մի քանի փուլերով: Սկզբում հավաքագրող-միջնորդը կապ է ստեղծում անձանց հետ, շահում է նրանց վստահությունը, հետո լավ վարձատրվող պարուհու, սպասուհու, տնաշխատի աշխատանք է առաջարկում արտասահմանում: Համոզիչ լինելու համար՝ օրինակ է բերվում ծանոթը, որը մի քանի ամսում «տան փող է աշխատել» կամ վճարել է իր բոլոր խոշոր պարտքերը: Հետո նրան հայտնում են, որ բոլոր ճանապարհային ծախսերը կարող է փոխհատուցել տեղում՝ վաստակած գումարից: Որպես հատուկ վերաբերմունքի նշան առաջարկվում է գնել հագուստ, այցելել վարսահարդարի, ատամնաբույժի՝ ներկայանալի տեսք ունենալու համար: Հետո կնոջը ծանոթացնում են կավատի հետ, որը արդեն իսկ կազմակերպում է տեղափոխությունը և աշխատանքը նշանակակետ երկրում: Հաճախ կանայք տեղափոխվում են փոքր խմբերով (1-3 հոգի) ուղեկցողների հետ, երբեմն նաև մենակ:

Թուրքիայում նրանց դիմավորում է կավատը կամ նրա օգնականները: Անձնագրերը առգրավվում են ժամանելուն պես և միշտ գտնվում են կավատի մոտ: Մարմնավաճառության շահագործման նպատակով տեղափոխված կանայք հիմնականում բնակվում են ծովափնյա Տրապիզոն, Անթալիա, Մեոսին քաղաքների փոքր հյուրանոցներում: Ենթադրվում է, որ այնտեղ են գտնվում 500-1000 հայ կանայք<sup>12</sup>: Ինչպես վկայում են հենց իրենք՝ տուժյալ կանայք, անձնագիրը և ամբողջ վաստակած գումարը խլում է կավատը, իսկ հայրենիք վերադարձը հաճախ տեղի է ունենում վտարման արդյունքում: Ի վերջո, կանայք վերադառնում են դատարկ ձեռքերով, առանց գումարի և անձնագրի:

## **Հանդիպումներ. խնդիրներ, դժվարություններ և առաջարկություններ**

Հայաստանի և Վրաստանի հասարակական կազմակերպությունները համատեղ հետազոտություն են անցկացրել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի քաղաքացիների՝ դեպի Թուրքիա անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի խնդրի հետազոտության նպատակով: Հետազոտությունը անցկացվեց 2 փուլով: Առաջին փուլում հետազոտվեց իրավիճակը վրաց-թուրքական սահմանի վրա: Հարցազրույցներ անցկացվեցին սահմանապահների և Թուրքիայից վտարված Հայաստանի և Ադրբեջանի քաղաքացիների հետ:

Ծրագրի երկրորդ փուլում իրականացվեց «Հույս և օգնություն» ՀԿ-ի (Հայաստան), ՄՄԿ-ի, ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (Հայաստան), «Մարդու ներդաշնակ զարգացման աջակցության ընկերություն» ՀԿ-ի (Վրաստան) և Վրաստանի ՆԳՆ փորձագետների համատեղ այց Թուրքիա: Ուղևորության ընթացքում կայացան հանդիպումներ և հարցազրույցներ Թուրքիայի ոստիկանության, Թուրքիայում Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Վրաստանի դիվանագիտական առաքելությունների, Թուրքիայի ՄՄԿ-ի, տեղական հասարակական կազմակերպությունների, հայկական և վրացական համայնքների ներկայացուցիչների և աշխատանքի նպատակով Թուրքիա մեկնած ՀՀ քաղաքացիների հետ:

### ***Մարփի***

Թուրքիայի հետ վրացական սահմանում աշխատելու նպատակն էր՝ տեղեկություններ ստանալ տարբեր երկրների քաղաքացիների՝ Թուրքիայից վտարման մասին, ծանոթանալ սահմանային ծառայության աշխատակիցների գործողություններին

---

<sup>12</sup> Ստամբուլի հայալեզու մամուլի լրագրողների տրամադրած տեղեկություններից

/առավելապես այն դեպքերում, երբ կասկած է հարուցվում մարդկանց թրաֆիքինգի դեպքի վերաբերյալ/, ծանոթանալ վտարված անձանց հետ աշխատանքի նրանց մեթոդների հետ, թրաֆիքինգի գոհերի նույնականացման հնարավորության և թրաֆիքինգի խնդրի վերաբերյալ իրազեկվածության մակարդակին, ինչպես նաև հենց իրենց՝ վտարված անձանց և անօրինական միգրանտների հետ հարցազրույցներ արձանագրել:

Սարփին փոքր ավան է, որը գտնվում է Վրաստանի և Թուրքիայի սահմանի վրա: Այնտեղ է գտնվում սահմանային հսկիչ-անցագրային կետը և մաքսային զննման կետը: Այս սահմանային կետով ցամաքային ճանապարհով Թուրքիա են անցնում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի քաղաքացիներ: Հուլիսի 5-11-ը Բաթումում և Սարփիում տեղի ունեցան հանդիպումներ սահմանապահների, Թուրքիայի հետ սահմանն անցնող և Թուրքիայից վտարված Հայաստանի և Վրաստանի քաղաքացիների հետ:

Փորձագետների մեր խումբը անմիջապես հսկիչ-անցագրային կետում աշխատելու հնարավորություն ունեցավ, Վրաստանի սահմանային անվտանգության վարչության թույլտվությամբ: Աշխատանքը իրականացվում էր ցերեկը, եթե սահմանապահներից տեղեկություն էինք ստանում մեր երկրի քաղաքացիների սահմանն անցնելու մասին: Բայց մեր աշխատանքի ընթացքում այդպիսի դեպքեր քիչ եղան, այդ իսկ պատճառով հիմնականում աշխատում էինք գիշերը, երբ սահմանն անցնողների քանակը փոքր-ինչ ավելանում էր: Սովորաբար գիշերվա ընթացքում հսկիչ-անցագրային կետով անցնում էին 4-6 ավտոբուս: Ուղևորների քանակը յուրաքանչյուր ավտոբուսում շատ չէր, բայց Թուրքիա մեկնողներն ավելի քիչ էին, քան Վրաստան ժամանողները: Ավտոբուսները մեկնում էին կամ Թուրքիա, կամ տարանցումով՝ Հունաստան և Իսպանիա: Հայաստանի քաղաքացիները սահմանն անցնում են թուրքական տուրիստական ավտոբուսներով կամ տարանցումով՝ վրացական ավտոբուսներով:

Համաձայն Սարփի հսկիչ-անցագրային կետի ղեկավարի մեզ տրամադրած տվյալների, այդ կետով ամեն օր անցնում են մոտավորապես 800-1000 հոգի: Դրանք հիմնականում Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի քաղաքացիներ են: Թուրքիայի հետ Վրաստանի սահմանը կարելի է անցնել նաև Վալե/Պոսով հսկիչ-անցագրային կետով: Հայաստանի քաղաքացիները ավելի հաճախ հենց այդ կետով են անցնում սահմանը:

Մեզ տվյալներ տրամադրեցին վերջին տարիների ընթացքում Սարփի հսկիչ-անցագրային կետով Թուրքիայից վտարված անձանց քանակի մասին (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Սարփի հսկիչ-անցագրային կետով վտարված անձանց քանակը

Երկիր	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004 /6 ամիս/
Վրաստան	784	1302	431	571	178
Ադրբեջան	117	256	48	38	10
Հայաստան	64	78	22	42	8
Ռուսաստան	69	10	1	2	1
Ուկրաինա	93	34	14	13	0
Մոլդովա	54	13	5	14	3
Ուզբեկստան	33	18	0	2	4
Ղազախստան	30	2	0	0	0
Տաջիկստան	2	0	0	1	0
Ընդամենը	1213	1712	521	683	204

Աղյուսակում ներկայացված տվյալները ընդհանուր առմամբ վկայում են վտարված անձանց քանակի նվազեցման մասին, և մասնավորապես Ռուսաստանի և Ուկրաինայի քաղաքացիների հաշվին, որը պայմանավորված է նրանով, որ 2000թ. Վրաստանը հրաժարվել է ընդունել ոչ իր տարածքից Թուրքիա մուտք գործած քաղաքացիներին: Նախկինում Սարփիով վտարում էին ԱՊՀ բոլոր երկրների քաղաքացիներին: Ըստ միջազգային կանոնների, մարդուն վտարում են այն երկիրը, որտեղից, որ նա մուտք է գործել և այն հսկիչ-անցագրային կետով, որտեղով, որ նա անցել է սահմանը:

Բայց աղյուսակից հնարավոր չէ պարզել, թե վտարված անձանցից քանիսն են տղամարդիկ և քանիսը՝ կանայք և ինչ իրավախախտումների համար են նրանց վտարել:

Մինչև 1999թ. Թուրքիայից վտարման դեպքում անձնագրերում հատուկ կնիք էին դնում, 1999թ.-ից հետո անձնագրում դրվում էին պայմանական նշաններ՝ խաչեր, թվեր (1 կամ 4 և այլն): Թուրքական Մաքսային ոստիկանության հետ հանդիպումների ժամանակ վրացական կողմը առաջարկել էր դնել վտարման կնիք և տրամադրել վտարման պատճառների մասին տեղեկություններ, բայց այս առաջարկությունները չընդունվեցին և Թուրքիայից սկսեցին վտարել առանց անձնագրերում այդ կնիքի կամ որևէ պայմանական նշանների և բացատրությունների:

Սահմանապահները բնագորաբար կամ անուղղակի նշանների միջոցով բացահայտում են վտարվածներին: Անձնագրերը ստուգելու ընթացքում ի հայտ էին գալիս հետևյալ փաստերը. եթե աղջիկն ունի 15-30 օրվա վիզա, բայց վերադառնում է 4-6 օրից, նշանակում է նա վտարվել է:

Պաշտոնապես վտարումը պետք է կատարվի դատարանի վճռով և նստիկանությունում հատուկ ձևի՝ “Notification Form in cases of arrestation, detention custody or death of foreign persons with respect to articles 36 and 37 of 1963 Vienna Convention on Consular Affairs” (այսուհետ՝ հատուկ ձև) արձանագրման հիման վրա, որը ֆաքսով ուղարկվում է այն երկրի հյուպատոսարանը, որի քաղաքացին վտարվում է:

Վտարումը ենթադրում է մինչև 5 տարի ժամկետով Թուրքիա մուտքի արգելք, և այդ իսկ պատճառով վտարված անձինք կրկնակի մուտքի համար շրջանցող եղանակներ են փնտրում և կեղծում են փաստաթղթերը: Ըստ վիճակագրական տվյալների, վտարվածների քանակն ավելին է, քան իրականում, քանի որ փաստաթղթերում կնիքի բացակայությունը հնարավորություն է տալիս ռիսկի խմբի միևնույն անձանց մի քանի անգամ անցնել սահմանը:

Հայտնի են փաստաթղթերը կեղծելու մի քանի միջոցներ

1. Նկարների վերաստնծում
2. Այլ անձանց անձնագրերի ձեռքբերում (վերցվում են հարազատների կամ ծանոթների անձնագրերը)
3. Նոր անձնագրի ձեռք բերում (հայտնում են իրենց անձնագրի կորստի մասին և ստանում նորը)

Սահմանապահների տվյալների համաձայն, Թուրքիայում սեքս ծառայություն մատուցող օտարերկրացի կանանց 60% ունեն կեղծ փաստաթղթեր, քանի որ նրանք բազմիցս վտարվել են:

Գոյություն ունի նաև, այսպես կոչված, ոչ պաշտոնական վտարում (առանց դատարանի որոշման և կնիքի անձնագրման), որը շատ շահավետ է: Այդ ձևով մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչները, նստիկանությունը և մաքսատուները ահռելի գումարներ են աշխատում հետևյալ ճանապարհով. մարդկանց թրաֆիքինգով զբաղվող ազգությամբ վրացի կազմակերպիչները աղջիկներին անց են կացնում սահմանի այն կողմը, վաճառում են կավատին և ստանում են գումարը, հետո նստիկանությունը ստուգայցերի ժամանակ հայտնաբերում է նրանց և վտարում՝ առանց անձնագրի մեջ կնիք դնելու: Վրաստանի տարածքում հենց նույն անձինք կեղծում են աղջիկների անձնագրերը, և նրանք նորից վերադառնում են Թուրքիա, և այսպես շարունակ: Համակարգը լավ կազմակերպված է և գործում է անվրեպ:

Ըստ սահմանապահների դիտարկումների, սահմանն անցնում է աղջիկների մի քանի կատեգորիա

1. Չկազմակերպվածներ (մենակ), որոնք ինքնուրույն են աշխատում: Նրանց շուտ մաղում և վտարում են, այսպիսով ստիպում մտնել կազմակերպված շղթայի մեջ և աշխատել կավատների համար: Երկրում մնալու համար

նրանք ստիպված կավատների հետ կապ են փնտրում: Նրանց, ուղղակի կամ անուղղակի, հետևում են սահմանի երկու կողմերում էլ: Վտարվածները նորից մուտք են գործում երկիր, բայց արդեն կեղծ փաստաթղթերով:

## 2. Սկզբից եթե կավատի համար աշխատողներ:

Սահմանապահները հայտնեցին կեղծ փաստաթղթերի բացահայտման հետ կապված դժվարությունների մասին: Անձնագրի կեղծ լինելու մասին կասկած առաջանալու դեպքում, անձի նույնականացման համար, նրանք իրավունք ունեն Վրաստանի քաղաքացուն պահել սահմանի վրա միայն երեք ժամ: Այդ ընթացքում սահմանապահները պետք է հասցնեն հարցում ուղարկել բնակության վայրի անձնագրային սեղան (սովորաբար այնտեղ, որտեղ և կեղծվել է անձնագիրը), որտեղից հսկիչ-անցագրային կետը անձնագրի իսկությունը հաստատող պատասխան է ստանում: Այդպիսի դեպքերում, չնայած փաստաթղթի կեղծ լինելու ակնհայտությանը, քրեական գործ հարուցելու համար հիմքերը բավարար չեն:

Սահմանապահները մեզ պատմեցին փաստաթղթերը կեղծելու վերաբերյալ դեպքերի, ինչպես նաև որպես թրաֆիքինգի զոհ անուղղակի հատկանիշներով նույնականացված դեպքերի մասին:

Այսպես, 2002թ.-ին կավատը Կախեթիից Թուրքիա է տեղափոխել մի անչափահաս աղջկա՝ մարմնավաճառությամբ զբաղվելու համար: Նրա անձնագիրը վնասված չէր, բայց աղջկան վտարել են մինչև վիզայի ժամկետը լրանալը: Դա բացահայտվեց սահմանի վրա, և քանի որ նա ընդամենը 14 տարեկան էր, նրան տեղափոխեցին Բաթումի հատուկ նշանակության մեկուսարան, իսկ դատախազությունում քրեական գործ հարուցեցին, որը փոխանցվեց ըստ բնակության վայրի, սակայն մի տարի անց այդ աղջիկը նոր անձնագրով նորից ուղևորվում էր Թուրքիա:

2003թ.-ի ընթացքում Վրաստանի Ցագերի շրջանից կեղծ փաստաթղթերով 12 քաղաքացիներ են բացահայտվել: Այս դեպքերի հիման վրա քրեական գործեր են հարուցվել:

Սահմանի վրա մեզ հաջողվեց հանդիպել և հարցազրույց անցկացնել Թուրքիայից Սարփի ժամանած Հայաստանի մի քանի քաղաքացիների հետ:

**Հարցազրույց Անուշի հետ:** Նա հայտնվել էր Սարփիում վիզայի ժամկետը երկարացնելու նպատակով: Անուշը Գյումրիից է, մի քանի տարի աշխատել է Ստամբուլում որպես հավաքարար: Աշխատավարձը մեծ չէր, բայց լիովին հնարավոր էր որոշ գումար կուտակել՝ Գյումրիում բնակարան գնելու համար: Մտադիր էր Հայաստան վերադառնալ մեկ տարի հետո: Ունի երկու երեխա, որոնք բնակվում են տատիկի հետ Գյումրիում: Նրա քույրը՝ Ս.-ն, Ստամբուլում զբաղվում է բնակարաններ մաքրելով: Երկուսն էլ հետևում են վիզային ռեժիմի կանոններին, ժամանակին երկարացնում են

ժամկետը՝ վտարումից խուսափելու համար և կվերադառնան հայրենիք ծրագրված ժամկետում:

**Հարցազրույց Ինգայի հետ:** Նա Հայաստանի քաղաքացի է, ապրում է Թբիլիսիում: Ունի երկու երեխա, ամուսնալուծված է: Հայաստանից ապրանքներ է բերում Թուրքիա, զբաղվում է մեծածախ առևտրով, ստանում գումարը, այնտեղից ուրիշ ապրանք է ձեռք բերում, և վաճառքի տանում Վրաստան: Այս առևտրական ուղևորությունները նրա եկամտի աղբյուրն են և երեխաներին կերակրելու միակ միջոցը:

Ինգան ծանոթ է ավտոբուսների բոլոր վարորդների հետ, քանի որ երկար ժամանակ է զբաղվում իր բիզնեսով: Երբեմն վարորդները խնդրում են նրան ուղևորների խումբ հավաքել: Ինգան ասում է, որ ապրանք տեղափոխելու համար ավելի հեշտ է Վալեով անցնել, դա համեմատաբար նոր կետ է, այնտեղ ավելի հեշտ է մաքսատան հետ պայմանավորվել: Թուրքիա մեկնում են հիմնականում կանայք: Այդ ժամանակահատվածում 10-ից ոչ ավելի տղամարդկանց է հաղիպել: Ճանապարհին տեղի ունեցած խոսակցություններից գիտի, որ մեծամասամբ շահագործման զոհ են դառնում տղամարդիկ, իսկ կանայք, եթե անգամ աշխատում են, ապա հիմնականում մարմնավաճառներ են: Ըստ Ինգայի, այդ կանայք գիտեն ուր և ինչու են գնում: Հիմա աշխատանքի համար Թուրքիա մեկնող մեծ հոսքեր չկան, քանի որ հիմնականում ծանր և ցածր վարձատրվող աշխատանք են առաջարկում: Շատերին խաբում են և չեն վճարում աշխատանքի համար:

**Հարցազրույց Պիկրիայի հետ:** Վրացուհի Քութախիից, ունի երկքաղաքացիություն - Վրաստանի և Թուրքիայի: Դա միանգամայն պատահական պարզվեց վրացական սահմանապահի հետ նրա լեզվակռվի ժամանակ: Նա լացում էր, նյարդայնանում: «Կիմլիկ»-ը՝ կացության կարգավիճակը, ներկայացնելու պահանջին նա պատասխանում էր, որ չունի այն: Բայց «Կիմլիկ»-ի համարը գրառված էր նրա վրացական անձնագրում: Երկար քաշքշուկներից հետո նա, չգիտես ինչու, սահմանապահին շարտեց թուրքական անձնագիրը: Երկքաղաքացիությունը անօրինական է Վրաստանում, այդ պատճառով նա օրենքի համաձայն վճարեց Վրաստան մուտքի վիզայի համար, իսկ վրացական անձնագիրը բռնագրավվեց: Պիկրիան մեզ պատմեց, որ ամուսնացած է թուրքի հետ, որը Տրապիզոնում հյուրանոց ունի, որտեղ կավատներ են ապրում, հիմնականում աղբբեջանցիներ, որոնք ստիպում են աղջիկներին մարմնավաճառությամբ զբաղվել:

Սահմանապահները մեզ պատմություններ պատմեցին, որոնք հենց իրենք էին լսել կամ դրանց ականատես էին եղել:

Մոտավորապես մեկուկես ամիս առաջ թուրքական կողմում մի կին աղմուկ էր բարձրացրել, քանի որ ոստիկանը նրանից փող էր պահանջում: Նա համոզում էր ոստիկանին իրեն թույլատրել անցնել վրացական կողմը, որպեսզի ավտոբուսից փողը

վերցնի, որն այդ ընթացքում անցել էր վրացական սահմանը, և հետո վերադառնալ թուրքական մաքսատուն: Բայց թուրք ոստիկանը չէր համաձայնվում: Նա գոռում էր և թափահարում անձնագիրը (դա հայկական անձնագիր էր): Վրացական սահմանապահը ռուսերեն լեզվով խորհուրդ տվեց այդ կնոջը խլել անձնագիրը և վազել վրացական կողմը, ինչը և նա արեց: Վրացական սահմանապահները փակեցին դարպասները թուրքական ոստիկանի դիմաց, որը հայիոյում էր և պահանջում էտ վերադարձնել փախստական կնոջը: Կինը դեռ երկար ժամանակ չէր կարողանում ուշքի գալ, դողում էր ամբողջ մարմնով: Նա պատմեց, որ ոստիկանությանը 350 դոլլար էր վճարել վիզային ռեժիմը խախտելու համար, իբր որպես տուգանք, բայց նրանք էլի էին պահանջում:

Դժբախտաբար այդ կնոջ տվյալները սահմանապահները չկարողացան տրամադրել ինձ, բայց նրանք հաստատ գիտեին, որ նա Երևանից է:

Նույնախի պատմություններ քաղաքացիների իրավունքների ոտնահարման և թուրքական մաքսային ոստիկանության կոռուպցիայի մասին իրենց համաքաղաքացիների վերաբերյալ գրի առան նաև վրացական փորձագետները:

Սահմանապահները կարծում են, որ իրենց աշխատանքի որակը զգալիորեն կլավանա, եթե ստեղծվի համակարգչային միասնական անձնագրային բազա, որից կկարողանային օգտվել ՆԳՆ և Սահմանային անվտանգության ծառայության աշխատակիցները<sup>13</sup>: Դա հնարավորություն կտա կարճ ժամանակում անցկացնել անձի նույնականացումը (նրան սահմանի վրա պահելու 3 ժամվա ընթացքում): Սահմանապահները անհրաժեշտ են համարում թրաֆիքինգի խնդրի, թրաֆիքինգի գոհերի նույնականացման մեթոդների, Վրաստանի՝ թրաֆիքինգին վերաբերող օրենսդրության մասին աշխատակազմի իրազեկության բարձրացումը: Իրենք իսկ առաջարկեցին սահմանն անցնող անձանց իրազեկությունը բարձրացնելու նպատակով՝ հսկիչ-անցագրային կետի տարածքում փակցնել մարդու իրավունքների, հարևան երկրի վիզային համակարգի վերաբերյալ տեղեկատվական նյութեր:

### Ամփոփում

Սարփի հսկիչ-անցագրային կետ այցելությունը և այդ տարածքում հետազոտության անցկացումը անհնար կլիներ առանց նախնական համաձայնության և Վրաստանի Սահմանային անվտանգության վարչության աջակցության:

Ինչպես պարզվեց, վտարված անձանց հետ շփվելու ժամանակը սահմանափակվում է նրանց հսկիչ-անցագրային կետում գտնվելու ժամանակով, քանի որ փաստաթղթերի ձևակերպումից հետո ավտոբուսները մեկնում են որոշված երթուղով:

---

<sup>13</sup> 15.11.2004թ., Արդարատության նախարարությունում գործում է Վրաստանի քաղաքացիների անձնագրային տվյալների միասնական բազա



Սահմանը միայնակ անցնողները նույնպես լքում են հսկիչ-անցագրային կետի տարածքը և երթուղային տաքսիներով կամ մասնավոր մեքենաներով ուղևորվում են Բաթում, որտեղ նրանց կարելի է գտնել ավտոկայանում կամ երկաթգծի կայարանում: Ավելի հաճախ վտարվածները սահմանն անցնում են գիշերը:

Կապ ստեղծելու համար, որպես «հիմնական տեղեկատու» անձ, կարող են ծառայել տաքսիստները, ավտոբուսների վարորդները, և հսկիչ-անցագրային կետի տարածքում գտնվող խանութների կամ սրճարանների աշխատակիցները:

### **Թուրքիայում**

Վրաստան, Բաթում և Սարփի ուղևորությունը բազմաթիվ հարցեր պարզաբանեց, բայց նաև նոր հարցեր ավելացրեց, որոնց պատասխանները մենք ստացանք Թուրքիայում, երկշաբաթյա ուղևորության ժամանակ, երբ այցելեցինք Ստամբուլ, Անկարա, Տրապիզոն: Հսկայական նախապատրաստական աշխատանք էր կատարվել պաշտոնական կառույցների՝ ՆԳՆ և ԱԳՆ, Հայաստանի քաղաքացիների շահերը Թուրքիայում ներկայացնող Ռուսաստանի հյուպատոսարանի, Վրաստանի հյուպատոսարանի, ԱՄՆ դեսպանության, ՄՄԿ-ի, տեղական ՀԿ-ների, հայ համայնքի, հայալեզու մամուլի, Թուրքիայում ժամանակավորապես բնակվող Հայաստանի քաղաքացիների (միգրանտների) ներկայացուցիչների հետ հանդիպումներ կազմակերպելու համար: Մեր վրացական գործընկերների, մասնավորապես ՆԳՆ Գլխավոր վարչության աշխատակից Գեորգի Կիկնաձեի շնորհիվ, որը համատեղությամբ նաև թուրքերենից թարգմանչի դեր էր տանում, ոստիկանության հետ հանդիպման նախնական պայմանավորվածություն էր ստեղծվել, իսկ «Մարդու ներդաշնակ զարգացման աջակցության ընկերություն» ՀԿ-ից մեր գործընկեր Ծովինար Նազարովան պայմանավորվածություն ուներ Վրաստանի հյուպատոսական ծառայությունների և մի քանի հասարակական կազմակերպությունների հետ: Մենք ապահովեցինք ԱՄՆ և Ռուսաստանի դեսպանությունների, ՄՄԿ և տեղական հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումների կազմակերպումը: Հայկական կողմից ուղևորությանը մասնակցում էին ՄՄԿ Հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ՝ Օ. Բաբայանը և Հայաստանի ՄՄԿ-ի Չարգացման Ծրագրի ներկայացուցիչներ՝ Ռ. Գյուլնազարյանը և Ա. Դազարյանը:

### **Հանդիպումներ Ստամբուլում**

Օգել Կումկապի պոլիկլինիկայի ղեկավար՝  
բժիշկ Ահմեդ Կայա

Նա մեզ տեղեկացրեց, որ Ստամբուլի Կումկապի թաղամասում ԱՊՀ երկրներից, Աֆղանստանից, Պակիստանից մեծ թվով անօրինական միգրանտներ են ապրում, որոնք հիմնավորվում են Թուրքիայում կամ տարանցումով մեկնում են Եվրոպա:

2002-2003թթ. ընթացքում ոստիկանությունը հարյուր հազար մարդ է բռնել և վտարել: Ցածր վճարունակության և փաստաթղթային խնդիրների, ինչպես նաև պոլիկլինիկայում ծառայությունների մատչելիության հանգամանքը հաշվի առնելով, անօրինական միգրանտները նախընտրում են դիմել այս մասնավոր կլինիկա: Պետական հիվանդանոցներում հետազոտությունն ու բուժումը թանկ արժեն և այնտեղ չի պահպանվում գաղտնիության սկզբունքը: Օրինակ, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությամբ (ՄՃՓՀ) վարակվածի մասին տեղեկությունները նրանք պարտավոր են հայտնել Առողջապահության նախարարություն և ոստիկանություն, այսպիսով անօրինական միգրանտները վտարված լինելու վտանգի առջև են հայտնվում: Բժշկական հետազոտության գինը այստեղ մատչելի է, այն կազմում է 10 մլն լիրա՝ մոտավորապես 8 դոլլար: Պոլիկլինիկայում հետազոտություններ են կատարում ՉԻԱՀ, սիֆիլիս, գոնոռեա, քլամիդիա, ինչպես նաև հեպատիտ «B» և «C»-ի առկայությունը որոշելու նպատակով: Թուրքիայում բարձր է հեպատիտ «B»-ի վիրուսակրության ցուցանիշը դրանով հիվանդ է բնակչության 8%-ը, իսկ քրդերի շրջանում՝ 20%-ը, վիրուսակրությունը հատկապես տարածված է կանանց և երեխաների շրջանում: Բժիշկը կարծում է, որ վարակի տարածմանը նպաստում են բազմակնությունը և անձնական հիգիենայի կանոնների պահպանման ցածր մակարդակը:

Բժիշկ Կայայի խոսքերով, թրաֆիքինգի գոհերը մույնպես այցելել են նրա կլինիկան: Ավելի հաճախ դրանք մոլորվացիներ էին, աղբբեջանցիներ, ռուսներ, ուզբեկներ: Ազգությամբ հայեր և վրացիներ նրանց մեջ չեն եղել:

### **Ամփոփում**

Հաստատվեց մեր այն ենթադրությունը, թե բժշկական հաստատությունները կարող են լինել թրաֆիքինգի գոհերի մասին տեղեկություններ ստանալու առաջնային աղբյուր:

Չոհի համաձայնությամբ նա կարող է հետազայում փոխանցվել հասարակական կազմակերպություններին՝ աջակցություն ստանալու համար:

Թրաֆիքինգի գոհերին աջակցություն ցուցաբերող բժշկական հաստատությունների մասին տեղեկատվություն կարելի է տարածել միգրանտներին տրամադրվող բուկլետների միջոցով:

Թրաֆիքինգի գոհերի հեպատիտ «B» և «C»-ով, ինչպես նաև ՄՃՓՀ-ներով վարակվելու հավանականությունը շատ մեծ է:

## **Ստամբուլում Ռուսաստանի Դաշնության հյուպատոսություն**

հյուպատոս՝ Իգոր Յուրովսկի

Պրն. Հյուպատոսը հայտնեց, որ մասնավոր գործարանների և մեծածախ առևտրի Ակսարայ թաղամասում Հայաստանի շատ քաղաքացիներ են աշխատում, որոնք անօրինական միգրանտներ են: Հյուպատոսարանը օգնում է ծանր կացության մեջ հայտնված Հայաստանի քաղաքացիներին, թեև Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության միջև պաշտոնական համաձայնագիր դրա վերաբերյալ չկա: Միայն 2004թ.-ի ընթացքում Հյուպատոսարան են դիմել 15 հոգի՝ Հայաստան վերադառնալու նպատակով իրենց ճամփորդական փաստաթղթեր տրամադրելու խնդրանքով: Նշվեց նաև, որ Հայաստանի քաղաքացիների իրավունքների պաշտպանության նպատակով Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության միջև հյուպատոսական համագործակցության համաձայնագրի բացակայությունը դժվարեցնում է հյուպատոսարանի աշխատանքը այդ հարցում, և տրամադրված օգնության արդյունավետությունը կախված է ՀՀ Ոստիկանության կողմից՝ Թուրքիայի տարածքում անձնագրերը կորցրած անձանց տվյալները ճշտելու մասին հյուպատոսարանի հարցումներին պատասխանելու ժամկետներից:

Թուրքիա ուղևորության նպատակներից մեկը տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապեր հաստատելն էր:

### **«Մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամ» ՀԿ (HRDF)**

Դեմետ Գուրալ, գործադիր տնօրեն

Մուխտար Չոկար, բժիշկ-խորհրդատու

Այս հասարակական կազմակերպության ղեկավարներ՝ տիկին Դեմետ Գուրալի և պրն. Մուխտար Չոկարի հետ հանդիպումը պլանավորված էր դեռևս Երևանում: Այս ՀԿ-ն թրաֆիքինգի խնդրով զբաղվող միակ կազմակերպությունն է Թուրքիայում: Նրանք աշխատում են թրաֆիքինգի զոհերի հետ, նույնականացում են իրականացնում ՄՄԿ հարցաշարով, տրամադրում են հոգեբանական խորհրդատվություն, անցկացնում են սեմինարներ ոստիկանների համար: Կազմակերպությունը դեռ զոհերի համար ապաստարան չունի, այդ պատճառով էլ զոհը մնում է ոստիկանությունում կամ ժանդարմերիայում, և կազմակերպության մասնագետները այնտեղ էլ աշխատում են զոհերի հետ: Բայց մեր այցելությունից որոշ ժամանակ անց նախատեսվում էր

ապաստարանի բացումը, որը միայն օտարերկրացի կանանց կընդունի: Կազմակերպությունը սերտորեն համագործակցում է ՄՄԿ և ոստիկանության հետ:

Չրույցի ընթացքում պարզվեց, որ կեղծ անձնագրերի առկայությունը անօրինական միգրանտների շրջանում տարածված երևույթ է: Կեղծ անձնագիրը թուրքիայում արժե 1000 դոլլար, Ուզբեկստանում՝ 500 դոլլար, իսկ դա վկայում է իրավապահ մարմինների կաշառված լինելու մասին: Թուրքիան խստացնում է սահմանի վրա անձնագրային վերահսկողության կանոնները և ստուգման նոր մեթոդներ է կիրառում: Ներկայումս սահմանակից երկրների հետ հսկիչ-անցագրային կետերից տասից երկուսում անձի ստուգման «ֆեյս կոնտրոլ» համակարգն է կիրառվում:

Կան վիճակագրական տվյալներ այն երկրների մասին, որոնց քաղաքացիները ամենից հաճախ են որպես սեքս թրաֆիքինգի զոհ նույնականացվում: Այդ երկրներից են Մոլդովան, Ադրբեջանը, Ռուսաստանը, Վրաստանը, Ուզբեկստանը: Հայաստանի վերաբերյալ տվյալներ չկան:

Տիկին Գուրալը կարծում է, որ վիզային ռեժիմի մատչելիությունը գրավում է օտարերկրացիներին, նրանք կարող են ապրել և աշխատել, իսկ օրենսդրությունը նպաստում է օրինական միգրացիային: Ոստիկանությունը վերահսկում է դրությունը և հաճախ աչք փակում անօրինական միգրանտների վրա:

Թուրքիայում մարմնավաճառությունն օրինականացված է, բայց օտարերկրյա քաղաքացիները իրավունք չունեն մարմնավաճառությամբ զբաղվել: Այսպիսով օտարերկրացի կանայք խախտում են օրենքը: Կազմակերպությունը անհրաժեշտ է համարում վերանայել օրենքը, որի արդյունքում կնվազի սեքս բիզնեսում ներգրավված միգրանտ-կանանց նկատմամբ բռնության չափը:

### **Ամփոփում**

Անհնար է կասեցնել աշխատանքային միգրացիան: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է փոխել օրենսդրությունը, տրամադրվող աշխատանքային տեղերի քանակի մասին պայմանագրեր կնքել այլ երկրների հետ:

Աղքատության նվազեցումը ծագման երկրներում և օրինական աշխատանքային միգրացիայի կանոնակարգումը կնպաստի թրաֆիքինգի կանխարգելմանը:

### **ԱՄՆ Դեսպանություն**

Չոնաթան Հենիք, քաղաքական/տնտեսական բաժին

Այս հանդիպման մասին պայմանավորվածությունը տեղի էր ունեցել դեռևս Երևանում, Հայաստանում ԱՄՆ Դեսպանության աշխատակից՝ Անժելա Լեֆելը և

Անկարայում ԱՄՆ Դեսպանության աշխատակից՝ Դեվիդ ՄաքՖարլանդի աջակցությամբ:

Պրն. Հենիքը հաղորդեց, որ ԱՄՆ Կառավարությունը, թրաֆիքինգի մասին օրենքից ելնելով, ամբողջ աշխարհում խնդրի ռեալ վերահսկողություն է իրականացնում: Բոլոր երկրները չէ, որ զգայուն են խնդրի նկատմամբ: Թուրքիան նրանց թվում է, և ԱՄՆ Դեսպանության նպատակն է համագործակցել՝ վիճակը բարելավելու համար: Թուրքիան դեռևս երկու տարի առաջ չէր ընդունում թրաֆիքինգի խնդրի առկայությունը երկրում և ներկայումս կառավարության կողմից ձեռնարկված միջոցները դրությունը բարելավելու նպատակով դեռևս բավարար չեն: Թերություններ կան սահմանի վրա և ոստիկանության աշխատանքում: Թուրքիան նշանակակետ և տարանցիկ երկիր է: Նրա տարածքը օգտագործվում է Հունաստան և Եվրոպական այլ երկրներ անօրինական միգրանտների տարանցման համար: Վրաստանից ամեն օր միգրանտների երկու խումբ Թուրքիայի տարածքով ուղևորվում է Եվրոպա: Պրն. Հենիքի խոսքերով՝ «Մարդկանց թրաֆիքինգով զբաղվողները հեշտությամբ են անցուղիներ գտնում և մեզանից երկու քայլ առաջ են մտածում ու աշխատում»: Դեսպանությունը ակտիվ աշխատում է «HRDF» ՀԿ-ի հետ, բայց թրաֆիքինգի զոհերի հետ տարվող ծրագրերում անհրաժեշտ է ներգրավել նաև այլ ՀԿ-ներ և ընդլայնել կապերը տեղական պետական կազմակերպությունների, թրաֆիքինգի հարցերով փորձագետների, կրոնական գործիչների հետ, ինչը թույլ կտա քանդել մարդկանց առևտրի կազմակերպիչների լավ կարգավորված կապերն ու շղթաները:

**Արսեն Ավագյանը** Հայաստանի ներկայացուցիչն է «Սևծովյան տնտեսական համագործակցություն» (BSEC) կազմակերպությունում:

Նրա շնորհիվ տեղի ունեցան հանդիպումներ Թուրքիայի հայ մամուլի ներկայացուցիչների հետ:

Մասնակցում էին Արա Քոչունյանը՝ «Ժամանակ» օրաթերթից, Նաիրա Սկրտչյանը՝ «Մարմարա» օրաթերթից, Գյուրե Սարգիսը՝ «Ակոս» շաբաթաթերթից, որը թուրքերեն լեզվով է թողարկվում:

Լրագրողները ներկայացրեցին Հայաստանի քաղաքացիների իրադրությունը Թուրքիայում: Ըստ ոչ պաշտոնական տվյալների, 25-30 հազար Հայաստանի քաղաքացիներ կան երկրում, որոնք հիմնականում Ստամբուլում են բնակվում, մի որոշ մաս էլ՝ Տրապիզոնում և Էրզրումում: Ստամբուլում նրանք բնակվում են Կումկապի և Լալեյի թաղամասերում, որոնք հայտնի են որպես մանրամեծածախ առևտրի և կարի ֆաբրիկաների թաղամասեր: Կումկապիում է գտնվում Պատրիարքարանը և հայկական եկեղեցին: Լրագրողների տվյալներով, Տրապիզոն, Մերսին և Անթալիա քաղաքներում 500-

1000 հայ կանայք սեքս ծառայությունների մատուցման ոլորտում են աշխատում: Ստամբուլում նրանց քանակը մեծ չէ, դա պայմանավորված է երևույթի նկատմամբ հայ համայնքի կտրականապես բացասական վերաբերմունքով, իսկ դա զգալի զսպող գործոն է, և երկրորդը, հայ կանայք չեն դիմանում սլավոնական կանանց և մոլդովուհիների հետ մրցակցությանը:

Հայաստանի քաղաքացիները հաճախ բժշկական օգնության համար դիմում են Սուրբ Փրկիչ և Սուրբ Հակոբ հիվանդանոցներ: Հայ համայնքը Սուրբ Փրկիչ հիվանդանոցի բյուջեին միջոցներ է տրամադրում: Շատ հիվանդների բուժումը վճարվում է լրիվ կամ մասնակի:

Նորեկ հայերի կողմից օրենքի խախտման, գողության, խաբեության, մարմնավաճառության դեպքերը զայրույթ և բացասական վերաբերմունքն են առաջացնում հայ համայնքի ներկայացուցիչների մոտ: Քանի որ նման պահվածքը ազդում է թուրքական հասարակության մեջ հայ համայնքի հեղինակության վրա, զգալի նվազում է համայնքի հնարավորությունը օգնություն տրամադրել իրականում դժվար կացության մեջ հայտնված հայերին:

Հանդիպմանը ներկա գտնվողները տեղեկություններ չունեին Հայաստանի քաղաքացիների շրջանում թրաֆիքինգի դեպքերի մասին:

Մեր խնդրանքով պրն. Ավագյանը հանդիպում կազմակերպեց մի կնոջ հետ, որը լավ ճանաչված է Հայաստանից եկած միգրանտների շրջանում:

Է.-ն աշխատում է տուրիստական ավտոբուսային ընկերությունում: Սա այն 4 ընկերություններից մեկն է, որ Թուրքիա է փոխադրում Հայաստանի քաղաքացիներին: Ստամբուլում ֆիրմայի գրասենյակը Ակսարայ թաղամասում է գտնվում: Հատկապես մարդաշատ է լինում այնտեղ ավտոբուսների ժամանման և մեկնման օրերին:

Է.-ն բավականին իրազեկ էր թրաֆիքինգի հարցերում և պատմեց կոնկրետ դեպքերի մասին, նշելով հյուրանոցներ Ստամբուլում, որտեղ մարմնավաճառ կանայք են ապրում: Նա ծանոթ է թրաֆիքինգի մասին տեղեկատվական նյութերին և «Հույս և օգնություն» ՀԿ-ի «Օգնության հեռախոս» թեժ գծի հեռախոսահամարին: Այս տեղեկատվությունը նա որոշ ժամանակ առաջ ստացել էր Երևանից ավտոբուսով ժամանած մի ուղևորից:

Իր խոսքերով, նա օգնում է մեր քաղաքացիներին, եթե նրանք խնդիրներ են ունենում: Նա դիմել էր Ռուսաստանի հյուպատոսարան կորած անձնագրերի հարցերով: Օգնում է գումարով, աշխատանքի է տեղավորում, նպաստում է վերադառնալ Հայաստան:

Այն հարցին, թե ինչու մեր միգրանտները Հայաստան չեն վերադառնում Է.-ն պատասխանեց. «Այդ մարդիկ շատ հարազատների են պահում, նրանք կվերադառնան, եթե Հայաստանում աշխատանք լինի կամ այն դեպքում, եթե այստեղ դժվար աշխատանք

կատարելով իրենց առողջությունը կորցնեն: Օրինակ, մոտ օրերս մի 60 տարեկան կին է վերադառնում Հայաստան, որը ճողվածք է ստացել անկողնային ծանր հիվանդ խնամելիս»:

Այն հարցին, թե լսե՞լ է նա արդյոք հայերին անօրինական բռնելու, և ապրելու համար անընդունելի պայմաններում նրանց պահելու մասին, Է.-ն պատասխանեց. «Չեմ լսել այդպիսի դեպքերի մասին, բայց գիտեմ, որ գործարաններում հաճախ են մարդկանց շահագործում առանց վարձատրելու: Ղարսում ու Էրզրումում քրդական մաֆիան է գործում, որն աշխատանքի է վերցնում «ղաչաղ» փախստականներին կամ հայերին, վճարում է նրանց ընդամենը 100-150 դոլլար, որևիցե տեղ նրանց չեն հաշվառում, իսկ անօրինական միգրանտները իրավագուրկ են, նրանցից հեշտորեն կարելի է ազատվել: Թուրքիայի օրենսդրության համաձայն, վարձու աշխատանքի նվազագույն վարձատրությունը կազմում է 350 մլն լիր (250 դոլլար)»:

Է.-ի խոսքերով, մեր քաղաքացիներն էլ են օրենքները խախտում, գողություն անում, երկիր մուտք գործում կեղծ փաստաթղթերով: Կեղծ փաստաթղթերով հեշտորեն կարելի է անցնել ցամաքային սահմանը, եթե կաշառք առաջարկեք մաքսային ոստիկանությանը: Հիմնականում Վալեով են գնում, որտեղ թույլ է համակարգչային ծառայությունը: Միգրանտները չգիտեն, որ Թուրքիայի օրենսդրությունը 5-10 տարի ազատազրկում է նախատեսում կեղծ փաստաթղթեր ունենալու համար: Կամ մի այլ օրինակ. «հայերը, որոնք իրենց «պատրոն» են անվանում, իսկ իրականում կավատներ են, իրենց տանը միգրանտներ են բնակեցնում, խլում են նրանց անձնագրերը: Օրինակ՝ Ա.-ն Վանաձորից, խոստանում է նրանց համար աշխատանք գտնել, բայց կանխամտածված ձգձգում է աշխատանքի որոնումները և տոկոսներ է հաշվում ուտելիքի և բնակվելու համար: Կենվորները պարտքեր են կուտակում, ընկնում են կախվածության մեջ և չեն կարողանում հեռանալ: Նա նաև կանանց վաճառում է Թուրքիայի արևելյան շրջանները մարմնավաճառությամբ զբաղվելու համար»:

Է.-ն համաձայնվեց ուղեկցել մեզ հայաստանցի անօրինական միգրանտներով խիտ բնակեցված մի վայր Կումկապի թաղամասում: Այնտեղ, հայկական եկեղեցու հարևանությամբ, մի փոքր շուկա կա, որտեղ նրանք առևտուր են անում և սա էլ հայերի շփման վայրն է: Մենք ոտքով քայլեցինք դեպի ռեստորանների թաղամաս, որտեղ մեր քաղաքացիներին հանդիպելու հավանականությունը նույնպես մեծ է: Ճանապարհին շատ անգամ մեր հայրենակիցները գրույցի էին բռնվում Է.-ի հետ: Մենք փաստեցինք, որ շատերը վստահում են նրան, և նրա օգնությամբ լուծում բնակավայրի, աշխատանքի և Հայաստան վերադառնալու հարցեր: Հենց այնտեղ էլ նա մեզ մի կնոջ հետ ծանոթացրեց (անվանենք նրան Լենա), որը համաձայնվեց մեզ հարցազրույց տալ, հիմնականում այն պատճառով, որ մեզ Է.-ն էր երաշխավորել: Հետագայում Լենան մեր «հիմնական

տեղեկատու» անձը դարձավ և օգնեց հարցազրույց կազմակերպել Հայաստանից բազմաթիվ անօրինական միգրանտների հետ:

### ՄՄԿ Ստամբուլ

Մուրադ Կալկան, օպերատիվ աշխատող

Ներկայումս ՄՄԿ-ն ակտիվ աշխատում է թրաֆիքինգի խնդրով, մասնավորապես թրաֆիքինգի դեպքերի մոնիթորինգ է անցկացնում, իրականացնում է թրաֆիքինգի գոհերին աջակցություն տրամադրող ծրագրեր: Թրաֆիքինգի կանխարգելման ծրագրերը, որոնք իրականացնում է ՄՄԿ-ն, նպաստում են Թուրքիայի օրենսդրության փոփոխմանը, պետության և կրոնական կազմակերպությունների՝ խնդրի նկատմամբ մտահոգվածության ուժեղացմանը:

Պրն. Կալկանի խոսքերով, թուրքական պետությունը թրաֆիքինգի և անօրինական միգրացիայի կանխարգելման նպատակով այլ երկրների հետ համագործակցելու քայլեր է ձեռնարկում: Արդեն համաձայնագրեր են կնքված Մոլդովայի և Ուկրաինայի հետ: Թուրքիան ձգտում է Եվրոմիության անդամ դառնալ, այդ իսկ պատճառով այն պատրաստ է համագործակցել այլ երկրների հետ, և թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված օրենքներ է ընդունում: Պետությունը աջակցում է երիտասարդության շրջանում իրազեկության բարձրացմանը, մասնավորապես Թուրքիայի համալսարաններում թրաֆիքինգի մասին դասախոսությունների շարք է մտցվել: ՄՄԿ-ն նաև բնակչության իրազեկության բարձրացմանը ուղղված աշխատանք է տանում, ոստիկանության և ժանդարմերիայի աշխատակիցների համար դասընթացներ կազմակերպում: Կազմակերպությունը համագործակցում է «HRDF» ՀԿ-ի հետ, որի աշխատակիցների վերապատրաստման և ուսուցման համար Ժնևից փորձագետներ էին հրավիրվել: ՄՄԿ-ի աջակցությամբ թրաֆիքինգի 32 գոհ կամավոր տեղափոխվել են հայրենիք:

ՄՄԿ-ն թրաֆիքինգի գոհի նույնականացումը իրականացնում է հարցազրույցի միջոցով: Չոհը հայրենիք է վերադառնում միայն իր համաձայնության դեպքում: Մինչ մեկնելը գոհը գտնվում է ոստիկանությունում կամ ժանդարմերիայում, որտեղ նրան թաքցնում են կավատներից: Անվտանգությունն ապահովելու նպատակով՝ ՄՄԿ-ն նրանց տեղավորում է հյուրանոցներում առանց հաշվառման: Ժամանակը նույնականացումից մինչև մեկնումը կազմում է միջինը 5 օր, ժամկետները կախված են ՄՄԿ-ի գլխավոր գրասենյակի պատասխանից: Եթե գոհը համաձայնվում է համագործակցել իրավապահների հետ և դատարանում ցուցմունքներ տալ, վիզայի ժամկետը երկարացվում է 6 ամսով. այս կարգը նախատեսում է Թուրքիայի օրենսդրությունը: Կան պետություններ,



որոնք գումարներ են հատկացնում իրենց քաղաքացիների վերադարձի համար, օրինակ՝ Մոլդովան:

Թուրքիայում թրաֆիքինգի հետ կապված բոլոր հարցերի համակարգումը դրված է ԱԳՆ-ի վրա:

### **Ամփոփում**

Թուրքիայում ՄՄԿ-ն բնակչության և պետական պաշտոնյաների իրազեկության բարձրացմանն ուղղված մեծ աշխատանք է տանում, նպաստում է թրաֆիքինգի գոհեղին աջակցության տրամադրման հնարավորությունների ընդլայնմանը:

### **Անկարա**

#### **Ռ-Դ Դեսպանություն**

Էլբրուս Կարգիև, դեսպանի օգնական

Պրն. Կարգիևը 2003թ. դեկտեմբերին Երևանում անցկացվող «Մարդկանց թրաֆիքինգից տուժածների նույնականացումը և նրանց ուղեգրումը համապատասխան կառույցներ՝ օգնության տրամադրման նպատակով» սեմինարի մասնակիցն էր: Իր աշխատանքի բնույթից ելնելով՝ նա լավ ծանոթ է թրաֆիքինգի և անօրինական միգրացիայի խնդրին, քանի որ մինչ այդ Տրապիզոնում Ռ-Դ գլխավոր հյուպատոսն է եղել և առնչվել է տուժածների հետ: Նա ողջունեց Հարավային Կովկասում համագործակցությանն ուղղված ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների նախաձեռնությունները:

Պրն. Կարգիևը հայտնեց, որ Թուրքիայում գործող Ռ-ուսաստանի հյուպատոսական բոլոր ծառայությունները օպերատիվ կերպով լուծում են Հայաստանի քաղաքացիների խնդիրները, հատկապես, եթե հարցը վերաբերում է անօրինական աշխատանքային միգրանտներին: Բոլոր գործառույթները ռուսական կողմը իրականացնում է հայկական կողմի հետ բանավոր պայմանավորվածությունների հիման վրա և ՀՀ ԱԳՆ գործընկերների հետ անձնական կապերի միջոցով:

Նա գտնում է, որ տրամաբանական եզրահանգման է անհրաժեշտ հասցնել արդեն իսկ իրականացվող աշխատանքը, հատկապես Թուրքիայում Հայաստանի քաղաքացիների իրավունքների պաշտպանության նպատակով հյուպատոսական կառույցների համագործակցության համաձայնագրի կնքումը: Այս դեպքում ռուսական կողմը, իր հերթին, Թուրքիային արձանագրություն կտրամադրի, որը իրավական հիմք կհանդիսանա, Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների

բացակայության պարագայում, Թուրքիայում Հայաստանի քաղաքացիների իրավունքները ներկայացնելու համար:

Պրն. Կարգիլը նշեց, որ դրական առաջխաղացում է նկատվում միգրանտների օրինականացման և թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված Թուրքիայի քաղաքականության մեջ: Օրինակ, խստացվել է Թուրքիայի քաղաքացու ամուսնության կարգը օտարերկրացու հետ: Ամուսնությունը վավեր է ճանաչվում և օտարերկրացին քաղաքացիություն է ստանում, եթե 3 տարի համատեղ կյանքից հետո նա դրական երաշխավորություններ է ստանում թուրքական պաշտոնյաների կողմից:

Հայաստանի քաղաքացիների շրջանում թրաֆիքինգի գոհերի մասին ներկայումս տվյալներ չկան: Ամբողջ անցյալ տարվա ընթացքում Հայաստանի քաղաքացիները որևէ հարցով չեն դիմել Անկարայում ՌԴ դեսպանություն:

### **Ոստիկանություն**

#### **Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում**

Օսման Բալջի, Կազմակերպված հանցավորության և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի ղեկավար

Ալպասլան Ներսանողլու, Անվտանգության բաժին

Վարչության աշխատանքն ուղղված է թրաֆիքինգի կազմակերպիչների և հանցավոր խմբերի գործունեության բացահայտմանն ու կասեցմանը: Վարչությունը համագործակցում է Եվրոպական երկրների գործընկերների հետ, հատկապես SECI-ի՝ Բուխարեստում կենտրոնացած Սևծովյան երկրների ոստիկանական կազմակերպության հետ: Նրանց համատեղ աշխատանքի հիմնական ուղղությունը անօրինական միգրացիայի դեմ պայքարն է: Տարվա սկզբում նրանք հաջող անցկացրել են մարդկանց առևտրով զբաղվողների և անօրինական աշխատանքային միգրանտների բացահայտման համատեղ միջազգային ոստիկանական գործողություններ: Անօրինական միգրացիայի բաժնի աշխատակիցը նշեց թրաֆիքինգի կանխարգելման ծրագրերի շրջանակներում աշխատանքային միգրացիայի խնդրի կարգավորման անհրաժեշտության մասին: Մենք տեղեկություններ տրամադրեցինք Թուրքիայի, Ուկրաինայի, Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ոստիկանների համար կայանալիք կոնֆերանսի նախագծի վերաբերյալ, ինչպես նաև հայտնեցինք, որ ՀԿ-ները այս հարցում հանդիսանում են տվյալ հանդիպման և տարբեր երկրների ոստիկանների հետագա համագործակցության նախաձեռնողները:

## **Առաջարկություններ**

Թուրքիայի ՆԳՆ ներկայացուցիչներն առաջարկեցին, որ ՄՄԿ-ն իրականացնի հակաթրաֆիքինգային միջոցառումների համակարգումը Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության ընթացքում:

### **«Թռչող ավել» ՀԿ-ի գրասենյակ («Flying Broom»)**

Խալիմե Գյուներ, գլխավոր համակարգող

«Flying Broom» ՀԿ-ն երկրում կանանց կազմակերպությունների ցանցի համակարգողն է: Նրանց աշխատանքի առաջնային ուղղությունը Թուրքիայում կանանց իրավունքների և կարգավիճակի մասին իրազեկության բարձրացումն է: Աշխատանքը տարվում է ամբողջ երկրով, ՀԿ-ն ունի հեռավոր վիլայեթներում աշխատող 12 աշխատակից: ՀԿ-ի աշխատակիցները լավ են պատկերացնում տեղում թրաֆիքինգի զոհերին օգնության տրամադրումը և աջակցության ապահովումը, օրինակ, ծագման երկիր զոհի ուղեկցումը վերադարձի ժամանակ:

Տիկին Գյուները իր հետաքրքրությունը արտահայտեց «Հույս և օգնություն» ՀԿ-ի «Օգնության հեռախոս» թեժ գծի գործունեությամբ և առաջարկեց այս ծառայության մասին հայտարարությունը տեղադրել իր կազմակերպության ինտերնետային կայքում:

## **Առաջարկություններ**

Ներկայացնել Թուրքիայի, Հայաստանի, Վրաստանի ՀԿ-ների համատեղ ծրագիր Թուրքիայում թրաֆիքինգի երևույթի հետազոտության համար:

Նախապատրաստել տարածաշրջանային կոնֆերանս թրաֆիքինգի վերաբերյալ այդ երկրների ոստիկանության և ՀԿ-ների մասնակցությամբ:

Նախապատրաստել տարածաշրջանային ծրագիր թրաֆիքինգի զոհերին անվտանգ հայրենիք վերադառնալու և աջակցություն տրամադրելու համար:

## **ԱՄՆ Դեսպանություն**

Դեյվիդ Մաքֆարլանդ, ԱՄՆ Դեսպանության քաղաքական բաժին

Պրն. Մաքֆարլանդը հայտնեց, որ Թուրքիայում թրաֆիքինգի ասպարեզում աշխատում են մոտ 20 կազմակերպություն՝ ԱԳՆ, Ոստիկանություն, Սոցիալական ծառայություն, Աշխատանքի նախարարություն և այլն: Վերջերս «General Directory for Women Status and Problems» հանձնաժողով է ձևավորվել, որը կառավարության հովանավորության ներքո է գործում: ԱՄՆ դեսպանությունը ՄՄԿ-ի միջոցով

Ֆինանսավորել է «HRDF» ՀԿ-ի գործունեությունը, որը թրաֆիքինգի ծրագիր է իրականացնում: Դեպքայինությունը Թուրքիայի ԱԳՆ-ից թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկություններ է ստանում և օգտագործում է դրանք ամենամյա զեկույց կազմելու համար: Այս տվյալների համաձայն, Թուրքիայում թրաֆիքինգի զոհերի ամենամեծ քանակը Մոլդովայից, Ուկրաինայից և Ղազախստանից է, Հայաստանի մասին տվյալներ չկան:

## **Ոստիկանություն**

### **Օտարերկրյա քաղաքացիների հետ աշխատանքի վարչություն**

Կադիր Այ, վարչության պետ

Վարչությունը աշխատում է օտարերկրացիների շրջանում հանցագործությունների կանխարգելման ասպարեզում, անօրինական միգրանտների և թրաֆիքինգի զոհերի հետ, սահմանապահների հետ, համագործակցում է թրաֆիքինգի զոհերին աջակցություն տրամադրող ՀԿ-ի հետ: Վարչության պետը ներկայացրեց Թուրքիայից վտարման կարգը: Մինչև 1992թ. օտարերկրյա քաղաքացիների վտարման յուրաքանչյուր դեպք հանձնվում էր այն երկրի սահմանապահներին, դեպի ուր կատարվում էր վտարումը, վտարման պատճառների պարզաբանման հետ միասին: Սովորաբար վտարումը կատարվում է դատարանի որոշման հիման վրա, իրավախախտի մասին հատուկ ձև է լրացվում, վտարման կնիք է դրվում, հետո այդ ձևը ուղարկվում է ԱԳՆ, իսկ ԱԳՆ-ն ուղարկում է այն երկրի հյուպատոսարան (դեպքայինություն), որտեղից ժամանել է օտարերկրացին, որտեղ և պահվում են վտարման մասին փաստաթղթերը:

Ըստ վիճակագրության, հանցագործություններ կատարելու համար Վրաստան է վտարվել 4 475 մարդ, նրանցից 1 700-ը՝ մարմնավաճառությամբ զբաղվելու և ՄՃՓ հիվանդություններ տարածելու համար: 2004թ.-ին Թուրքիա է մուտք գործել Վրաստանի 86 623 քաղաքացի. նրանցից վիզան երկարացրել են 1 054-ը, աշխատում են 135-ը, սովորում են 265-ը: Հայաստանի վերաբերյալ տվյալներ չկան:

Սահմանի վրա հետևյալ բնույթի խնդիրներ են ծագում: Օրենքի համաձայն, եթե վիզայի ժամկետը անցել է 2-3 օրով, անհրաժեշտ է տուգանք վճարել: Միգրանտները պաշտոնական տուգանք վճարելու փոխարեն մաքսատան աշխատակիցներին կաշառք են տալիս, վերջիններս տուգանքը չեն ձևակերպում, այլ ինչ-որ կնիքներ են դնում անձնագրերում: Հաջորդ անգամ սահմանը անցնելիս մաքսատան աշխատակիցների մյուս հերթափոխը բացահատում է այդ կեղծ կնիքները. այսպես էլ բռնվում են միգրանտները, նրանց չեն թողնում Թուրքիա մուտք գործել: Թուրքիա նորից մուտք գործելու համար

նրանք իրավախախտումների են դիմում, վերցնում են կեղծ անձնագրեր, ադպիսով էլ մարդկանց թրաֆիքինգով զբաղվողների համար հեշտ թիրախ են դառնում: Այս մարդիկ թրաֆիքինգի պոտենցիալ զոհեր են:

Թուրքիայի՝ Եվրամիություն մուտք գործելու պայմաններից մեկը հարևան երկրների հետ միգրացիայի մասին պայամանագրեր կնքելն է: 2002թ. ապրիլին Թուրքիան հարևան երկրներին՝ Վրաստանին և Ադրբեջանին է ներակայացրել պայամանագրի նախագծերը: Այս համաձայնագրերը անհրաժեշտ են, որպեսզի պարզեցվեն վտարված անձանց՝ սեղմ ժամկետներում և ոչ թե 3-4 ամսում, իրենց հայրենիք վերադառնալու պայմանները:

### **Ամփոփում**

Թրաֆիքինգի և անօրինական միգրացիայի դեմ արդյունավետ պայքար մղելու համար անհրաժեշտ են տարբեր երկրների ոստիկանության և ՀԿ-ների համատեղ գործողությունները: Կարևոր է միջազգային կապերի հաստատումը և թրաֆիքինգի ու միգրացիայի վերաբերյալ պայամանագրերի կնքումը:

### **Անկարա**

#### **ՄՄԿ գրասենյակ**

Ջեյն Աչիկգոզ, առաքելության ղեկավարի պաշտոնակատար

Մելտեմ Երսոյ, օպերատիվ աշխատող

ՄՄԿ աշխատակիցները մանրամասնորեն ներկայացրին երկրում թրաֆիքինգի իրավիճակը:

Թուրքիայում թրաֆիքինգի խնդրով հիմնականում աշխատում են պետական կառույցները, ՄՄԿ-ն և «HRDF» ՀԿ-ն: ՄՄԿ աշխատակիցները գտնում են, որ առաջնային խնդիրը հայրենիք վերադարձող թրաֆիքինգի զոհերի ռեինտեգրումն է: Կարևոր է խնդրի նկատմամբ ոստիկանության մտահոգվածության աստիճանի բարձրացումը, այս նպատակով ՄՄԿ-ն ոստիկանների համար վարժանքներ է կազմակերպում:

Տարբեր երկրների, այդ թվում և Հայաստանի քաղաքացիների վտարման դեպքերի վիճակագրությունը ներկայացվեց.

Հայաստան 2301 մարդ 1996թ.-ից մինչև 2004թ.

Վրաստան 12000 մարդ 1998թ.-ից մինչև 2004թ.

Հայաստանի քաղաքացի հանդիսացող 251 կանայք նույնականացվել են որպես մարմնավաճառներ, նրանցից 144-ի մոտ բացահայտվել և արձանագրվել են ՄՃՓՀ-ներ (փաստորեն, սա առաջին դեպքն էր ամբողջ ուղևորության ընթացքում, երբ մեզ Հայաստանի քաղաքացիների մասին *պաշտոնական* տվյալներ տրամադրվեցին):

ՄՄԿ աշխատակիցները առաջարկում են իրենց տվյալներ հայտնել Հայաստանի քաղաքացիների վերաբերյալ, այդ դեպքում ՄՄԿ-ն կկարողանա աջակցել թրաֆիքինգի զոհերին հայրենիք վերադառնալու հարցում:

### **Առաջարկություն**

Հայաստանում և Թուրքիայում ՄՄԿ գրասենյակները կարող են երկու երկրների միջև թրաֆիքինգի հարցերով երկխոսության նախաձեռնողներ լինել:

### **Տրապիզոն**

Ռուսաստանի Դաշնության Գլխավոր հյուպատոսություն

Օլեգ Լոզինով, Գլխավոր հյուպատոս

Պրն. Լոզինովը հայտնեց, որ Հայաստանի և Ռուսաստանի միջև բանավոր պայմանավորվածություն գոյություն ունի Հայաստանի քաղաքացիներին, այդ թվում նաև թրաֆիքինգի զոհերին, օգնություն տրամադրելու մասին:

Բայց երկրների միջև չկա գրավոր պայմանագիր և կողմերի միջև պարտականությունները հստակեցված չեն: Հայաստանի ԱԳՆ-ի Հյուպատոսական վարչության հետ համագործակցությունը թույլ է տալիս սեղմ ժամկետներում անձի հաստատման հարցումների պատասխաններ ստանալ: Ենթադրվում է, որ փաստաթղթերի կորուստը որոշ դեպքերում ամեն տեսակի իրավախախտումների օրինականացման պատճառ է:

2004թ.-ի փետրվարից ի վեր ՌԴ Հյուպատոսություն Հայաստանի միայն երկու քաղաքացի է դիմել, երկու դեպքն էլ կապված չէին թրաֆիքինգի հետ:

Հայտնի է, որ թուրքական պետական կառույցները մեծ խնդիրներ են ունենում անօրինական միգրանտների և թրաֆիքինգի դեպքերի հետ կապված: Պրն. Լոզինովի մոտ եղած վիճակագրական տվյալների համաձայն, թրաֆիքինգի զոն են դառնում հիմնականում ռուս, ադրբեջանցի, ավելի նվազ թվով՝ ուկրաինացի, վրացի և մոլդովացի կանայք: Տոկոսային հարաբերությամբ հայուհիները չնչին քանակ են կազմում: Մեր խնդրանքին՝ հյուպատոսարանում թրաֆիքինգի խնդրով աշխատող թեժ գծի հեռախոսահամարով տեղեկատվական նյութեր փակցնելու մասին, պրն. Լոզինովը պատասխանեց, որ հյուպատոսական կառույցների համագործակցության վերաբերյալ

որևէ համաձայնագրերի կամ պայմանագրերի բացակայությունը այդպիսի խնդրանքի իրականացումը անհնար է դարձնում: Նշվեց սակայն, որ հյուպատոսություն դիմած Հայաստանի քաղաքացիները, անշուշտ, կծանոթանան բուկլետին:

### **Վրաստանի Գլխավոր հյուպատոսարան**

Գեորգի Ջանջգավա, Գլխավոր հյուպատոս

Պրն. Ջանջգավան հայտնեց, որ Տրապիզոնում մարդկանց թրաֆիքինգով զբաղվողների լավ կազմակերպված ցանց կա, քաղաքում գործում են զարգացած ենթակառուցվածքով 30-40 հյուրանոց: Թրաֆիքինգի շնորհիվ փող են աշխատում հյուրանոցները, տաքսիների վարորդները, սրճարանները, բժիշկները, վարսավիրանոցները, ոստիկանությունը:

Ձեռք բերված տեղեկությունների համաձայն, սեքս բիզնեսում ներգրավված հայուհիների քանակը համեմատաբար փոքր է: Մարմնավաճառությամբ զբաղվելու համար օտարերկրացիներին վտարում են: Վտարվածների պաշտոնական թիվը մեծ չէ, շատ դեպքերում վտարումը չեն ձևակերպում, քանի որ վտարման մեխանիզմը օգտագործվում է գումար աշխատելու համար: Անձնագրում վտարման կնիքի բացակայությունը թույլ կտա մարդուն իր փաստաթղթերով վերադառնալ Թուրքիա, իսկ սահմանապահին՝ անձնագրային ռեժիմը խախտելու համար կաշառք վերցնել: Ոստիկանությունն աչք է փակում այն փաստի վրա, որ հյուրանոցները միայն մարմնավաճառներն են բնակեցնում: Հյուպատոսը գտնում է, որ բոլոր կանայք լավ գիտեն, թե ուր և ինչի համար են գալիս: Նրանց մի մասը ամուսնանում են որպես երկրորդ կամ երրորդ կին, երեխաներ են ունենում և արդեն չեն կարողանում ետ վերադառնալ: Ամուսնության համար անհրաժեշտ է հայրենիքից պաշտոնական թուղթ ներկայացնել ամուսնացած չլինելու մասին: Այդպիսի տեղեկանքները տրամադրում է Վրաստանի Արդարադատության նախարարությունը: Հյուպատոսության դերը կայանում է այդ փաստաթղթերը թուրքերեն թարգմանելու մեջ: Տասը տարվա ընթացքում հյուպատոսարան է ներկայացվել 3000-4000 տեղեկանք, բայց ինչպես պարզվեց, նրանց թվում քիչ չէին կեղծ տեղեկանքները: Օտարերկրացիներին, ընդհանուր առմամբ, վատ են վերաբերվում, մեղադրում են նրանց հիվանդություններ տարածելու մեջ և, այդ պատճառով էլ, վտարում են, երբ դրա նախադրյալներն առկա են:

Վտարման դեպքում Թուրքիայի ԱԳՆ-ն վտարվող անձի տվյալներով լրացված հատուկ ձև է ուղարկում, որոնք հյուպատոսությունում են պահվում, քանի որ ոչ ոք դրանք չի պահանջում՝ ոչ վրացական սահմանապահ ծառայությունը, ոչ Վրաստանի ՆԳՆ-ն:

Պրն. Հյուպատոսը կարծում է, որ թրաֆիքինգի դեպքերի կանխարգելման և պոտենցիալ զոհերին հայտնաբերելու ընթացքում օգնություն տրամադրելու նպատակով անհրաժեշտ է համախմբել արտասահման մեկնող Վրաստանի քաղաքացիների հարցերով զբաղվող ստորաբաժանումների ջանքերը:

### **Առաջարկություններ**

- խստացնել վրաց-թուրքական սահմանի վրա թուրքական ոստիկանների կողմից անձնագրային ռեժիմը
- ստեղծել Թուրքիայի սահմանը անցնող Վրաստանի քաղաքացիների մասին միասնական տեղեկատվական բազա, որը թույլ կտա Տրապիզոնի հյուպատոսական ծառայությանը և սահմանի վրա գործող հսկիչ-անցագրային կետին՝ օգտագործել դա քաղաքացիների արագ նույնականացում կատարելու համար
- կանոնակարգել Վրաստանի Արդարադատության նախարարության կողմից ամուսնության մասին վկայականների տրամադրումը
- զարգացնել երկու երկրների ոստիկանությունների միջև համագործակցությունը

### **Տրապիզոնի ոստիկանություն**

#### **Ոստիկանության պետ**

Ռամազան Ակյուրեկ

Ներկայանալուց և այցելության նպատակը հստակեցնելուց հետո, Վարչության ղեկավարը մեզ ներկայացրեց ոստիկանության՝ անձնագրային ռեժիմի հարցերով զբաղվող պետի տեղակալ Այդին Յազիջին, որը մեզ պարզաբանեց քաղաքում տիրող դրությունը:

Միգրացիան Տրապիզոնում միշտ էլ բարձր ցուցանիշ է ունեցել, բայց վերջին տարիներին, փոխվել է ուղևորությունների տեսակը: Մինչև 1991թ.-ը ժամանում էին տուրիստական վիզաներով, 1991թ.-ից հետո ժամանում են նաև մշտական բնակության կամ ամուսնության նպատակով: Ներկայացվեց նաև Տրապիզոնում պաշտոնապես բնակվող օտարերկրացի կանանց մասին վիճակագրություն: 28 օտարերկրացի կանանցից 9-ը պաշտոնապես ամուսնացած են թուրքերի հետ, 6-ն ուսանողներ են, 3-ն ունեն աշխատանքային վիզա, մնացածը տուրիստներ են: 4 հայուհիներ պաշտոնապես ամուսնացած են թուրքերի հետ: Վիզաներ տրամադրելու կարգը հետևյալն է: Վիզայի



նախնական ժամկետը կազմում է 1 ամիս, այդ ժամկետն անցնելու դեպքում պետք է դիմել ոստիկանություն՝ ևս 3 ամսով վիզան երկարաձգելու համար: 3 ամսով տրված վիզայի արժեքը կազմում է 60 մլն լիր (մոտավորապես 44 դոլլար): Մեկ օրով վիզան երկարացնելը արժե 10 մլն լիր (մոտավորապես 8 դոլլար):

Պրն. Յացիջիի խոսքերով. «Հանցավոր խմբերը օգտագործում են Թուրքիայի տարածքը Իրանից, Իրաքից, Աֆղանստանից և Պակիստանից անօրինական միգրանտներ տարանցելու համար: Նրանք Թուրքիա են մուտք գործում լեռնային ճանապարհներով, ուղեկցորդների օգնությամբ, որոնք իրենց ծառայությունների համար պահանջում են 1500 դոլլար: Թուրքիայի տարածքում անօրինական միգրանտներին թաքցնում են բեռնատար մեքենաներում, հետո փոխադրում են Արևմտյան Եվրոպայի երկրներ՝ ամենից հաճախ, Հունաստան և Իտալիա: Հայաստանից և Վրաստանից տարեկան 1 կամ 2 դեպք է գրանցվում: Թրաֆիքինգի երևույթը Թուրքիայի համար նոր է, այդ պատճառով էլ միայն 2002 թ.-ին Քրեական Օրենսգրքում հայտնվեց նոր հոդված, որը 5-10 տարի ազատազրկում է նախատեսում թրաֆիքինգի կազմակերպիչների համար»:

Տրապիզոնում որպես աշխատանքային թրաֆիքինգի զոհ նույնականացված 3 կին են բռնվել, 2-ը՝ ռուս, մեկը՝ ադրբեջանցի: Հայտնի են սեքս թրաֆիքինգի զոհերի նույնականացման դեպքեր: Չոհերի նույնականացումը ոստիկանությունն է անցկացնում, որը և ՄՃՓՀ-երի հետագոտություն է կազմակերպում:

## **Տրապիզոնի ոստիկանության պետի տեղակալ**

Մեմետ Տուլեկ

Պրն. Տուլեկը գտնում է, որ անօրինական միգրանտները կատարում են նույն այն իրավախախտումները, ինչ տեղացիները, այն է՝ գողություն, խարդախություն, խաբեություն, մարմնավաճառություն:

Տրապիզոնում Հայաստանից և Վրաստանից անօրինական միգրանտների զգալի քանակ կա, ինչը պայմանավորված է նրանով, որ Թուրքիայի համեմատ այդ երկրների տնտեսական դրությունն ավելի ծանր է: Այստեղ նրանք համաձայն են կատարել ցանկացած աշխատանք, ինչից և օգտվում են տեղական գործատուները:

Չանազան իրավախախտումների համար անօրինական միգրանտներին վտարում են հետևյալ կարգի համաձայն. ոստիկանությունը վտարվածների ցուցակները տրամադրում է Թուրքիայի ԱԳՆ, նրանք իրենց հերթին՝ համապատասխան երկրի դեսպանություն/հյուպատոսություն: Յուրաքանչյուր վտարված անձի համար լրացվում է հատուկ ձև, որը ֆաքսով ուղարկվում է հյուպատոսարան: Եթե վտարումը իրակացվում է քրեական հանցագործության համար, ուրեմն քաղաքացուն հանձնում են անմիջապես

սահմանապահներին, եթե վտարում են անձնագրային ռեժիմը խախտելու համար, ապա վտարում են առանց պաշտոնական հանձնման: Սրանից էլ օգտվում են մարդկանց թրաֆիքինգով զբաղվողները: Հայտնի է, որ հետագայում Վրաստանում վերջիններս փոխում են վտարվածների անձնագրերը կամ վերաստանում են նկարները և նորից վերադարձնում են նրանց Թուրքիա:

Կա Ուկրաինայի օրինակը, որը պահանջում է, որ վտարվածների հետ միասին հանձնվի նաև նրանց ցուցակը, ինչը թույլ կտա վերահսկել իրավիճակը: Թուրքիայի և այլ երկրների ոստիկանական գերատեսչությունների միջև պայմանագրի բացակայությունը հանգեցնում է նրան, որ անմիջապես սահմանապահներին իրենց երկրի քաղաքացիների վտարման մասին տեղեկություններ չեն տրամադրվում:

Ոստիկանությունը վտարման դեպքում որոշակի կանոնների է հետևում: Եթե օտարերկրացին Թուրքիա է մուտք գործել, օրինակ, Ստամբուլի հսկիչ-անցագրային կետով, իսկ բռնվել է մի այլ քաղաքում, նրան վտարում են Ստամբուլի հսկիչ-անցագրային կետով:

Վերջում պրն. Տուլեկն ավելացրեց. «Մինչ երկրների միջև պայմանագրերի կնքումը մենք միշտ պատրաստ ենք ընդհանուր գործում աջակցել ՀԿ-ներին, հիմնվելով անձնական կապերի վրա»:

Ոստիկանությունում մեզ բարյացակամ էին վերաբերվում, այդ պատճառով մենք հնարավորություն ունեցանք ծանոթանալ թրաֆիքինգի դեմ պայքարի գործակալության (antitrafficking unit in Trabzon) աշխատանքի հետ:

Ստորաբաժանման պետ Պրջեմ Կոտանը ասում է, որ մարդկանց թրաֆիքինգով զբաղվողները աշխատում են խաբեությամբ: Ծագման երկրում այլ բան են խոստանում, իսկ Թուրքիայում մարմնավաճառության մեջ են ներգրավում: Նրանք լավ կազմակերպված են և սահմանի երկու կողմերում էլ դրությունը հսկողության տակ են պահում: Վրաստանի կանանց ուղարկում են սահման, թուրքական կողմում նրանց դիմավորում են կավատները:

Թրաֆիքինգի շատ զոհեր կան Վրաստանից և Ադրբեյջանից, Հայաստանից դեպքեր չեն եղել: Տվյալներ կան, որ Իզմիրի հարևանությամբ գտնվող Քուշադաս կղզում շատ վրացուհիներ են մարմնավաճառությամբ զբաղվում. նրանք, անշուշտ, թրաֆիքինգի զոհեր են: Թրաֆիքինգի խնդրով զբաղվելու 5 տարիների ընթացքում նա տղամարդ զոհերի չի հանդիպել:

Սովորաբար զոհերը վախենում են մարդկանց թրաֆիքինգով զբաղվողների մասին ցուցմունքներ տալ: Օրենքի համաձայն, զոհը կամավոր է ցուցմունքներ տալիս, մտածելու ժամանակ (տալ ցուցմունքներ, թե ոչ) նրան չի տրամադրվում, վիզայի ժամկետը լրանալուն պես, ցանկացած դեպքում, նրան վտարում են: Չոհերի բնակեցման համար

ապաստարան չկա, հետաքննության ընթացքում նրանց պահում են մեկուսարանում: Եթե զոհը գումար ունի, նա բնակվում է հյուրանոցում: Նրանց աշխատանքի չեն տեղավորում և ժամանակավոր կեցության կարգավիճակ չեն տրամադրում: Թրաֆիքինգի մասին առանձին վիճակագրություն չկա, այն մարմնավաճառության վերաբերյալ տվյալների հետ միասին է:

Ոստիկանը մի դեպք պատմեց, թե ինչպես 2004թ. ապրիլին ք. Ելազնում 2 թուրքեր 2500 դոլլարով վաճառել են վրացի 2 աղջիկ: Հետագայում այդ կավատներին ձերբակալել են, իսկ գնորդին ոչ:

Պատահաբար մենք իմացանք նաև, որ այդ նույն օրը, մի քանի ժամ հետո մի ադրբեջանցի աղջկա պիտի վտարեին, որը նույնականացվել էր որպես թրաֆիքինգի զոհ: Մենք թույլտվություն խնդրեցինք հանդիպել նրա հետ և հարցազրույց անցկացնել: Ոստիկաններին զարմացրեց մեր խնդրանքը և հասկանալի է, թե ինչու. նա հայուհի չէր, վրացուհի չէր, ապա էլ ինչու՞ պիտի մենք հետաքրքրված լինեինք: Այնուամենայնիվ մեզ այդ հնարավորությունը ընձեռվեց (տես Ռ-անալի պատմությունը):

Երևանում, երբ տողերիս հեղինակը Թուրքիայում կայանալիք աշխատանքին էր պատրաստվում, հանդիպեցինք նախկինում Տրապիզոնում սեքս ծառայությունների ոլորտում աշխատած և մեր կողմից որպես թրաֆիքինգի զոհ նույնականացված աղջիկների հետ: Նրանց պատմություններից մենք տեղեկություններ ունեինք քաղաքում գտնվող բազմաթիվ սրճարանների մասին, որտեղ հաճախորդ գտնելու սկնկալիքով յուրաքանչյուր սրճարանում հավաքվում է 10-15 աղջիկ: Բոլոր աղջիկները կավատների համար են աշխատում և դաժանաբար շահագործվում են, նրանք ինքնուրույն հայրենիք վերադառնալու հնարավորություն չունեն, քանի որ կավատների մշտական հսկողության տակ են գտնվում և իրենց մոտ փաստաթղթեր և փող չունեն:

Երեկոյան, Տրապիզոնում քայլելիս, փորձեցինք այդ սրճարաններից մեկում մի բաժակ թեյի շուրջ զրուցել այդ աղջիկների հետ, բայց անվտանգության աշխատակիցները մեզ անգամ ներս չթողեցին: Մենք նրանց հանդիպելու զանազան տարբերակներ մտածեցինք, բայց դա մեզ այդպես էլ չհաջողվեց:

### **Վերջաբան**

Հայաստանի և Վրաստանի փորձագետների կողմից իրականացված անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի խնդրի հետազոտությունը թույլ տվեց մեզ համոզվել, որ իսկապես Հայաստանից, Վրաստանից և Ադրբեջանից մարդկանց տեղափոխում են Թուրքիա, հիմնականում անօրինական աշխատանքային գործունեության, իսկ որոշ դեպքերում նաև թրաֆիքինգի նպատակով:

Վրաստանի սահմանապահների, ՄՄԿ-ի Թուրքիայի գրասենյակի և Թուրքիայի ոստիկանության կողմից տրամադրված վիճակագրական տվյալների համաձայն, Հայաստանի քաղաքացի անօրինական միգրանտների քանակը մեծ չէ, իսկ թրաֆիքինգի զոհերի մասին տվյալներ գրեթե չկան: Վիճակագրությունից դուրս, Թուրքիայի տարածքում Հայաստանի քաղաքացիների թրաֆիքինգի մասին տեղեկություններ ունեն համայնքի ներկայացուցիչները, լրագրողները, հյուպատոսական աշխատակիցները, ոստիկանությունը, անօրինական միգրանտները, այդ մասին վկայում են նաև «Հույս և օգնություն» ՀԿ-ի կողմից նույնականացված թրաֆիքինգի զոհերը: Թուրքիայում գտնվելու ընթացքում հաջողվեց կապ ստեղծել թրաֆիքինգի միայն մեկ զոհի հետ (Ադրբեջանի քաղաքացի) և ձայնագրել հարցազրույցներ մի քանի անձանց հետ, որոնց տվյալների անուղղակի վերլուծությունից ելնելով կարելի է նրանց թրաֆիքինգի հնարավոր զոհեր համարել:

### **Եզրակացություններ**

- Թուրքիայի տարածքում գտնվող անօրինական հայ միգրանտների և թրաֆիքինգի հնարավոր զոհերի հետ կապերի ստեղծումը զգալի ժամանակ է պահանջում և հնարավոր է միայն «հիմնական տեղեկատու» անձանց միջոցով: Որպես «հիմնական տեղեկատու» անձինք կարող են լինել վարորդները և միջազգային ավտոբուսների ուղեկցորդները, բուժ.աշխատողները, տաքսիստները, ՀԿ-ների աշխատակիցները: Նախնական շփումը ավելի հեշտ է հաջողվում միջազգային ավտոբուսների կայարանում, որտեղ մինչ ավտոբուսի ժամանումը հավաքվում են դիմավորողները, որոնց մեջ շատ անօրինական միգրանտներ կան: Փողոցում, սրճարանում կամ հյուրանոցում թրաֆիքինգի զոհի հետ անմիջական կապ ստեղծելու փորձերը անհաջողության են մատնվում, քանի որ սպասուհիները, պարուհիները, մարմնավաճառները միշտ կավատների կամ նրանց օգնականների հսկողության տակ են գտնվում:

- Թուրքիա մեկնող քաղաքացիները հաճախ չգիտեն այդ երկրի օրենքները: Այս փաստելով՝ անհրաժեշտ է ակտիվ տեղեկատվական միջոցառումներ անցկացնել, սահմանակից երկրների քաղաքացիներին Թուրքիայի վիզային ռեժիմի կանոնների, այդ երկրում կեցության օրենքների, օտարերկրյա քաղաքացիների աշխատանքային հարցերը կարգավորող օրենքների հետ ծանոթացնելու և օտար երկրում դժվար իրավիճակի մեջ հայտնված մարդուն օգնություն տրամադրող կազմակերպությունների մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

- Միգրանտներին բժշկական օգնություն են տրամադրում մասնավոր կլինիկաները վճարովի հիմունքներով, ինչն էլ այն քիչ մատչելի է դարձնում շատ անօրինական միգրանտների համար: Սակայն կան նաև իրենց ծառայությունների համար ընդունելի

զներ պահանջող կլինիկաներ, օրինակ, Կումկապի պոլիկլինիկան, որը անօրինական միգրանտներին և թրաֆիքինգի զոհերին չի մերժում բժշկական օգնություն տրամադրելու հարցում: Բժշկական հաստատությունները թրաֆիքինգի զոհերի մասին տեղեկություններ ստանալու առաջնային աղբյուր կարող են լինել: Թրաֆիքինգի զոհերի՝ հեպատիտ B, C և այլ ՄՃՓՀ-ով վարակվելու հավանականությունը մեծ է:

- Թուրքիայի հայալեզու մամուլին հնարավոր է ներգրավել տեղեկատվական նյութեր տարածելու հարցում, երկրում գործող այն պետական, միջազգային, հասարակական կազմակերպությունների վերաբերյալ, որոնք կարող են աջակցել թրաֆիքինգից տուժած Հայաստանի քաղաքացիներին:

- Թուրքիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պարագայում Թուրքիայում ՄՄԿ ներկայացուցչությունը կարող է և պատրաստ է մեծ դեր խաղալ Հայաստանի քաղաքացի հանդիսացող թրաֆիքինգի զոհերին օգնություն տրամադրելու հարցում:

- Հայտնի է, որ Ռուսաստանի հյուպատոսության աշխատակիցները հյուպատոսական օգնություն են տրամադրում Հայաստանի քաղաքացիներին: Հյուպատոսների հետ զրույցներից պարզվեց, որ ամենից հաճախ Հայաստանի քաղաքացիները դիմում են կորցրած անձնագրերի կամ հայրենիք վերադառնալու նպատակով ուղեկցող փաստաթղթերի հետ կապված հարցերով: Թուրքիայում ՌԳ Հյուպատոսության աշխատանքի արդյունավետությունը կախված է իրենց հարցումներին Հայաստանի ԱԳՆ-ի պատասխանի ժամկետից: Ներկայումս ՌԳ հյուպատոսության կողմից հյուպատոսական ծառայությունների մատուցումը իրականացվում է հայ գործընկերների հետ բանավոր պայմանավորվածությունների հիման վրա: Հայաստանի քաղաքացիներին տրամադրվող հյուպատոսական ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և նրանց շրջանակն ընդլայնելու համար անհրաժեշտ է միջպետական մակարդակով այն է՝ Հայաստանի և ՌԳ հյուպատոսական կառույցների միջև համագործակցության պայմանագրի կնքումը:

- Կարևոր է սահմանային ծառայությունների տեխնիկական հնարավորությունների հզորացումը, որը թույլ կտա բացահայտել անձր հաստատող կեղծ փաստաթղթերը, բացահայտել անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի դեպքերն անմիջապես սահմանն անցնելիս, ինչպես ծագման, այնպես էլ տարանցիկ և նշանակակետ երկրներում: Թրաֆիքինգի դեպքերը կանխարգելելու համար անհրաժեշտ է պայքարել կոռուպցիայի դեմ և խստացնել հսկողությունը Թուրքիայի հետ սահմանակից երկրների անձնագրային սեղանների համակարգում:

- Ավտոբուսային ընկերությունների սեփականատերերը ուղևորներին Թուրքիա են փոխադրում պարտքով, անձնագիրը գրավ դնելու դիմաց՝ պարտքը որոշակի ժամկետում

վերադարձնելու պայմանով: Առանց անձը հաստատող փաստաթղթի մարդն անմիջապես հայտնվում է անօրինական կարգավիճակում և շատ խոցելի է դառնում մարդկանց թրաֆիքինգով զբաղվողների ցանց ներգրավվելու համար: Այս կարգի փոխադրումները անուղղակիորեն կարող են նպաստել թրաֆիքինգի մեջ ներգրավմանը:

- Թուրքիա ուղևորության զգալի ձեռքբերումներից մեկը «HRDF» և «Flying Broom» ՀԿ-ների հետ գործնական կապերի ստեղծումն էր: Անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի մասին հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ համատեղ քննարկումները թույլ տվեցին պարզաբանել դիրքորոշումները, սահմանել տարբեր երկրների ՀԿ-ների համագործակցության եզրերը թրաֆիքինգի զոհերի բացահայտման, նույնականացման և հայրենիք՝ Հարավային Կովկասի երկրներ, վերադարձի նպատակով, ինչպես նաև կազմակերպությունների տեխնիկական հնարավորությունները օգտագործել՝ թրաֆիքինգի հարցերով զբաղվող կազմակերպությունների մասին զոհերի իրազեկությունը բարձրացնելու համար:

- Հայաստանի ներկայացուցիչների հանդիպումները Թուրքիայի պաշտոնական անձանց հետ հնարավոր դարձան նախնական պայմանավորվածության շնորհիվ, որին միջնորդել էին Վրաստանում Թուրքիայի դեսպանության 1-ին քարտուղարը և Վրաստանի ՆԳՆ ներկայացուցիչը: Առանց միջնորդության դժվար թե հնարավոր լինի հանդիպել ոստիկանության պաշտոնյաների, սահմանապահների և ԱԳՆ աշխատակիցների հետ:

### **Առաջարկություններ**

- Թրաֆիքինգի և անօրինական միգրացիայի դեմ արդյունավետ պայքար մղելու համար անհրաժեշտ է միջպետական կապեր ստեղծել և թրաֆիքինգի ու անօրինական միգրացիայի դեմ պայքարի մասին պայմանագրեր կնքել:

- Անհրաժեշտ է նշանակակետ երկրների հետ աշխատատեղերի թվի (քվոտաների) մասին պայմանագրեր կնքել, որպեսզի հնարավոր լինի պաշտպանել մեր քաղաքացիներին անօրինական աշխատանքային գործունեության կամ թրաֆիքինգի մեջ ներգրավվելուց:

- Հարկ է, որ Հայաստանի ԱԳՆ-ն պայմանագիր կնքի Ռուսաստանի ԱԳՆ-ի հետ՝ Թուրքիայում Հայաստանի քաղաքացիներին հյուպատոսական օգնություն տրամադրելու մասին:

- Հարկ է խստացնել ոստիկանության պայքարը կոռուպցիայի դեմ՝ անձնագրային սեղաններում կրկնակի թրաֆիքինգի դեպքերը բացառելու նպատակով:

- Հարկ է թրաֆիքինգի մասին ՀՀ օրենդրության մեջ լրացումներ կատարել՝ այն միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու համար:

- Պետք է օգտագործել Թուրքիայում և Հայաստանում ՄՄԿ գրասենյակները՝ թրաֆիքինգը և անօրինական միգրացիան կանխարգելելու նպատակով մեր երկրների կառավարությունների միջև երկխոսություն սկսելու համար:

- Անհրաժեշտ է թրաֆիքինգի կանխարգելման նպատակով երկրում տեղեկատվական միջոցառումներ անցկացնել, ինչպես նաև թրաֆիքինգի զոհերին և անօրինական միգրանտներին իրատեսական օգնություն ցուցաբերող պետական և միջազգային կազմակերպությունների, թուրքական ՀԿ-ների և հյուպատոսարանների սվյալներով նյութեր տարածել:

- ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարությունը, բնակչության իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում, պետք է տեղեկացնի Թուրքիայի մասնավոր տուրիստական ավտոբուսային ընկերություններին՝ պարտքով և գրավի դիմաց ուղևորներին փոխադրելու հետ կապված վտանգի մասին:

## **Հարցազրույցներ**

Թուրքիայի տարբեր քաղաքներում ձայնագրվել է 18 հարցազրույց Հայաստանի, Ռուսաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի քաղաքացիների հետ: Հարցազրույցների են մասնակցել անօրինական միգրանտները, մարդիկ, որոնք նույնականացվել են որպես թրաֆիքինգի զոհեր կամ անուղղակի հատկանիշներով նման են եղել թրաֆիքինգից տուժածի:

Ստորև բերվում են որոշ հարցազրույցներ: Հարցվողների անունները փոխված են: Հարցազրույցի անցկացման ծախսերը ֆինանսավորել է ՄԱԿ-ի Չարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակը:

### **Ստամբուլում ձայնագրված հարցազրույց**

#### **Կումկապի**

Սեդան 38 տարեկան է: Նա Արտաշատից է: 4 տարի է ինչ ամուսնալուծված է, քանի որ ամուսինը թմրամոլ է: Ունի 2 փոքր երեխա, որոնք հաճախ հիվանդանում են: Ներկայումս երեխաներին Սեդայի մայրն է խնամում: Արտաշատում նա չունի սեփական տուն և աշխատանք:

Բնակարանի և գոյատևման միջոցների բացակայությունը, պարտքերը, հաճախ հիվանդացող երեխաների բուժման վճարի և դեղորայքի գնման դժվարությունները, պատճառ են դառնում Հայաստանից մեկնելու համար: Մեկ ու կես տարի առաջ նա գալիս է Ստամբուլ աշխատանք փնտրելու: Ժամանում է ավտոբուսով: Գումար չունենալու

պատճառով իրեն փոխադրող ավտոբուսային ընկերության աշխատողների հետ պայմանավորվում է տոմսի արժեքը վճարել առաջին իսկ հնարավորության դեպքում՝ որպես գրավ թողնելով անձնագիրը: Համեմատաբար հեշտությամբ հավաքարարի աշխատանք է գտնում կարի ֆաբրիկայում: Երկու ամիս հետո նա անձնագիրը ետ է վերցնում ավտոբուսային ընկերության գրասենյակից: Հինգհարկանի ֆաբրիկան ամեն օր մաքրելու համար՝ ստանում է ամսեկան 500 մլն. լիր (մոտ 350 դոլլար): Միաժամանակ նաև բնակարաններ է մաքրում: Սեղան ապրում է վարձով մի թրքուհու տանը՝ վճարի դիմաց կատարելով սպասուհու աշխատանք: Նա գոհ է տանտիրուհուց, որովհետև վերջինս օգնում է նրան բոլոր կենցաղային հարցերով: Օրինակ, երբ Սեղան հիվանդացել էր, նրան խնամել է տանտիրուհին, իսկ երբ վիճակը ծանրացել է, տեղափոխել է նրան հիվանդանոց:

Այժմ Սեղայի անձնագիրը գտնվում է ֆաբրիկայի տիրոջ մոտ, վիզայի ժամկետը լրացել է մեկ տարի առաջ, բայց դա նրան չի անհանգստացնում: Սեղան ազատ խոսում է թուրքերեն և կարող է անվախ շրջել քաղաքում: Նա ասում է. «Ես ուստիկանության հետ բարդություններ չունեմ, միշտ կարող եմ նրանց հետ լեզու գտնել, վճարել և խուսափել կալանքից և վտարումից»:

Նա գտնում է, որ իր բախտը բերել է և շատ գոհ է, որ կարողացել է գումար կուտակել՝ հարազատ քաղաքում տուն գնելու համար: Սեղան մտադրված է Հայաստան վերադառնալ 6 ամիս հետո:

## **Ստամբուլում ձայնագրված հարցազրույց**

### **Ակսարայ**

Նախկին բուժաշխատող Հռիփսիմեն Ստամբուլ է եկել 2 տարի առաջ: Նրա ընտանիքը բաղկացած է 10 հոգուց՝ 4 երեխա, 6 մեծահասակ: Ընտանիքի բոլոր մեծահասակ անդամները գործազուրկ են: Երևանում աշխատանք գտնելու հույսը կորցրած՝ որոշել է մեկնել Ստամբուլ, քանի որ լսել է, որ այնտեղ կարելի է լավ վաստակել: Մեկնել է մենակ՝ նույնիսկ ճանապարհածախսի գումար չունենալով: Տոմսի արժեքը վճարել չի կարողացել, ուստի ավտոբուսային ընկերության հետ պայմանավորվել է, որ պարտքը կվճարի առաջին աշխատավարձով՝ աշխատաքի անցնելուց անմիջապես հետո: Փոխարենը գրավ է թողել անձնագիրը: Ստամբուլում ծանոթներ չի ունեցել: Ստամբուլ հասնելուն պես, Հռիփսիմեն անմիջապես դիմում է աշխատանքի տեղավորման գործակալություն: Շուտով աշխատանք է գտնում, քանի որ որոշ չափով թուրքերեն գիտեր: Նրան առաջարկում են խնամել երկու տարեց մարդկանց՝ ամսեկան 250 դոլլար վճարի դիմաց: Առաջին աշխատավարձով նա ավտոբուսային ընկերությանը վճարում է տոմսի



արժեքը և ետ ստանում անձնագիրը: Ապրել է աշխատանքի վայրում՝ թուրքերի ընտանիքում, քանի որ հիվանդներին խնամելու համար անհրաժեշտ էր նրա մշտական ներկայությունը: Աշխատանքը ծանր էր և գրեթե առանց հանգստյան օրերի: Հազվադեպ էր հնարավոր լինում տնից դուրս գալ: Անձնագիրը մշտապես գտնվել է տան տերերի մոտ: Արդեն 2 տարի է, վիզայի ժամկետը լրացել է: Երկու տարվա ընթացքում Հռիփսիմեն ընտանիքին պարբերաբար գումար էր ուղարկել, բայց այդպես էլ չէր կարողացել բավարար գումար կուտակել: Հռիփսիմեն պատրաստվում է վերադառնալ Երևան՝ աղջկա առողջության կտրուկ վատթարացման պատճառով: Նա հնարավորություն ունի իր հետ վերցնել անձնական իրերը, որոնց մի մասը նվիրել են տան տերերը:

Հռիփսիմեի խոսքերից պարզվեց, որ Երևանից ժամանող ավտոբուսները դիմավորում են մեր հայրենակիցները, որոնք արդեն երկար ժամանակ է հիմնվել են Ստամբուլում: Նրանց բիզնեսը կայանում է նրանում, որ ցանկացողներին ապահովում են կացարանով և խոստանում աշխատանքի տեղավորել: Հայտնի «գործարարներ» Ս.-ի և Ա.-ի տանը ապրում են մեծաթիվ կանայք, որոնք պարտքեր կուտակելով՝ ամիսներով բնակվում են այդտեղ: Ս.-ն և Ա.-ն այդ կանանց միտումնավոր աշխատանքի չեն տեղավորում՝ դրանով իսկ նրանց զցելով պարտքային կախման մեջ:

## **Տրապիզոնում ձայնագրված հարցազրույց**

### **Ռուսական շուկա**

Հասնիկը 62 տարեկան է, ազգությամբ հայ, ապրում է Թբիլիսիում, արդեն 4 տարի է, Ռուսական շուկայում գրադվում է մանրամեծաձախ առևտրով: Անհրաժեշտության դեպքում մեկնում է տուն, իշխանությունների հետ խնդիրներ չունի, որովհետև հստակ պահպանում է վիզային-անձնագրային ռեժիմը: Նա համարում է, որ տեղական իշխանությունները նպաստում են առևտրին, օրինակ, Ռուսական շուկայում շատ մատչելի է տեղի վարձավճարը՝ 4 մլն լիբ (մոտ 3,5 դոլլար) երկու շաբաթվա համար: Ցածր է նաև բնակարանի վարձը, այն կազմում է 3 հոգու համար ամսեկան 30 դոլլար:

Շուկայում վաճառվում է մաքսանենգ ապրանք Հնդկաստանից և Չինաստանից, որը չի հարկվում: Այս ամենով Տրապիզոնի շուկան գրավում է առևտրականներին:

Հասնիկի խոսքերից երևում է, որ նախկինում շուկայում առևտուր էին անում Հայաստանից եկած կանայք, բայց վերջին 2 ամիսների ընթացքում նրանք չկան: Այժմ շուկայում աշխատում են հայ կանայք Թբիլիսիից:

Ռուսական շուկային հարող փողոցում մենք նկատեցինք մեծաթիվ երիտասարդ աղջիկների: Հասմիկն ասում է, որ նրանք տարբեր ազգության են /հայուհիներ, վրացուհիներ, ադրբեջանուհիներ, ռուսներ, ուկրաինացիներ, մոլդովացիներ, ուզբեկներ/, որոնք մարմնավաճառությամբ են զբաղվում: Նրանք ապրում են փոքր հյուրանոցներում կավատների հսկողության տակ: Հաճախորդ գտնելու ակնկալիքով հավաքվում են սրճարանում ժամը 12-ից, ոմանք էլ ուղղակի կանգնում են փողոցում: Հասմիկը հանդիպել է երիտասարդ և միջին տարիքի հայուհիներ, որոնք երբեմն ինչ-որ գումաներ են կատարում շուկայում, նրանց մշտապես ուղեկցում են թուրք տերերը:

Նա ասում է. «Առիթի դեպքում մեզ՝ հայերիս, նախատում են. ահա ձեր աղջիկները կանգնում են փողոցում, մարմնավաճառությամբ զբաղվում թուրքերի հետ: Մենք ամաչում ենք նրանց փոխարեն: Ես լսել եմ, որ որոշ աղջիկներ տեղացի թուրքերի հետ են ամուսնանում»:

Այն հարցին, թե արդյո՞ք աղջիկներից որևիցե մեկն իրենից օգնություն չի խնդրել, կամ արդյո՞ք նա չի լսել թուրք տերերից փախուստի դեպքերի մասին, նա տվեց բացասական պատասխան:

Հասմիկը համաձայնեց տարածել «Հույս և օգնություն» ՀԿ-ի «Օգնության հեռախոս» թեժ գծի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող բուկլետները մեր քաղաքացիների շրջանում, ովքեր առևտուր էին անում շուկայում և եթե հնարավորություն ընձեռվի՝ մարմնավաճառությամբ զբաղվող աղջիկների շրջանում:

Նա համարում է, որ մենք մեր ջանքերը պիտի ուղղենք թրաֆիքինգի մասին բնակչության և հատկապես Հայաստանի երիտասարդության իրազեկության բարձրացմանը, ինչը կնվազեցնի այն հայուհիների թիվը, որոնք մեկնում են Թուրքիա իրենց արժանապատվությունը նսեմացնող աշխատանքներ կատարելու:

## **Ստամբուլում ձայնագրված հարցազրույց**

### **Կումկապի**

Սանջարը 65 տարեկան է, ազգությամբ թուրք, մայրը՝ հայուհի: Խոսում է ռուսերեն: Ապրում է մենակ, թեև ունի ընտանիք: Լավ ծանոթ է հայ անօրինական միգրանտների, կավատ հայերի, տուրիստական գործակալությունների ներկայացուցիչների հետ, որոնք իրականացնում են Հայաստանի քաղաքացիների փոխադրումներ, տեղեկություններ ունի թրաֆիքինգի գոհերի մասին: Նրա տանը ապաստանել են շատ կանայք Հայաստանից, որոնք չեն ունեցել ապաստարան և գոյության միջոցներ: Սանջարը օգնել է նրանց աշխատանք գտնել: Բայց նա կարծում է, որ Թուրքիա ժամանած կանանց 90%-ն իրենց արժանավայել չեն պահում՝ գողություն են անում այն տներից, որտեղ աշխատում են, զբաղվում են մարմնավաճառությամբ, ոմանք էլ ստեղծել են լավ կազմակերպված ցանց,

որը զբաղվում է մարդկանց առևտրով: Նա թվեց կանանց և տղամարդկանց անուններ, որոնք հավաքագրում և Թուրքիա են տեղափոխում հայերին: Աշխատանքի տեղավորելու պատրվակով սրանք վերցնում են անձնագրերը, երկար ժամանակ աշխատանք չեն գտնում, բնակարանի և սննդի համար պարտքեր են կուտակում, և հենց այսպես էլ պահում են նրանց կախվածության մեջ: Որոշ կավատներ կանանց ուղարկում են հարուստ մարդկանց տներ հավաքարար կամ աղախին աշխատելու, իսկ այդ կանայք այնտեղից կամ փող են գողանում, կամ ոսկյա իրեր: Կավատները տեղյակ են այդ գողությունների մասին: Նրանք վերցնում են գողոնը իրենց պարտքի դիմաց: Այդ պատճառով էլ հիմա հարուստ մարդկանցից շատերը հայերին աշխատանքի չեն վերցնում: Նրանք հիմնականում կատարում են ցածր վարձատրվող՝ ափսե լվացողի աշխատանք:

Հաճախ կանայք չեն կարողանում աշխատանք գտնել և ներգրավվում են մարմնավաճառության մեջ: Տղամարդիկ, աշխատանք չգտնելով, գողություն են անում:

Նա պատմեց, որ Գյումրիից ժամանած ոմն Ա. իր տնից գողացել է բավականին մեծ գումար և անհետացել: Սանջարը նրա մասին հայտնել է ոստիկանություն:

### **Մուրադի պատմությունը**

#### **Չայնագրված է Ստամբուլում, Էմինոյ**

Մուրադը ծնվել է Արտաշատից ոչ հեռու գտնվող մի գյուղում: 2 տարի առաջ մեկնել է Թուրքիա՝ աշխատանքի: Նրան խոստացել էին 6 ամսվա աշխատանք շինարարությունում՝ ամսեկան 400 դոլլար աշխատավարձով: Աշխատանքի մասին իմացել էր իր երևանցի ծանոթ Ռուբենից, որը նույնպես պատրաստվում էր մեկնել աշխատանքի: Աշխատանքի համար հավաքագրում էր ոմն Սվետան՝ Ռուբենի ծանոթը: Նա Հայաստանի քաղաքացիներին Թուրքիայում աշխատանքի տեղավորելու փորձ ուներ: Ըստ Ռուբենի, նա մինչ այդ էլ տղամարդկանց խմբեր էր տարել աշխատանքի, որոնք վերադարձել էին գումարով և գոհ էին: Սվետան իր ծառայությունների դիմաց վերցնում էր տոկոսներ, որը Ստամբուլի տոմսի արժեքի հետ միասին կազմում էր 130 դոլլար: Մուրադի հետ մեկնում են ևս ութ տղամարդ: Ավտոբուսով Ստամբուլ ժամանելուն պես՝ Սվետան վերցնում է անձնագրերը՝ իբր գործատու կազմակերպության հետ պայմանագիր կնքելու նպատակով: Մի քանի օրից անձնագրերը վերադարձնում է, իսկ ինքն անհետանում: Սվետայի անհետանալուց անմիջապես հետո, բնակարանի տերը հրաժարվել է առանց վարձավճարի նրանց տրամադրել բնակարանը: Ինչպես պարզվեց, վճարված է եղել ընդամենը 10 օրվա համար: Տղամարդիկ տեղափոխվել են ապրելու այն շինարարությունում, որտեղ աշխատում էին և որտեղ բնակության պայմանները խիստ վատն էին: Սկզբնական 3 ամսում տերը վճարել է նրանց 300 դոլլար՝ ամեն ամսի դիմաց,

որից 50 դուլարը ետ է վերցրել որպես բնակվարձ, 80-ը տղամարդիկ ծախսել են սննդի և ծխախոտի վրա: Շինարարությունում 3 ամիս աշխատելու ընթացքում հնարավորություն են ունեցել դրամ ուղարկել տուն, զանգահարել հարազատներին, բայց հետո նրանց հայտնել են, որ իրենց ծառայությունների կարիքն այլևս չկա: Յուրաքանչյուրը սկսել է ինքնուրույն աշխատանք փնտրել: Որոշ ժամանակ Մուրադը բեռնակիր է աշխատել, հետո շինարար, որից հետո երկար ժամանակ չի աշխատել և սովի է մատնվել: Չնչին խնայողությունները վերջացել են: Մեկ տարի առաջ կորցրել է անձնագիրը: Հիմա աշխատում է կոշիկի ֆաբրիկայում՝ ամսեկան 100 դուլար աշխատավարձի դիմաց, և միաժամանակ այգեպան է մի հարուստ թուրքի տանը: Ֆաբրիկայում աշխատանքը սեզոնային է և շուտով այն կդադարի որոշ ժամանակով: Բնակարան է վարձել Հայաստանից գնացած մի ընտանիքի հետ:

Մոտակա ժամանակներս չի պատրաստվում վերադառնալ Հայաստան, կվերադառնա միայն որոշ գումար հավաքելուց հետո, քանի որ հարկավոր է ձեռք բերել ավտոբուսի տոմս մինչև Երևան, ձևակերպել կորցրած անձնագրի փոխարեն ճամփորդական փաստաթղթեր և գումար հավաքել ընտանիքի կարիքների համար:

Նա անհարմար է զգում ընտանիքի և հարևանների առջև:

## **Սոնայի պատմությունը**

### **Չայնագրվել է Ստամբուլում, Կումկապի**

Սոնան 34 տարեկան է, Երևան քաղաքի բնակիչ: Ընկերուհու հրավերով նա մեկնել է Ստամբուլ աշխատանքի: Ընկերուհին առաջարկել էր դայակի կամ ռեստորանում մատուցողուհու աշխատանք: Նա նաև զգուշացրել էր, որ ծայրահեղ դեպքում ստիպված կլինի ժամանակավոր խնամել տարեց մարդկանց կամ անկողնային հիվանդներին: Սոնան հույս ուներ խոշոր գումար աշխատել, քանի որ երկար տարիներ հիմնական աշխատանք չուներ հայրենիքում: Ընկերուհին խոստացել էր տեղ հասնելուն պես վճարել Երևանից Ստամբուլ ճանապարհածախսը: Սոնան Ստամբուլ է եկել ավտոբուսով, բայց նրան ոչ ոք չի դիմավորել: Պարզվել է, որ ընկերուհին Թուրքիայի արևելքում գտնվող մի քաղաքում է և ծանոթների միջոցով Սոնային խորհուրդ է տվել անմիջապես գալ այնտեղ:

Հայտնվելով առանց ծածկի և դրամի՝ նա ավտոբուսային ընկերության աշխատակիցներից սկսել է հետաքրքրվել այդ քաղաքում աշխատանք գտնելու հնարավորությունների մասին: Երևանից իրեն բերած ավտոբուսի վարորդից տեղեկացել է, որ այն քաղաքում, ուր գտնվում է ընկերուհին, բնակչությունը աղքատ է և ծառայությունների կարիք չունի: Այդ քաղաքում կանայք ներգրավվում են մարմնավաճառության մեջ և այնտեղից ոչ ոք չի վերադառնում: Ավտոբուսային

ընկերության աշխատակիցների հետ պայմանավորվելով՝ նա անձնագիրը գրավ է թողել ճանապարհածախսի դիմաց:

Նրան խորհուրդ են տվել բնակարան գտնել Կումկապիում: Հայերը մի քանի օր նրան ապաստան են տվել: Սոնան ընդամենը 1 շաբաթով ափսե լվացողի աշխատանք է գտել, որը նրան դուր չի եկել, քանի որ այդ ծանր ու կեղտոտ աշխատանքի դիմաց վարձատրում էին շատ քիչ՝ ընդամենը 13 մլն լիր (մոտ 10 դոլլար) շաբաթական: Նա տեղեկացել է, որ նույն թաղամասում կարելի է բնակվել մի թուրքի տանը, իսկ բնակվարձի և սննդի դիմաց մաքրել նրա բնակարանը և խոհանուցում աշխատանք կատարել: Սոնան դիմել է այդ մարդու օգնությանը: Որոշ ժամանակ անց տան տերը կանխիկ դրամի դիմաց առաջարկել է նրան իրեն սեքս ծառայություններ մատուցել:

Հիմա նա շարունակում է ապրել նույն տիրոջ մոտ և փորձում է այլ աշխատանք գտնել, բայց դեռ ապարդյուն:

Սոնայի անձնագիրը դեռևս գտնվում է ավտոբուսային ընկերությունում, վիզայի ժամկետը վաղուց լրացել է:

Նա ասում է, որ Հայաստան կվերադառնա միայն որոշակի գումար աշխատելուց հետո:

## **Մարիայի պատմությունը**

### **Չայնագրվել է Ստամբուլում, Կումկապի**

Մարիան Երևանից է, 46 տարեկան, անցյալում՝ քաղաքի թատրոններից մեկի դերասանուհի: Ունի դուստր և թոռնուհի, ամուսինը մահացել է մի քանի տարի առաջ: Հայտնվելով ծայրահեղ նյութական կարիքի մեջ՝ նա որոշել է վիճակը բարելավել Թուրքիայում լավ աշխատանք գտնելով: Նա ծանոթացել է ոմն Մարիետայի հետ, որը որոշակի վարձատրության դիմաց կանանց խմբեր էր հավաքագրում Ստամբուլում լավ վարձատրվող աշխատանքի համար: Ողջ հարցազրույցի ընթացքում Մ.-ն շատ զգույշ էր և մի քանի անգամ հուզվեց: Մարիետայի մասին մանրամասն խոսել չցանկացավ:

Նա պատմեց, որ 2 տարի առաջ, ունենալով չնչին գումար, եկել է Ստամբուլ ավտոբուսով: Նրան դիմավորել են Մարիետայի ծանոթները, որոնց տանը մի քանի օր ապրելու ընթացքում՝ միաժամանակ աշխատանք է փնտրել: Ինչպես պարզվեց, Մարիետայի ծանոթները չգիտեին, որ նա խոստացել է Մարիային աշխատանքի տեղավորել: Դժվարությամբ ընդունվել է աշխատանքի կարի ֆաբրիկայում, որտեղ վճարում էին շաբաթական 35 մլն լիր (մոտ 26 դոլլար), ստիպված էր վաստակել նաև տանը կոշիկ կարելով՝ 10 զույգի դիմաց վճարում էին մինչև 10 մլն լիր (մոտ 8 դոլլար): Այդ ժամանակ Մարիան սկսել է բնակվել վարձով, որի համար վճարում էր ամսեկան 20 դոլլար,

սակայն պայմանները վատն էին, տանը ջուր չկար, ջուրը բերում էր դույլերով, սենյակը փոքր էր: Գումար տնտեսելու համար՝ իրեն գրկում էր ամեն ինչից, հաճախ քաղցած էր մնում:

Յածր աշխատավարձի և աշխատանքի ծանր պայմանների պատճառով 6 ամիս անց հեռանում է ֆաբրիկայից և հետագա 4 ամիսների ընթացքում չի աշխատում: Ապա, ռեստորանում ափսե լվացողի աշխատանք է գտնում, որտեղ շաբաթական 13 մլն լիր (մոտ 10 դոլլար) աշխատավարձ են խոստանում: Ռեստորանում կարելի էր սնվել և այդպիսով գումար տնտեսել: Բայց այստեղ նա ռեստորանի տիրոջ կողմից սեռական ոտնձգությունների է ենթարկվում և չհանդուրժելու համար հեռացվում է աշխատանքից: Չկարողանալով վճարել բնակարանի վարձը՝ տեղափոխվում է ծանոթի մոտ, որտեղ ապրում է արդեն 5 ամիս: Հիմա նա տնաշխատի կամ հավաքարարի աշխատանք է փնտրում 250-300 դոլլար աշխատավարձով:

Մարիան բարոյապես ընկճված է, նա հաճախ կրկնում է. «Ինձ նսեմացրել են, նսեմացրել»: Առողջական խնդիրներ ունի, բարձր արյան ճնշում, սրտի շրջանում ցավեր, դեպրեսիա, չի ուզում խոսել մարդկանց հետ: Նա իրեն է մեղադրում՝ խաբեբաներին հավատալու ու այստեղ գալու համար: Որոշել է մի քիչ գումար վաստակել և 3-4 ամիս հետո վերադառնալ Հայաստան: Անձնագիրը գտնվում է ընկերուհու մոտ: Վիզայի ժամկետը լրացել է 2 տարի առաջ:

Մարիան խորհուրդ չի տալիս կանանց աշխատանք փնտրելու համար մեկնել Թուրքիա, նամանավանդ, եթե նրանք չեն տիրապետում թուրքերենին, ինչն էլ նվազեցնում է շատ թե քիչ լավ վարձատրվող աշխատանք գտնելու հնարավորությունը:

## **Ռ-անայի պատմությունը**

### **Չայնագրված է Տրապիզոնի ոստիկանատանը**

Ռ-անան 19 տարեկան է, ազգությամբ ադրբեջանցի: Ավարտել է տասնամյա դպրոցը: Մայրը դպրոցում ուսուցչուհի է, հայրը մահացել է: Քեմալ անունով նրա ծանոթը Թուրքիայում աշխատանք է առաջարկում: Խոստանում է Տրապիզոնում վարսահարդարի լավ վարձատրվող աշխատանքի տեղավորել: Դա չորս ամիս առաջ էր: Հայրենի Շ. քաղաքից Քեմալը նրան Բաքու է տանում, ապա ավտոբուսով՝ վարորդի ուղեկցությամբ Բաքվից ուղարկում է ք. Խոպա (Թուրքիա): Սահմանի վրա վիզա են ձևակերպում մեկ ամսով: Խոպայում նրան դիմավորում են երկու երիտասարդ թուրքեր, որոնք վարորդին վճարում են Ռ-անայի տոմսի արժեքը: Նրան բերում են Տրապիզոն՝ Իլդիզ հյուրանոց: Գյուլշեն անունով կավատը ատրճանակով սպառնալով՝ վերցնում է անձնագիրը և ասում է, որ Ռ-անան պետք է աշխատի որպես մարմնավաճառ: Հաճախուղներին սպասարկելուց

հրաժարվելու պատճառով նրան բազմիցս ծեծում են: Այդ հյուրանոցում գտնվում էին հայուհիներ, վրացուհիներ, ռուս և ուկրաինացի կանայք: Գյուլշենը նրանց հետ դաժան էր վարվում և բոլոր աղջիկներին սպառնում էր չենթարկվելու դեպքում հաշվեհարդար տեսնել: Նա սպառնացել է սպանել 18 ամյա վրացուհի Ռուսիկոյին՝ փախուստի փորձ կատարելու համար:

Հաճախորդները գումարը տալիս էին կավատին, աղջիկներն ընդհանրապես փող չունեին: Նրանց անընդհատ հետևում էին: Հաճախորդների հետ կապ էին ստեղծում «Մավիկեշ» և «Պալիմե» սրճարաններում: «Մավիկեշ»-ում աշխատում էր 6 աղջիկ, «Պալիմե»-ում՝ 10: Գիշերվա համար հաճախորդները վճարում էին 100 դոլլար, ժամի համար 40 մլն լիր (32 դոլլար): Մեկ օր հաճախորդի մոտ գնալիս Ռ-անան դիմում է փախուստի: Նա ճանապարհին տեսնում է ոստիկանության մեքենան և տաքսիից դուրս թռչում: Ոստիկանությունը նրա ցուցմունքներով գտնում է մարմնավաճառների խմբին, սրճարանը փակում են, ձերբակալում են բոլոր կազմակերպիչներին, բայց մյուս աղջիկները հրաժարվում են նրանց դեմ ցուցմունք տալուց: Միայն Ռ-անայի ցուցմունքների հիման վրա հնարավոր չէր գործ հարուցել, և մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչներին ու աղջիկներին ազատ են արձակում: Ռ-անան 2 շաբաթ մնացել էր ոստիկանատանը: Ոստիկանները նրան տանում են Անկարայում ադրբեջանական հյուպատոսություն՝ տուն վերադառնալու նպատակով ճամփորդական փաստաթղթեր ձևակերպելու համար: Փաստաթղթերի համար նա վճարում է 40 դոլլար: Այս գումարը մի ծանոթից պարտք է վերցնում, որին պատահաբար հանդիպում է Տրապիզոնի ոստիկանատանը:

Հայաստանի և Վրաստանի փորձագետների խումբը որոշեց, որ այս վտարված աղջկան անհրաժեշտ է ուղեկցել մինչև Ադրբեջանի սահմանը և հանձնել հարազատներին: Ոստիկանները մտադրված էին նրան ուղեկցել մինչև վրացական սահմանը, որտեղից նա ավտոբուսով պետք է մենակ հասներ Բաքու: Մենք չէինք բացառում, որ ավտոբուսի վարորդը կարող է լինել մարդկանց առևտրով զբաղվող հանցավոր խմբի անդամ: Մինչև սահմանը նրան ուղեկցեցին թուրք ոստիկանը և վրացի հոգեբանը: Մենք նախօրոք պայմանավորվել էինք Բաթումի «Տանադգոմա» ՀԿ-ի ներկայացուցիչների և վրացական սահմանապահների հետ, որպեսզի վերջիններս նրանց դիմավորեն Սարփիում: Բաթումից Ռ-անան զանգահարեց մորը: Գիշերելով Բաթումում՝ հաջորդ օրը նրանք Թբիլիսիով հասան մինչև Վրաստանի և Ադրբեջանի սահմանը՝ Կարմիր կամուրջ, որտեղ Ռ-անային հանձնեցին եղբորը:

**Գոհարի պատմությունը**

**Չայնագրված է Երևանում**

Գոհարը ծնվել է Երևանում 1960թ.-ին: Անուսնալուծված է, ունի 16-ամյա որդի: Ունի բարձրագույն կրթություն: Երկար ժամանակ գործազուրկ է եղել: Վերջին տարիներին աշխատել է որպես կթվորուհի՝ գյուղի ֆերմայում: 2003թ.-ին նրա հին ծանոթը առաջարկել է հավաքարարի աշխատանք Ստամբուլում՝ ամսեկան 300 դոլլար աշխատավարձով: Ծանոթի խոսքերով իր քույրը՝ Սուսաննան, այնտեղ ունի աշխատանքի տեղավորման գործակալություն: Ըստ նախնական պայմանավորվածության, ճանապարհաժախսը պետք է վճարեր Գոհարը և Ստամբուլ հասնելուն պես նրան պիտի տեղավորեին աշխատանքի: Տոմսը գնելու համար Գոհարը պարտք է վերցնում: Մինչև Ստամբուլ հասնում է ավտոբուսով, որտեղ նրան դիմավորում է Սուսաննան և տանում է իր տուն, որը վարձակալված էր Կումկապիում: Այնտեղ ապրում էին ևս մոտ 20 հայ կանայք: Նրանք սպասում էին աշխատանքի տեղավորման իրենց հերթին, ինչը և նրանց խոստացել էր Սուսաննան: Կանայք պետք է վճարեին բնակվարձը, բայց ժամանակի ընթացքում նրանք պարտքեր էին կուտակել և արդեն ընկել էին Սուսաննայից պարտքի կախվածության մեջ: Բոլոր բնակիչների, ինչպես նաև Գոհարի անձնագրերը նա պահում էր իր մոտ: Գոհարի ինչպես և մյուսների աշխատանքի տեղավորման հարցը Սուսաննան ձգձգում էր: Երբ Գոհարը բողոքել և պահանջել է գտնել իրեն խոստացված աշխատանքը (քանի որ նա 2 ամսվա ընթացքում կուտակել էր արդեն 200 դոլլարի պարտք), Սուսաննան սպառնացել է նրան վաճառել քրդերին: Մի անգամ Գոհարը պարզում է, որ սրճարանում աշխատանք կա, փախչում է Սուսաննայի մոտից և աշխատանքի տեղավորվում սրճարանում՝ որպես ավստ լվացող՝ 300 մլն լիր ամսական աշխատավարձով (մոտ 210 դոլլար): Ոստիկանության ստուգայցերի ժամանակ նա թաքնվում էր սրճարանից դուրս: Նա մահճակալ էր վարձում 50 մլն լիր գումարի դիմաց (մոտ 40 դոլլար): Գոհարը պարբերաբար զանգահարում էր Սուսաննային և պահանջում էր վերադարձնել անձնագիրը, իսկ վերջինս պատասխանում էր, որ անձնագիրը կտա միայն պարտքը վերադարձնելուց հետո: Գոհարը սրճարանում աշխատում է 2 ամիս, որից հետո ստիպված էր նոր աշխատանք փնտրել: Աշխատանքի է ընդունվում երկու ծերունիների մոտ որպես խնամող, բայց մի քանի շաբաթ անց նրանց տեղափոխում են ծերանոց և Գոհարը նորից անգործ է մնում: Աշխատանքի տեղավորման գրասենյակի միջոցով նա աղախինի աշխատատեղ է գտնում Բողրում քաղաքում: Տանտիրուհու հետ բանավոր պայմանավորվածության համաձայն, աշխատավարձը պիտի կազմեր ամսեկան 300 դոլլար: Ստամբուլից Բողրում ճանապարհաժախսը վճարում է տանտիրուհին: 2,5 ամսվա աշխատանքի դիմաց Գոհարը չէր վարձատրվել, ինչի մասին և մի քանի անգամ հիշեցրել էր տանտիրուհուն: Մի անգամ հերթական հիշեցումից հետո տանտիրուհին մեծ աղմուկ է բարձրացնում և հայտնում ոստիկանությանը, որ իր աղախինն անձնագիր չունի: Գոհարին ձերբակալում են և մեկ ամիս նա բանտում է գտնվում: Նրա հետ նույն խցում գտնվում էին



մոլորվացի և ռուս կանայք: Նրանք օգնում էին Գոհարին հագուստով և սննդով: Հարցաքննությունների ժամանակ Գոհարը պնդում էր, որ կորցրել է անձնագիրը՝ թաքցնելով, որ այն Սուսաննայի մոտ է: Ոստիկանները և բանտախցի ընկերուհիները բացատրում են նրան, որ անձնագրի բացակայության դեպքում հայրենիք վերադառնալը կձգձգվի 2-3 ամսով՝ թղթաբանության պատճառով: Ադրբեջանուհի Տ.-ն օգնում էր բանտախցի բոլոր աղջիկներին, նրա բջջային հեռախոսից Գոհարը մի քանի անգամ զանգահարել է Սուսաննային՝ Ստամբուլ՝ պահանջելով վերադարձնել իր անձնագիրը: Սուսաննայի հետ խոսում են նաև ոստիկանները և բանտախցի աղջիկները՝ զգուշացնելով, որ կտեղեկացնեն Ստամբուլի ոստիկանությանը նրա քրեածին գործունեության մասին: 4 շաբաթ անց նա փոստով, Բողրումի ոստիկանության հասցեով ուղարկում է անձնագիրը: Նախքան վտարումը Գոհարին տեղեկացնում են, որ հնարավոր է իրեն սահմանի վրա հանձնեն հայաստանյան մի ՀԿ-ի աշխատակիցների: Գոհարը վախեցած էր և չէր ուզում հանդիպել կողմնակի անձանց հետ: Նրա վերադարձի գործում մասնակցություն ուներ «HRDF» թուրքական ՀԿ-ն, որը հանդես եկավ որպես միջնորդ թուրքական ոստիկանության և հայկական ՀԿ-ի միջև բանակցությունների ընթացքում: Գոհարին վտարեցին մի խմբի հետ, որի կազմում կային 2 ադրբեջանուհի և 1 ռուս կին: Սահմանի վրա՝ Մարփիում, ըստ վրացական կազմակերպությունների հետ պայմանավորվածության, Գոհարին դիմավորեց «Տանադգոմա-Բաթում» ՀԿ-ից մեր գործընկերը, որն ուղեկցեց նրան մինչև Թբիլիսի և հանձնեց «Մարդու ներդաշնակ զարգացման աջակցության ընկերություն» ՀԿ-ի («PHDS») ներկայացուցչին: Վերջինս ուղեկցեց նրան մինչև Հայաստանի սահմանը (Բագրատաշեն), որտեղ նրան դիմավորեցին «Հույս և օգնություն» ՀԿ-ի ներկայացուցիչները և ուղեկցեցին Երևան՝ կազմակերպության ապաստարան: Հայրենիք վերադառնալիս նա ուներ 20 դոլլար և հագուստ, որը նվեր էր ստացել բանտախցի աղջիկներից:

## **Մարդկանց առևտրի բնագավառում միջազգային և ազգային օրենսդրությունը**

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել և վավերացրել է բոլոր հիմնական միջազգային Կոնվենցիաները, արձանագրությունները և փաստաթղթերը, որոնք սահմանում են մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և մարդկանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ պետությունների պարտականությունները, պետությունների կառավարությունների փոխհամագործակցությունը հանցավորության դեմ ուղղված գործունեության ոլորտում:

1. «Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիա»

Ընդունվել է 10.12.1948թ.

2. «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիա

Հայաստանը միացել է 09.06.1993թ.

3. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի Կոնվենցիան և կոնվենցիան լրացնող «Մարդկանց՝ հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման և կասեցման և դրանց համար պատժի մասին» արձանագրությունը:

Ընդունված է 2000թ. Պալերմոյում

Հայաստանը վավերացրել է 01.07.2003թ.

4. «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիա

Հայաստանը վավերացրել է 01.07.92թ.

5. «Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» ՄԱԿ-ի դեկլարացիա

ընդունվել է 1993թ.

6. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական Դեկլարացիան

7. Համաձայնագիր Սևծովյան Տնտեսական Համագործակցության անդամ պետությունների կառավարությունների միջև՝ հանցավորության՝ հատկապես նրա կազմակերպված ձևերի դեմ պայքարի շրջանակներում համագործակցության մասին:

Ընդունված՝ 20.10.1998թ.

Հայաստանը միացել է 13.09.2003թ.

**Մարդկանց Իրավունքների Համընդհանուր Դեկլարացիան** 1948թ. ամրագրեց մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները: Դրանք են կյանքի իրավունքը, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, տանջանքների, դաժան, անմարդկային կամ մարդու արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի և պատժի արգելքը, ստրկության կամ անազատ վիճակի արգելքը. արգելվում են ստրկության և ստրկավաճառության բոլոր ձևերը, օրենքի առաջ հավասարությունը,

աշխատանքի իրավունքը, աշխատանքի ընտրության ազատության և բարենպաստ աշխատանքային պայմանների իրավունքը, հանգստի իրավունքը<sup>14</sup>:

2000թ. Պալերմոյում ընդունված **«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Կոնվենցիան** և լրացուցիչ Արձանագրությունը «Մարդկանց՝ հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման և խափանման և դրա համար պատժի մասին» և «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական մուտքի դեմ» Արձանագրությունը վավերացվել են ՀՀ կողմից: 2000թ. ընդունված այս Կոնվենցիայի նպատակն է օգնություն ցուցաբերել միջազգային կազմակերպված հանցավորության ավելի արդյունավետ կանխարգելման հարցում: Կոնվենցիան պարտադրում է պետություններին ներքին օրենսդրության սկզբունքներին համաձայն ընդունել օրենսդրական և այլ միջոցներ՝ փողերի լվացումը և կոռուպցիան քրեականացնելու համար: Կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է իրավաբանական անձանց պատասխանատվությունը ծանր հանցագործություններում մասնակցության համար, որոնք կազմակերպվել են հանցավոր խմբի կողմից: Իրավաբանական անձինք կարող են կրել քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվություն: Համաձայն Կոնվենցիայի 11-րդ հոդվածի մասնակից պետությունները պարտավորվում են կիրառել այդ հանցագործությանը համարժեք պատժամիջոցներ:

Կոնվենցիայի 12-րդ հոդվածում ասվում է մասնակից պետությունների կողմից այնպիսի իրավական միջոցների ընդունման մասին, որոնք կարող են պահանջվել՝ հանցագործություններից կամ սեփականությունից ստացված եկամուտների բռնագրավման ապահովման համար, և որոնց արժեքը համապատասխանում է այդպիսի եկամուտների արժեքին:

Կոնվենցիան նշում է նաև այդ բնագավառում համագործակցության մասին:

13-րդ հոդվածն ասում է. «Մասնակից պետությունը, որը մյուս մասնակից պետությունից, որի իրավասության ներքո է գտնվում սույն Կոնվենցիայով ընդգրկված որևէ հանցագործություն, խնդրանք է ստացել սույն Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված հանցագործություններից ստացված եկամուտների, գույքի, սարքավորումների կամ հանցագործության կատարման այլ միջոցների բռնագրավման մասին, որոնք գտնվում են նրա տարածքում, առավելագույն չափով, որքանով հնարավոր է իր ներքին իրավական համակարգի շրջանակներում»:

Կոնվենցիան կարգավորում է նաև մարդկանց հանձնումը և դատապարտվածների փոխանցումը: 18-րդ հոդվածում խոսվում է փոխադարձ իրավական օգնության տրամադրման մասին, այսինքն՝ հետաքննության, քրեական հետապնդման և դատական քննության վերաբերյալ միմյանց ամենալայն իրավական օգնություն ցուցաբերելու մասին,

<sup>14</sup> «Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիա» 1948թ, հոդվածներ 3,4,5,7,13,23,24

եթե մասնակից պետությունը բավականաչափ հիմքեր ունի կասկածելու, որ հանցագործությունը իր բնույթով անդրազգային է, և որ տուժածները, վկաները, եկամուտները, հանցագործություն կատարելու միջոցները կամ այդպիսի հանցագործությունների վերաբերյալ ապացույցները գտնվում են հարցվող մասնակից պետությունում, ինչպես նաև եթե այդպիսի հանցագործությունը կատարվել է կազմակերպված հանցավոր խմբի կողմից:

Կոնվենցիան նախատեսում է նաև համատեղ հետաքննություններ, հետաքննության հատուկ մեթոդների (Էլեկտրոնային դիտման, ազենտուրային դիտման հնարավորություն), հատուկ միջոցառումների կիրառման համար (վկաների պաշտպանություն, օգնություն տուժողներին) երկկողմանի կամ բազմակողմանի պայմանագրերի կնքում: Կոնվենցիան նաև պարտավորեցնում է պետություններին՝ ձեռնարկել օրենսդրական կամ այլ միջոցներ, որպեսզի նվազեցվեն կազմակերպված խմբերի հանցագործություններից ստացված եկամուտները օրինական շուկաներում օգտագործելու հնարավորությունները: «Մարդկանց՝ հատկապես կանանց և երեխաների առևտրի, կանխարգելման և կասեցման և դրանց համար պատժի մասին» Արձանագրությունը (այսուհետ՝ Պալերմոյի արձանագրություն) իր հերթին սահմանում է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի նպատակը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և երեխաներին, մարդկանց թրաֆիքինգի գոհերի պաշտպանությանն ու օգնությանը՝ մարդկանց իրավունքներն առավելագույնս հարգելով: Արձանագրության պայմանների համաձայն մասնակից պետությունները պետք է ապահովեն մարդկանց առևտրի գոհի կյանքի և անձի պաշտպանությունը, այդ թվում նաև դատավարության գաղտնիության միջոցով: Յուրաքանչյուր մասնակից պետություն դիտարկում է մարդկանց թրաֆիքինգի գոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման ապահովման նպատակով միջոցների իրականացումը, այդ թվում նաև համակործակցությունը այլ, ոչ պետական կազմակերպությունների հետ: Արձանագրությունը նախատեսում է նաև օրենսդրական և այլ միջոցների կիրառման հնարավորությունը, որոնք թույլ են տալիս մարդկանց առևտրի գոհերին՝ մնալ ժամանման երկրի տարածքում ժամանակավոր կամ հիմնական հիմունքներով:

«Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2000թ. Կոնվենցիայի ֆակուլտատիվ Արձանագրությունը, որը վերաբերում է մարդկանց թրաֆիքինգին, մանկական մարմնավաճառությանը և մանկական պոռնոկազրությանը, ընդունելով երեխայի իրավունքի պաշտպանությունը տնտեսական շահագործումից և ցանկացած աշխատանքից, որը կարող է վտանգ ներկայացնել նրա առողջությանը կամ վնաս հասցնել նրա ֆիզիկական, մտավոր, հոգեկան, բարոյական և սոցիալական զարգացմանը, ամրագրում է մասնակից պետությունների պարտականությունը՝ արգելել մարդկանց

առևտուրը, մանկական մարմնավաճառությունը և մանկական պոռնոկազրույթունը, քրեականացնել այդ գործողությունները, սահմանել իրավական և վարչական միջոցներ, որպեսզի մարդիկ, ովքեր առնչվում են երեխաների որդեգրման հետ, գործեն միջազգային ակտերի և ազգային օրենսդրության դրույթների համաձայն:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի 1979թ. Կոնվենցիան վավերացվել է ՀՀ կողմից 1993թ. կարևոր տեղ է գրավում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային պայմանագրերի շարքում: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է. «Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, ներառյալ օրենսդրական միջոցները, կանանց վաճառքի և կանանց մարմնավաճառության շահագործման բոլոր ձևերի վերացման համար»:

«Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» Դեկլարացիան դատապարտում է կանանց նկատմամբ բռնության ցանկացած ձև, այդ թվում նաև ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնությունը, ինչպես նաև այդպիսի գործողությունների իրականացման սպառնալիքը, հարկադրական կամ կամայական ազատությունից զրկումը, և կոչ է անում մասնակից պետություններին՝ ներդնել բոլոր ջանքերը սույն դեկլարացիայի պահանջները կատարելու համար<sup>15</sup>:

Միևնույն ժամանակ, մի շարք միջազգային ակտեր, որոնք մեծ նշանակություն ունեն թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում, չեն վավերացվել ՀՀ կողմից:

«Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը համանման այլ գործողությունների ու դրանք իրականացնող հաստատությունների վերացման մասին» Լրացուցիչ Կոնվենցիան սահմանում է ազատությունը որպես մարդու բնածին իրավունք և հաստատում է, որ ոչ ոք չպետք է գտնվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում: Կոնվենցիան արգելում է ստրկությունը և ստրկավաճառությունը: Ստրկությանը համանման գործողություններ են պարտքից կախվածությունը, կամ այլ իրավիճակներ, որոնք ծագում են պարտապանի կողմից կամ նրանից կախված անձի կողմից իր աշխատանքը որպես գրավ դնելու հետևանքով<sup>16</sup>, ճորտական վիճակը, այսինքն՝ հողի այնպիսի օգտագործումը, որի դեպքում օգտվողը օրենքով, սովորույթով կամ ըստ համաձայնության պարտավոր է ապրել և աշխատել մեկ այլ անձին պատկանող հողամասում կամ որոշակի աշխատանք կատարել այդ մարդու համար և չի կարող փոխել իր վիճակը<sup>17</sup>, ցանկացած գործունեություն կամ սովորույթ, համաձայն որի, կնոջը

<sup>15</sup> «Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» Դեկլարացիա, 1993թ., հ.1, 2

<sup>16</sup> «Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը համանման այլ գործողությունների ու դրանք իրականացնող հաստատությունների վերացման մասին» Լրացուցիչ Կոնվենցիա, 07.09.1956թ., հ.1

<sup>17</sup> «Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը նման այլ ինստիտուտների և սովորույթների վերացման մասին» Լրացուցիչ Կոնվենցիա, 07.09.1956թ., հ.1

խոստանում են ամուսնացնել դրամական վարձատրության դիմաց, բնական փոխհատուցման դիմաց և այլն:

Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի վերաբերյալ ԱՄԿ #29 Կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին՝ քրեորեն հետապնդել հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մեջ ներգրավելը և ապահովել օրենքով նախատեսված սանկցիաների իրական կատարումը և արդյունավետությունը<sup>18</sup>:

### **Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը**

Նախքան Քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելը թրաֆիքինգով զբաղվող մարդկանց պատժելու համար կիրառվում էին այնպիսի հոդվածներ, ինչպիսիք են մարդու առևանգումը (հոդված 131), սեքսուալ բնույթի բռնի գործողությունները (հոդված 139), կավատությունը (հոդված 262):

2003թ. օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ Քրեական օրենսգիրքը քրեականացրեց մարդկանց առևտուրը (թրաֆիքինգը) և սահմանեց այն որպես առանձին հանցակազմ (հոդված 132):

#### **Հոդված 132. Մարդկանց առևտուր**

1. Մարդկանց առևտուրը, այսինքն՝ մարդուն գնելը կամ վաճառելը, հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը, որը կատարվել է նրան պռոնկության կամ սեռական այլ շահագործման, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների, ստրկության կամ ստրկությանը հավասարագոր վիճակի հասցնելու կամ կախյալ վիճակի մեջ դնելու կամ մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելու նպատակով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- 3) անչափահասի նկատմամբ

---

<sup>18</sup> Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին ԱՄԿ #29 Կոնվենցիա, 28.06.1930թ., հ.25

4) երկու կամ ավելի անձանց կամ հաշմանդամի նկատմամբ

5) պաշտոնական դիրքն օգտագործելով,

6) տուժողին պետական սահմանն ապօրինաբար հատելով կամ նրան ապօրինի օտարերկրյա պետությունում պահելով,

7) տուժողի անօգնական վիճակն օգտագործելով՝

**պատժվում են ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:**

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք

1) կատարվել են կազմակերպված խմբի կողմից,

2) անգուշությամբ առաջացրել են տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

**պատժվում են ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով**

Քրեական Օրենսգրքում կատարված փոփոխություններից հետո մարդկանց առևտրի վերաբերյալ հայկական օրենսդրությունը սկսեց համապատասխանել միջազգայինին, բայց կան մաս բացթողումներ:

**Առաջին:** Մարդկանց առևտրի/թրաֆիքինգի գոհերի իրավունքների պաշտպանության տեսակետից հայկական իրավական դաշտը հնարավորություն չի տալիս լիարժեք իրականացնել նրանց պաշտպանությունը, քանզի մարդկանց թրաֆիքինգի գոհերի իրավունքների պաշտպանության ընթացքը սկսվում է միայն մարդկանց թրաֆիքինգից տուժած անձանց որպես տուժող ներգրավելուց հետո, ինչը թույլ կտա ճանաչել և հաշվի առնել ՀՀ Քրեական Դատավարության Օրենսգրքի 58 և 59 հոդվածներում ամրագրված նրա իրավունքները:

Տուժողի դատավարական իրավունքները ներառում են, օրինակ՝

- ցուցմունքներ տալու իրավունքը, բացարկներ և միջնորդություններ հայտնելու իրավունքը

- հանցագործությամբ պատճառված վնասի նյութական փոխհատուցման իրավունքը:

Մարդկանց առևտրի դեպքում, երբ կարևոր է ցուցմունքներ ստանալ տվյալ հանցագործությունից տուժած անձից, նրա իրավունքների պատշաճ պաշտպանության իրականացումը մարդկանց թրաֆիքինգից տուժած անձի հետ համագործակցության կարևոր երաշխիք է:

Գործնականում, մարդկանց թրաֆիքինգից տուժած անձինք մեծ մասամբ չեն ցանկանում համագործակցել իրավապահ մարմինների հետ, քանի որ վախենում են կավատների, մարդկանց թրաֆիքինգով զբաղվողների վրեժից և նենգաշորթությունից (շանտաժից), թեև ՀՀ Քրեական Դատավարության Օրենսգրքի 12-րդ հոդվածը նախատեսում է քրեական դատավարությունում մասնակցող անձանց պաշտպանությունը: Օրենքը սահմանում է. «Քրեական վարույթն իրականացնող մարմինը, հայտնաբերելով, որ տուժողը, վկան, մեղավորը, պաշտպանը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձ քրեական օրենքով արգելված ոտնձգությունից պաշտպանվելու կարիք ունի, այդ անձանց խնդրանքով կամ սեփական նախաձեռնությամբ ձեռնարկում է նրանց պաշտպանության անհրաժեշտ միջոցներ՝ կայացնելով համապատասխան որոշում: Պաշտպանության միջոցները պարտադիր կիրառվում են, եթե քրեական դատավարությանը մասնակցող անձին կամ նրա մերձավոր ազգականներին սպառնացել են ֆիզիկական բռնությամբ կամ գույքը ոչնչացնելով, կամ նրա նկատմամբ կիրառել են բռնի գործողություններ՝ կապված քրեական գործով վարույթին նրա մասնակցության հետ»<sup>19</sup>: Թրաֆիքինգի զոհերի դեպքում այս հոդվածը դեռևս կրում է դեկլարատիվ բնույթ:

**Երկրորդ:** Պալերմոյի Արձանագրությունը մասնակից պետությունների վրա դնում է հանցագործությամբ պատճառված վնասի նյութական փոխհատուցման իրավունքի սպառնալից պարտականությունը, այն է՝ իրենց իրավական համակարգում նախատեսել միջոցներ, որոնք մարդկանց թրաֆիքինգի զոհերին հնարավորություն կտան ստանալ հասցված վնասի փոխհատուցումը<sup>20</sup>: ՀՀ Քրեական Դատավարության Օրենսգրքի 58-րդ հոդվածում նշված է, որ տուժողին կարող է պատճառվել ֆիզիկական, գույքային կամ բարոյական վնաս: Ամեն դեպքում հանցավոր կերպով ձեռք բերված միջոցներից փոխհատուցման տրամադրումը անհնարին է այն պատճառով, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում նման մեխանիզմ: Այդուհանդերձ, փոխհատուցումը պետք է վճարվի պետության կողմից: ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքը տալիս է մարդու անձնական ոչ գույքային իրավունքների ցանկը, բայց չի սահմանում հանցագործությամբ պատճառված բարոյական վնասի փոխհատուցման կարգը և հիմքերը<sup>21</sup>: Համանման իրավիճակ է տիրում նաև գույքային վնասի փոխհատուցման<sup>22</sup> հետ կապված հարցում (քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում):

**Երրորդ:** ՀՀ Քրեական Օրենսգրքում չկա սահմանազատում մարմնավաճառության մեջ ներգրավվելու և թրաֆիքինգի դեպքում սեռական շահագործում հասկացությունների միջև և հաճախ հանցագործը պատժվում է մարմնավաճառության մեջ ներգրավվելու

<sup>19</sup> ՀՀ Քրեական Դատավարության Օրենսգրք, կետ 1, հ.98, գլուխ 12

<sup>20</sup> Պալերմոյի արձանագրություն

<sup>21</sup> ՀՀ Քաղաքացիական Օրենսգրք, հ.14,17, 162

<sup>22</sup> ՀՀ Քրեական Օրենսգրք, գլուխ 6



համար, այդ պատճառով էլ գործերի մեծամասնությունը հարուցվում է մարմնավաճառության մեջ ներգրավելու հողվածով՝ տալով հանցագործությանը այլ կարգավիճակ:

**Չորրորդ:** 132-րդ հողվածը քրեականացնում է մարդկանց առևտուրը և սահմանում է տվյալ հանցագործության կատարումը անչափահասների նկատմամբ, որպես ծանրացուցիչ հանգամանք: Ելնելով միջազգային փաստաթղթերի պայմանների պահանջներից (օրինակ՝ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2000թ. Կոնվենցիայի Արձանագրությունը, որը վերաբերում է երեխաների առևտրին, մանկական մարմնավաճառությանը և պռոնկագրությանը) ավելի նպատակահարմար կլիներ առանձնացնել անչափահասների թրաֆիքինգը, որպես առանձին հանցակազմ՝ հաշվի առնելով դրա հասարակական վտանգը:

Որպեսզի ՀՀ օրենսդրությունը համապատասխանի միջազգային ստանդարտին (Անդրազգային հանցավորության մասին Կոնվենցիան և նրա 2 Արձանագրությունները), անհրաժեշտ են հետևյալ լրացումները՝

1. տալ մարդկանց թրաֆիքինգի հստակ օրենսդրական սահմանումը
2. խստացնել մարդկանց թրաֆիքինգի համար նախատեսված պատժամիջոցը
3. փոփոխություն մտցնել Քրեական Դատավարության Օրենսգրքի 12-րդ Գլխի մեջ, որը վերաբերում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց և նրանց ընտանիքների անդամների պաշտպանությանը
4. օրենսդրորեն սահմանել թրաֆիքինգի զոհի իրավական կարգավիճակը
5. առանձնացնել անչափահասների թրաֆիքինգը որպես առանձին հանցակազմ
6. օրենսդրորեն ամրագրել մարդկանց թրաֆիքինգի զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման ապահովման միջոցների իրականացման մեխանիզմը՝ համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ:
7. միջազգային կազմակերպությունների աջակցությամբ օրենսդիր մարմնում լրբքինգի ենթարկել օրենքի վերոհիշյալ փոփոխությունները:

## Այլ երկրների օրենսդրությունը<sup>23</sup>

### Վրաստան

#### Քրեական օրենսգիրք, Հոդված 143(1) Մարդկանց առևտուր (թրաֆիքինգ)

(ուժի մեջ է մտել 10.07.2003 )

1. Մարդու առքն ու վաճառքը, կամ նրա հանդեպ կիրառվող այլ անօրինական գործարքները, ինչպես նաև նրան հավաքագրելը, փոխադրելը, թաքցնելը, կամ բռնության, շանտաժի, վախեցնելու և խաբեության միջոցով ստանալը պատժվում է ազատազրկմամբ 5-ից 12 տարի ժամկետով

2. նույն արարքները, որոնք կատարվել են.

ա. բազմակի,

բ. երկու կամ ավելի անձանց հանդեպ,

գ. կանխամտածված ձևով՝ հղի կնոջ հանդեպ,

դ. պաշտոնական դիրքն օգտագործելով,

ե. տուժողին արտերկիր տեղափոխելով,

զ. կյանքին կամ առողջությանը վտանգող բռնության կիրառմամբ կամ այդպիսի բռնության սպառնալիքով,

է. կանխամտածված՝ անօգնական վիճակում կամ մեղադրյալից նյութական կամ այլ կախման մեջ գտնվող անձանց հանդեպ՝

պատժվում են ազատազրկմամբ 8-ից 15 տարի ժամկետով

3. եթե սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արարքները

ա. կատարվել են կազմակերպված անձանց կողմից,

բ. առաջացրել են տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ 12-ից 20 տարի ժամկետով

*Նշումներ.*

Տվյալ և 143(2) հոդվածի շահագործման Կողեքսի կիրառման ժամանակ պետք է հաշվի առնել մարդու օգտագործումը հարկադիր աշխատանքի նպատակով, հանցավոր և այլ հակահասարակական արարքների իրագործման, սեռական շահագործման կամ այլ ծառայությունների նպատակով՝ մարմնավաճառության մեջ ներգրավելու, ինչպես նաև մարդկային օրգանները, օրգանների մասերը կամ հյուսվածքները վերցնելու և այլ նպատակներով:

<sup>23</sup> Ոչ պաշտոնական թարգմանություն

«Մարդկանց ստրկություն» ժամանակակից պայմաններում նշանակում է՝ նրա անձը հաստատող փաստաթղթերի պահում, ազատ տեղաշարժի սահմանափակում, ընտանիքի հետ կապից զրկում, ներառյալ նամակագրական և հեռախոսային շփումները, մշակութային մեկուսացում՝ պատիվն ու արժանապատվությունը վիրավորող պայմաններում, կամ առանց համապատասխան վճարի հարկադիր աշխատանքի կիրառում:

#### **Հոդված 143(2). Անչափահասների առևտուր (թրաֆիքինգ)**

1. Անչափահասների առքն ու վաճառքը կամ նրանց հանդեպ իրականացված այլ անօրինական արարքները, ինչպես նաև հավաքագրելը, փոխադրելը, թաքցնելը և շահագործման նպատակով ստանալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ 8-ից 15 տարի ժամկետով

2. սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են.

ա. բազմակի,

բ. հարկադրանքի, շանտաժի կամ խաբեության միջոցով,

գ. երկու կամ ավելի անչափահասների նկատմամբ,

դ. տուժողին արտերկիր տեղափոխելով,

ե. կյանքին կամ առողջությանը վտանգող բռնության կիրառմամբ կամ այդպիսի բռնության սպառնալիքով,

զ. պաշտոնական դիրքն օգտագործելով,

է. կանխամտածված՝ անօգնական վիճակում կամ մեղադրյալից նյութական կամ այլ կախման մեջ գտնվող անձանց հանդեպ՝

պատժվում են ազատազրկմամբ 12-ից 17 տարի ժամկետով:

3. սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արարքները, եթե կատարվել են

ա. կազմակերպված խմբի կողմից,

բ. առաջացրել են տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ 12-ից 20 տարի ժամկետով կամ անժամկետ կալանքով:

## Աղբբեջան

### Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Աղբբեջանի Հանրապետության օրենքը<sup>24</sup>

/ընդունվել է 2005թ. հունիսին/

Սույն օրենքը սահմանում է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, Աղբբեջանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և գոհերի իրավական կարգավիճակի իրավական և կազմակերպչական հիմունքները, ինչպես նաև կարգավորում է մարդկանց թրաֆիքինգի գոհերի պաշտպանության և աջակցության տրամադրման հարցերը:

#### Գլուխ I: Ընդհանուր դրույթներ

##### Հոդված 1: Հիմնական սահմանումներ

1.0 Այս օրենքի մեջ օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1.0.1 մարդկանց թրաֆիքինգ – մարդկանց ներգրավումը, հայթայթումը, քողարկումը, տեղափոխումը, մատակարարումը և ընդունումը շահագործման նպատակով, երբ ֆիզիկական ուժի կամ ուժային միջոցների կիրառման սպառնալիքի, ահաբեկման կամ ստիպողական այլ միջոցների օգտագործմամբ, գողության, խաբեության, խարդախության, գոհի վրա ազդեցություն թողնելու կամ նրա թուլությունից օգտվելու միջոցներով, նյութական կամ այլ բարիքների հայթայթման կամ տրամադրման միջոցով, հատուկ արտոնություններ կամ զեղչեր տրամադրելու միջոցով հաջողվում է ստանալ տվյալ անձի՝ մեկ այլ անհատին ենթարկվելու համաձայնությունը (երեխաների ներգրավումը, հայթայթումը, քողարկումը, տեղափոխումը, մատակարարումը և ընդունումը շահագործման նպատակներով դիտվում է որպես մարդկանց թրաֆիքինգի ձև, անգամ եթե այս հոդվածում նշված միջոցները չեն օգտագործվել),

1.0.2 մարդկանց շահագործում - հարկադիր աշխատանք, սեռական շահագործում, ստրկություն, ստրկությանը համանման կամ անազատ վիճակ, մարդու մարմնի օրգանների կամ մասերի անօրինական կորզում, մարդու վրա անօրինական կենսաբժշկական փորձարկումների անցկացում, ներգրավում մարդուն հանցավոր գործունեության մեջ, ինչպես նաև մարդու շահագործման այլ ձևեր (եթե մարդկանց թրաֆիքինգն իրականացվում է 1.0.1 հոդվածում նշված միջոցներով, ապա մարդկանց թրաֆիքինգի գոհի համաձայնությունը հաշվի չի առնվում),

<sup>24</sup> <http://www.legislationline.org>

1.0.3 հարկադիր աշխատանք - որոշակի աշխատանք կատարելու մարդուն հարկադրում,

1.0.4 սեռական շահագործում - մարդու օգտագործում մարմնավաճառության նպատակով, սեռական ստրկություն կամ պոռնոկազմակերպության նյութերի արտադրություն, այլ անձանց սեռական շահագործումից եկամուտ ստանալը,

1.0.5 ստրկություն – մարդու նկատմամբ սեփականության իրավունքի մասնակի կամ ամբողջովին իրականացում,

1.0.6 ստրկությանը համանման իրավիճակներ - «Լրացուցիչ արձանագրություն ստրկության, ստրուկների վաճառքի, ստրկության համանման իրավիճակների և դրանք իրականացնող հաստատությունների վերացման մասին» փաստաթղթում նշված իրավիճակներ և գործողություններ,

1.0.7 մարդկանց առևտրով/թրաֆիքինգով զբաղվող - ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է ցանկացած գործառույթ, կապված մարդկանց առևտրի/թրաֆիքինգի հետ,

1.0.8 մարդկանց թրաֆիքինգի գոհ - անձ, որը ենթարկվել է, կամ ենթադրվում է, որ ենթարկվել է թրաֆիքինգի,

1.0.9 երեխա - տասնութ տարին չլրացած անձ

1.0.10 մարդկանց թրաֆիքինգի պոստենցիալ գոհեր - ողորմությամբ, անբարոյական կյանքով ապրող մարդիկ, լքված երեխաներ, որոնց մասին հոգ չի տարվում, որոնք միտումնավոր թողել են ուսումը, մարդիկ, որոնք կախվածություն ունեն թմրադեղեր կամ հոգեմետ նյութեր վաճառող գործակալներից:

## **Հոդված 2: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին օրենսդրություն**

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին օրենսդրությունը կազմված է Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրությունից, միջազգային պայմանագրերից, որոնց միացել է Ադրբեջանը, սույն օրենքից ու այլ օրենսդրական ակտերից:

## **Հոդված 3: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակները**

3.1 Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակներն են՝

3.1.1 անհատի և հասարակության պաշտպանությունը մարդկանց թրաֆիքինգի ցանկացած ձևից,

3.1.2 մարդկանց թրաֆիքինգի բացահայտումը և կանխարգելումը, ինչպես նաև դրա հետևանքների վերացումը:

3.2 Վերոհիշյալ նպատակները կիրականանան հետևյալ միջոցներով՝

3.2.1 մարդկանց թրաֆիքինգի պատճառների և դրան նպաստող հանգամանքների բացահայտում և վերացում,

3.2.2 մարդկանց, որպես մարդկանց թրաֆիքինգի զոհեր ներգրավելու ռիսկի նվազեցում,

3.2.3 մարդկանց թրաֆիքինգի զոհերի իրավունքների վերականգնում և սոցիալական վերականգնում

#### **Հոդված 4: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հիմնական սկզբունքները**

4.0 Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարն Ադրբեյջանի Հանրապետությունում հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա

4.0.1 հասարակության մեջ մարդկանց թրաֆիքինգի զոհերի խտրականության կանխարգելում,

4.0.2 մարդկանց թրաֆիքինգի զոհերի անվտանգության երաշխավորում և նրանց նկատմամբ հարգալից վերաբերմունք,

4.0.3 մարդկանց թրաֆիքինգով զբաղվողների պատժի անխուսափելիություն,

4.0.4 իրավական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և կազմակերպչական բնույթի կանխարգելիչ միջոցների կիրառում,

4.0.5 հասարակական կազմակերպությունների ներգրավում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտ,

4.0.6 մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության զարգացում:

## **Գլուխ II: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպչական հիմունքներ:**

### **Հոդված 5: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարով զբաղվող պետական մարմիններին աջակցության տրամադրում**

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնյաները, ֆիզիկական և իրավաբանական անձինք կաջակցեն մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարող պետական մարմիններին:

### **Հոդված 6: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Ազգային Գործողությունների Ծրագիր**

6.1 Ադրբեջանի Հանրապետության մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Ազգային Գործողությունների Ծրագիրը (այսուհետ՝ Ազգային Գործողությունների Ծրագիր), հաստատված Ադրբեջանի Հանրապետության լիազոր գործադիր մարմնի կողմից, նպատակ ունի ստեղծել արդյունավետ համակարգ, որը կապահովի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարող իրավասու մարմինների փոխհամաձայնեցված գործունեությունը:

6.2 Ազգային Գործողությունների Ծրագիրը սահմանում է տարբեր գործակալությունների (գործադիր մարմին, հասարակական կազմակերպություններ, միջազգային կառույցներ և այլն) հիմնական պարտականությունները, նրանց մասնակցությունը իրենց գործողությունների իրականացման և համակարգման ոլորտում՝ համաձայնեցնելով դա մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Ազգային համակարգողի հետ:

6.3 Ազգային Գործողությունների Ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու, ներառյալ մարդկանց անվտանգությունն ու տեղեկատվության պաշտպանությունն ապահովելու նպատակով Ազգային Ծրագրի մասնակիցները իրականացնում են իրենց պարտականությունները միայն «անհրաժեշտ տեղեկությունների տիրապետելու» սկզբունքի հիման վրա: Այս սկզբունքի իրագործումը ապահովում է, որ Ազգային Գործողությունների Ծրագրի մասնակիցները իրագործեն դա միայն իրենց լիազորությունների շրջանակում, պաշտպանված լինեն կոռուպցիայից, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի հետ կապված այլ հանցագործություն կատարած անձանց ազդեցությունից:

## **Հոդված 7: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Ազգային Համակարգող**

7.1 Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Ազգային Համակարգողը (այսուհետ՝ համակարգող) Ադրբեջանի Հանրապետության գործադիր իշխանության համապատասխան մարմնի կողմից նշանակված է Ազգային Գործողությունների Ծրագրի իրականացման համար:

7.2 Ազգային Համակարգողը կհամակարգի տարբեր մարմինների գործունեությունը փոխհամագործակցության ընդհանուր համակարգ և տեղեկատվության փոխանակում ապահովելու նպատակով:

7.3 Ազգային Համակարգողը կստեղծի անհրաժեշտ կապեր անվտանգության, սահմանային ծառայության, ոստիկանության, դատախազության մարմինների, դատարանների, այլ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ՝ մարդկանց թրաֆիքինգին առնչվող քրեական գործերով ավելի արդյունավետ օպերատիվ-հետախուզական և հետաքննչական գործունեություն իրականացնելու համար:

7.4 Ազգային Համակարգողի ֆունկցիաները սահմանվում են Ազգային Գործողությունների Ծրագրով:

7.5 Ադրբեջանի Հանրապետության Ազգային Համակարգողը ներկայացնելու է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի տարեկան հաշվետվություն Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմիններին՝ Ադրբեջանի Հանրապետության Սիլի Մեջլիսին և Ադրբեջանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանության գծով գերագույն կոմիսարին (Օմբուդսմեն):

## **Հոդված 8: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հատուկ ոստիկանական գործակալություն**

8.1 Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմինների ղեկավարության տակ գտնվող հատուկ ոստիկանական գործակալությունը հիմնվել է այն նպատակով, որ հնարավորինս արդյունավետ կերպով իրականացնի Ազգային Գործունեության Ծրագրում սահմանված պարտավորությունները, ապահովի մարդկանց թրաֆիքինգի զոհերի անվտանգությունը, նրանց տրամադրի մասնագիտական օգնություն, ստեղծի կենտրոն և այդտեղ կուտակի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին տեղեկություններ, հատուկ այդ նպատակով պատրաստված բարձրակարգ ոստիկան-



մասնագետների միջոցով պայքար ծավալի թրաֆիքինգի դեմ՝ ոստիկաններին ապահովելով անհրաժեշտ բոլոր նյութերով ու սարքավորումներով:

8.2 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի բացահայտման և պաշտպանության հետ մեկտեղ, հատուկ ոստիկանական գործակալությունը պետք է իր ուժերով և միջոցներով իրականացնի հետաքննական և մարդկանց թրաֆիքինգի հետ առնչություն ունեցող հանցագործ տարրերի հետապնդման աշխատանքներ: Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործության դեպքերի հետաքննության ժամանակ ստեղծվելու է հատուկ տեղակատվական բազա՝ դեպքերի գրանցման և կուտակված տեղեկատվության օգտագործման հնարավորություն ընձեռելու համար: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարող հատուկ ոստիկանական գործակալությունը ենթարկվելու է Ազգային Համակարգողին:

8.3 Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարող հատուկ ոստիկանական գործակալության աշխատակիցների ընտրությունը թափանցիկ բնույթ է կրելու: Ընտրությունը կատարվելու է, հաշվի առնելով հատուկ ոստիկանական գործակալությունում ծառայության համար պիտանելիությունը (ըստ անձնային հատկանիշների, մասնագիտական որակավորման, կրթության, հոգեբանական հատկանիշների) և մի շարք այլ չափանիշներ: Հատուկ ոստիկանական գործակալությունում աշխատանքի համար հավաքագրված աշխատակիցները կմասնակցեն հատուկ դասընթացների հետևյալ թեմաներով

8.3.1 Օրենսդրությամբ սահմանված կարգով թրաֆիքինգի գոհերից տեղեկության, փաստաթղթերի ու այլ նյութերի ձեռքբերումը և այլ տեղեկատվական աղբյուրների բացահայտումը: Ձեռք բերված նյութերի վերլուծությունը և որպես վկայություն օգտագործելու հնարավորությունը:

8.3.2 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի բացահայտման մեթոդները:

8.3.3 Հատուկ դիտարկման մեթոդների և տեխնիկական միջոցների օգտագործումը:

8.3.4 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի հետ վարվելու կանոնները:

8.4 Եթե կասկած է առաջանում, թե որևէ անձ մարդկանց թրաֆիքինգի գոհը դառնալու սպառնալիքի տակ է, կամ որևէ կազմակերպություն հայտնաբերում է մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործության իրագործում կամ նախապատրաստում, ապա այդ մասին անհապաղ պետք է տեղեկացնել հատուկ ոստիկանական ծառայության աշխատակիցներին, տրամադրել նրանց համապատասխան փաստաթղթեր և ցույց տալ անհրաժեշտ աջակցություն:

8.5 Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարող գործադիր մարմինները կվերապատրաստեն իրենց աշխատակիցներին այնպես, որ վերջիններս կապող օղակ

հանդիսանան և փոխադարձ կապ ապահովեն հատուկ ոստիկանական ծառայության հետ, ինչպես նաև համապատասխան մասնագիտական պատրաստվածություն ձեռք բերեն մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համար:

**Հոդված 9: Պետական մարմինների պարտականությունները մարդկանց  
թրաֆիքինգի դեմ ուղղված պայքարում**

9.1 Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմինը պետք է իրականացնի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը՝ ի սկզբանե կանխելով մարդկանց թրաֆիքինգի և կազմակերպված հանցագործության հետ կապված բոլոր դեպքերը, հայտնաբերելով ու վերացնելով դրանք:

9.2 Եթե մարդկանց թրաֆիքինգի զոհ դարձած Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիները գտնվում են երկրի սահմաններից դուրս, ապա Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմինները հանձն են առնում պաշտպանել այդ քաղաքացիների իրավունքներն ու շահերը: Արտասահմանում Ադրբեջանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսությունները իրենց շնորհիվ իրավունքի և տվյալ երկրի օրենսդրությանը համաձայն լիակատար աջակցություն կցուցաբերեն մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարող մարմիններին:

9.3 Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմինը ղեկավարելու է մարդկանց թրաֆիքինգի դեմ ուղղված պայքարը՝ բացահայտելով միջազգային կազմակերպված հանցագործ խմբակցությունների և մարդկանց թրաֆիքինգով զբաղվող անձանց միջև կապերը, դրանով կանխելով մարդկանց թրաֆիքինգի ոլորտում այդ կազմակերպված հանցագործ խմբերի գործունեությունը, հայտնաբերելով և ոչնչացնելով այդ հանցագործ տարրերին:

9.4 Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմինները ղեկավարելու են մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը՝ բացահայտելով և վնասազերծելով մարդկանց թրաֆիքինգով զբաղվող անձանց և կանխելով այդ երևույթի զոհերի շարժը Ադրբեջանի Հանրապետության տարածքում և նրանց ներթափանցումը երկրի սահմաններից ներս:

9.5 Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմինները պատրաստելու են մարդկանց թրաֆիքինգի զոհերի ռեաբիլիտացիայի կազմակերպման ծրագրեր և ներկայացնելու են Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմիններին:

9.6 Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմինները կազմակերպելու և իրականացնելու են մարդկանց թրաֆիքինգի զոհերին բժշկական

օգնության տրամադրման (ներառյալ հոգեբանական օգնությունը) և մի շարք այլ համալիր միջոցներ պարունակող ծրագրեր:

9.7 Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմինը կազմակերպելու և կրթական հաստատությունների ուսումնական ծրագրի մեջ ներառելու է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ու պրոֆիլակտիկային ուղղված առարկաներ և անցկացնելու է հատուկ դասընթացներ՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում մասնագետներ պատրաստելու համար:

### **Հոդված 10: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ծավալման նպատակով ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցումը**

10.1 Պետական մարմինները պետք է համագործակցեն ոչ կառավարական կազմակերպությունների հետ՝ մարդկանց թրաֆիքինգը կանխելու համար:

10.2 Ոչ կառավարական կազմակերպությունները, որոնք աշխատում են մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և կանխարգելման ոլորտում, պետք է իրագելության բարձրացմանն ուղղված աշխատանք տանեն մարդկանց թրաֆիքինգի պոտենցիալ զոհերի հետ, պետք է ներգրավվեն մարդկանց թրաֆիքինգի զոհերի համար հատուկ հաստատությունների գործունեությունը կազմակերպելու մեջ, իրավական աջակցություն և վերականգնողական ծառայություններ տրամադրեն զոհերին:

10.3 Խորհրդակցելով Ազգային Համակարգողի հետ՝ Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմինը կարող է դրամաշնորհներ տրամադրել սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետում արձարժված կարիքները հոգալու համար:

## **Գլուխ III: Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը**

### **Հոդված 11: Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը**

11.1 Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը հիմնված է պետական բազմատեսակ ծրագրերի շրջանակներում անցկացվող հատուկ միջոցառումների համակարգի վրա:

11.2 Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելիչ գործունեության համակարգը ներառում է

11.2.1 մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման մասին հետազոտություն՝ հատկապես գենդերային տեսանկյունից:

11.2.2 մարդկանց թրաֆիքինգի երևույթի կանխարգելմանը նպաստող սոցիալական խնդիրների լուծմանը ուղղված ծրագրերի մշակում և իրականացում:

11.2.3 կանանց և երեխաների իրավաբանական և սոցիալական պաշտպանության ամրապնդում:

11.2.4 մարդկանց թրաֆիքինգի պոտենցիալ գոհերին հասարակությանը պիտանի աշխատանքի մեջ ներգրավում և նրանց զբաղվածության ապահովում:

11.2.5 գործատուների քաջալերում՝ աշխատանքի ընդունելու թրաֆիքինգի գոհերին

11.2.6 մարդկանց թրաֆիքինգի պոտենցիալ գոհերի շրջանում քարոզարշավի և կրթական աշխատանքների ծավալում՝ նրանց տեղեկացնելու այն բոլոր վտանգների մասին, որոնք սպառնում են մարդկանց թրաֆիքինգի գոհերին, ինչպես նաև իրազեկելու պետական և վարչական միավորների կազմակերպած պաշտպանական միջոցների ու քրեական օրենսգրքի և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված այլ միջոցների մասին:

11.2.7 սոցիալական, իրավաբանական, մանկավարժական և պայքարի այլ միջոցների մի համակարգի նախաձեռնում, որն ուղղված կլինի պարզելու լքված կամ խնամքից զուրկ երեխաներին գտնելու միջոցները և հայտնաբերելու այն պատճառները, որոնք հնարավոր են դարձնում նրանց շահագործումը:

11.2.8 կրթական համակարգից դուրս մնացած երեխաների հայտնաբերում, նրանց դաստիարակում ու կրթում:

11.2.9 հատուկ ծրագրերի մշակում և իրականացում ուսումնական հաստատություններում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում և այն հաստատություններում, որոնք զբաղվում են անչափահաս կարգազանցներով:

11.2.10 մասնագիտացված դասընթացների մշակում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարող մարմինների անձնակազմի համար:

#### **Գլուխ IV: Մարդկանց թրաֆիքինգի գոհերի սոցիալական ռեաբիլիտացիան և պաշտպանությունը:**

#### **Հոդված 12: Մարդկանց թրաֆիքինգի գոհերին օգնելու համար ստեղծված հատուկ հաստատություններ**

12.1 Մարդկանց թրաֆիքինգի գոհերին պաշտպանելու նպատակով ստեղծվելու են հետևյալ հաստատությունները՝

12.1.1 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի համար նախատեսված հատուկ ժամանակավոր ապաստարաններ

12.1.2 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի համար նախատեսված աջակցության կենտրոններ

12.2 Վերը նշված հաստատություններում բոլոր ծառայությունները մատուցվում են անվճար: Հատուկ այս նպատակով հիմնադրված հաստատությունները չպետք է առաջարկեն որևէ վճարովի ծառայություն:

12.3 Հատուկ հաստատությունների հիմնման, դրանց ֆինանսավորման, գործունեության, դրանց գործունեության վերահսկման մասին որոշումները կայացնում է Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմինը:

### **Հոդված 13: Մարդկանց թրաֆիքինգի գոհերին տրամադրվող ժամանակավոր ապաստարաններ**

13.1 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի համար նախատեսված ժամանակավոր ապաստարանները (այսուհետ «ապաստարաններ») ստեղծվելու են, որպեսզի ապահովեն գոհերի համար պատշաճ կենսական պայմաններ, ապահովեն նրանց անվտանգությունը, տրամադրեն սնունդ և դեղորայք, առաջին բուժ. օգնություն, հոգեբանական, սոցիալական և իրավաբանական աջակցություն: Մարդկանց թրաֆիքինգի գոհերը պետք է հնարավորություն ունենան հեռախոսազանգեր անելու և ապաստարաններում օգտվելու թարգմանչի ծառայություններից: Հատուկ տարածք պետք է հատկացվի գաղտնի (կոնֆիդենցիալ) խոսակցությունների համար:

13.2 Մարդկանց թրաֆիքինգի գոհի մասին տեղեկությունների գաղտնիությունը պետք է երաշխավորված լինի նաև ժամանակավոր ապաստարաններում, և առանց գոհի համաձայնության ոչ մի տեղեկություն չպետք է տրամադրվի քրեական հետապնդում իրականացնող կամ այլ պետական մարմինների:

13.3 Մարդկանց թրաֆիքինգի գոհին ժամանակավոր ապաստարան է տրամադրվելու իր խնդրանքի ներկայացման պահից 30 օրվա ընթացքում՝ անկախ գոհի պահվածքից և քրեական հետապնդում իրականացնող մարմինների հետ համագործակցելու և մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչների դեմ վկայություն տալու ցանկության առկայությունից:

13.4 Ապաստարանի տրամադրման ժամկետը կարող է երկարացվել հատուկ ոստիկանական գործակալության առաջարկով կամ մարդկանց թրաֆիքինգի գոհի խնդրանքով: Ամեն դեպքում ժամանակավոր ապաստարանի տրամադրման ժամկետի երկարացումը համաձայնեցվում է մարդկանց թրաֆիքինգի գոհի ցանկության հետ:

13.5 Մարդկանց թրաֆիքինգի գոհի դարձած երեխաներին ժամանակավոր ապաստարանի տրամադրման և նրանց այդտեղ պահելու հարցերը կարգավորվում են սույն օրենքի 16-րդ հոդվածով:

#### **Հոդված 14: Մարդկանց թրաֆիքինգի գոհերի համար նախատեսված աջակցության կենտրոններ**

14.1 Մարդկանց թրաֆիքինգի գոհի համար նախատեսված աջակցության կենտրոնները (այսուհետ՝ աջակցության կենտրոններ) կազմակերպվելու են, որպեսզի գոհերին տրամադրեն համապատասխան բացատրություն ընթացիկ վարչական և իրավաբանական գործընթացներում նրանց իրավունքների և շահերի պաշտպանության մասին, ապահովեն բժշկական, հոգեբանական և այլ անհրաժեշտ աջակցություն և նպաստեն մարդկանց թրաֆիքինգի գոհերի սոցիալական վերականգնմանը:

14.2 Մարդկանց թրաֆիքինգի գոհի մասին տեղեկության գաղտնիությունը աջակցության կենտրոններում պետք է երաշխավորվի և առանց նրա համաձայնության ոչ մի տեղեկություն չպետք է տրամադրվի քրեական հետապնդում իրականացնող կամ այլ պետական մարմինների: Եթե մարդկանց թրաֆիքինգի գոհերը երեխաներ են, ապա դրա մասին անհապաղ պետք է տեղեկացվեն խնամակալության և հոգաբարձության հարցերով զբաղվող պետական մարմինները և անչափահասների հարցերով ու նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հանձնաժողովը:

14.3 Վերը նշված կենտրոններում աջակցություն ցուցաբերվում է բոլոր անձանց, ովքեր ներկայանում են որպես մարդկանց թրաֆիքինգի գոհեր, համաձայն իրենց դիմումի, անկախ նրանց պահվածքից և քրեական հետապնդում իրականացնող մարմինների հետ համագործակցելու և մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչների դեմ վկայություն տալու ցանկության առկայությունից:

14.4 Եթե աջակցության կենտրոնում ենթադրվում է, որ տվյալ անձը մարդկանց թրաֆիքինգի գոհ է, ապա անհապաղ միջոցներ են ձեռք առնվում սույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն այդ անհատին ժամանակավոր ապաստարան տրամադրելու համար:

#### **Հոդված 15: Մարդկանց թրաֆիքինգի գոհերի սոցիալական վերականգնումը**

15.1 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի սոցիալական վերականգնումը անցկացվում է նրանց հասարակության մեջ նորից ինտեգրելու, նորմալ կենսակերպին վերադարձնելու նպատակով: Նրանց պետք է տրամադրել իրավական աջակցություն, ընձեռել կրթությունը շարունակելու հնարավորություն, միաժամանակ անցկացնել բժշկական, հոգեբանական և մասնագիտական վերականգնման աշխատանքներ ու ապահովել ապրուստի միջոցներով:

15.2 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի սոցիալական վերականգնումը անցկացնելու ընթացքում արգելվում է որևէ սահմանափակումներ կիրառել գոհի մարդու և

քաղաքացու իրավունքների նկատմամբ, որոնք շնորհած են երկրի սահմանադրությամբ, Ադրբեջանի Հանրապետության օրենքներով և միջազգային այն պայմանագրերով, որոնց անդամ է Ադրբեջանի Հանրապետությունը: Արգելվում է նաև վերականգնումն անցկացնել անձի կամքին հակառակ:

15.3 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի վերականգնումն անցկացնելիս, հաշվի են առնում գոհի տարիքը, սեռը և նրա կարիքները (հատկապես սա վերաբերում է մարդկանց թրաֆիքինգի գոհ դարձած երեխաներին), ներառյալ ժամանակավոր ապաստարանի, կրթության և խնամքի կարիքները:

15.4 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի վերականգման հետ կապված ծախսերը հոգալու համար միջոցներ են տրամադրվելու Ադրբեջանի Հանրապետության պետական բյուջեից և այդ նպատակով նախատեսված այլ աղբյուրներից, համաձայն Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության:

15.5 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի վերականգման անցկացման օրենքները սահմանում է Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմինը:

#### **Հոդված 16: Մարդկանց թրաֆիքինգի գոհ դարձած երեխաներին ցուցաբերվող աջակցությունը**

16.1 Մարդկանց թրաֆիքինգի գոհ դարձած երեխային աջակցություն ցուցաբերելիս նախապատվությունը պետք է տրվի նրա շահերի պաշտպանությանը: Անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի լավագույնս պաշտպանվեն երեխայի իրավունքներն ու շահերը Ադրբեջանի Հանրապետության «Երեխայի իրավունքների» մասին օրենքի, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաև այն օրենքների և միջազգային պայմանագրերի համաձայն, որոնց անդամ է Ադրբեջանի Հանրապետությունը:

16.2 Ժամանակավոր ապաստարանները և աջակցության կենտրոնները պետք է անհապաղ տեղյակ պահեն խնամակալության և հոգաբարձության հարցերով զբաղվող պետական մարմիններին և փոքրամասնության հարցերով ու նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հանձնաժողովին մարդկանց թրաֆիքինգի գոհը դարձած երեխայի մասին: Խնամակալության և հոգաբարձության հարցերով զբաղվող պետական մարմինները և փոքրամասնության հարցերով ու նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հանձնաժողովը անմիջապես պետք է միջոցներ ձեռք առնեն, պաշտպանելու այդ երեխայի իրավունքներն ու շահերը Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

16.3 Եթե ոչ մի կերպ հնարավոր չէ որոշել այն անձի տարիքը, ում որոշված է ժամանակավոր ապաստարան տրամադրել, և ենթադրվում է, որ նրա 18-ը դեռ չի լրացել,

ապա նա համարվում է երեխա: Երեխաները մնում են ժամանակավոր ապաստարաններում 60 օր: Ապաստարանում մնալու ժամկետը կարող է երկարացվել հատուկ ուստիկանական գործակալության, խնամակալության և հոգաբարձության հարցերով զբաղվող պետական մարմինների և անչափահասների հարցերով ու նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հանձնաժողովի առաջարկով: Երեխաներին ժամանակավոր ապաստարան տրամադրելիս կամ այնտեղ մնալու ժամկետը երկարացնելիս 10 տարեկանից բարձր երեխաների կարծիքը հաշվի է առնվում:

16.4 Որպես կանոն, երեխաներին առանձին ապաստարաններ են տրամադրվում: Երեխայի շահերից ելնելով, ժամանակավոր ապաստարանը կարող է տրամադրվել նաև ծնողներին (բացառությամբ այն դեպքերի, երբ ենթադրվում է, որ հենց ծնողների մեղքով է երեխան դարձել մարդկանց թրաֆիքինգի զոհ) կամ այլ անձանց, ովքեր կարող են դրական ազդեցություն ունենալ երեխայի հոգեբանական վիճակը բարելավելու հարցում:

16.5 Ժամանակավոր ապաստարաններում ապրող երեխաները կունենան կրթությունը շարունակելու և ծնողների հետ կապ հաստատելու հնարավորություն (բացառությամբ այն դեպքերի, երբ ենթադրվում է, որ հենց ծնողների մեղքով է երեխան դարձել մարդկանց թրաֆիքինգի զոհ):

16.6 Եթե մարդկանց թրաֆիքինգի զոհ դարձած երեխան չզիտի ծնողների գտնվելու վայրը կամ գուրկ է ծնողական խնամքից, ապա պետական մարմինները պետք է միջոցներ ձեռնարկեն երեխայի ծնողներին գտնելու կամ խնամակալ և հոգաբարձու նշանակելու համար: Այս երեխաների սոցիալական պաշտպանությունը ապահովում է Ադրբեջանի Հանրապետության «Ծնողագուրկ և ծնողների հսկողությունից դուրս մնացած երեխաների սոցիալական պաշտպանության» մասին օրենքի համաձայն:

16.7 Մարդկանց թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների սոցիալական վերականգնումը կատարվում է սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետով և 16-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հատուկ կազմած ծրագրերի համաձայն, ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության՝ անչափահասներին լքելու և իրավագանցության կանխարգելման մասին որոշման համաձայն:

### **Հոդված 17: Մարդկանց թրաֆիքինգի զոհերի պաշտպանությունն ու նրանց աջակցություն ցուցաբերելու միջոցները**

17.1 Քրեական հետապնդում իրականացնող պետական մարմնի հարցման հիման վրա պետական այլ մարմինները, իրենց հնարավորությունների շրջանակում, և կացարաններն ու աջակցության կենտրոնները, իրենց գործունեության շրջանակներում, պետք է աջակցեն մարդկանց թրաֆիքինգի զոհերին:



17.2 Մարդկանց թրաֆիքինգի հետևանքով տուժած անձինք վերաինտեգրման ընթացքում ստանում են ամսական թոշակ, որի չափը որոշում է համապատասխան գործադիր մարմինը, և այն հատկացնում պետական բյուջեից կամ այլ աղբյուրներից Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

17.3 Դատարանի կամ քրեական հետապնդում իրականացնող պետական մարմնի որոշմամբ մարդկանց թրաֆիքինգի հետևանքով տուժած անձի մասին տեղեկատվական ծառայություններում և հիմնադրամներում պահվող տեղեկությունների հասանելիությունը սահմանափակվում է:

17.4 Մարդկանց թրաֆիքինգի գոհի մասին անձնական կամ իր ընտանիքի գաղտնիքը հանդիսացող տեղեկատվության տարածման համար մեղավորը պատասխանատվության կենթարկվի Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Մարդկանց թրաֆիքինգի գոհի կյանքին և առողջությանը, նրա բարեկամներին, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարին աջակցող անձանց համար վտանգ սպառնացող տեղեկատվությունը համարվում է կոնֆիդենցիալ (գաղտնի) և արգելվում է դրա տարածումը:

17.5 Մարդկանց թրաֆիքինգի գոհի կամ նրա անվտանգության համար ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների ապօրինի հավաքագրողն և տարածողը նույնպես ենթակա է քրեական պատասխանատվության Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

17.6 Միջազգային փոխադրումներով զբաղվող իրավաբանական անձինք, տրանսպորտային կազմակերպությունները, փոխադրամիջոցների սեփականատերերը կամ օպերատորները պետք է միջոցներ ձեռք առնեն մարդկանց թրաֆիքինգի վտանգի մասին ուղևորներին տեղյակ պահելու համար, ստուգեն, թե արդյո՞ք ուղևորներն ունեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը տվյալ երկրի տարածք մուտք գործելու համար և մերժեն ծառայություն տրամադրել համապատասխան փաստաթղթերի բացակայության դեպքում:

17.7 Մարդկանց թրաֆիքինգի հետևանքով տուժած անձինք Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության համաձայն չեն ենթարկվում քաղաքական, վարչական և քրեական պատասխանատվության, քանի որ գործել են հարկադրանքի կամ սադրանքի ազդեցության տակ, որոնք մարդկանց թրաֆիքինգի գոհի կարգավիճակում լինելու արդյունք են:

17.8 Օտարերկրացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք դարձել են մարդկանց թրաֆիքինգի գոհեր, կստանան նույնպիսի պաշտպանություն և աջակցություն, ինչպիսին Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիները:

**Հոդված 18: Մարդկանց թրաֆիքինգի հետևանքով տուժածների անվտանգության  
ապահովում**

18.1 Մարդկանց թրաֆիքինգի հետևանքով տուժածների անվտանգության ապահովումը պետք է իրագործվի Ադրբեջանի Հանրապետության «Քրեական հետաքննությանը մասնակցություն ունեցած անձանց պետական պաշտպանության» մասին օրենքի հիման վրա: Տվյալ քրեական գործը վարող պետական մարմինը պետք է թրաֆիքինգի գոհին ծանոթացնի վերջինիս հայցին համապատասխան ձեռնարկվող անվտանգության և պաշտպանության միջոցների ապահովման հնարավորություններին:

18.2 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի անվտանգությունն ապահովող միջոցները ձեռնարկվելու են այնքան ժամանակ, մինչև գոհին սպառնացող վտանգը ամբողջովին վերացած լինի, ներառյալ մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների նախնական հետաքննությունը, դատավարությունը, ինչպես նաև դատարանի վերջնական որոշման հայտարարումից հետո ընկած որոշակի ժամանակահատվածը:

18.3 Կեղծանուններ կարող են օգտագործվել մարդկանց թրաֆիքինգի հետևանքով տուժած անձանց ինքնությունը գաղտնի պահելու համար:

**Հոդված 19: Դիվանագիտական ներկայացուցչությունների պարտականությունները  
և հյուպատոսական ծառայությունը մարդկանց թրաֆիքինգի գոհերի աջակցության և  
պաշտպանության հարցում**

19.1 Արտասահմանում Ադրբեջանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսությունները իրենց իրավասությունների և հյուրընկալող երկրի օրենսդրության հիման վրա ծավալում են գործունեություն, որի նպատակն է պաշտպանել Ադրբեջանի Հանրապետության՝ մարդկանց թրաֆիքինգի գոհ դարձած քաղաքացիների իրավունքներն ու շահերը և օգնություն ցուցաբերել հայրենիք վերադառնալու հարցում:

19.2 Եթե Ադրբեջանի Հանրապետության քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթը կորել է կամ հնարավոր չէ այն ետ վերցնել մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչների ձեռքից, ապա Ադրբեջանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսությունները Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր մարմնի հետ մեկտեղ կարճ ժամանակահատվածով տրամադրում են համապատասխան փաստաթղթեր, որոնցով կարելի է հայրենիք վերադառնալ:

**Հողված 20: Մարդկանց թրաֆիքինգին զոհ դարձած օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հայրենադարձությունը**

20.1 Եթե օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը համարվում է մարդկանց թրաֆիքինգի հետևանքով տուժած, ապա նրա նկատմամբ չի կիրառվում Ադրբեջանի տարածքից 1 տարով վտարման մասին վարչական օրենքը:

20.2 Երբ սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամանակը սպառվում է, բայց օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը աջակցում է քրեական հետապնդում իրականացնող մարմնին մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերում, Ադրբեջանի Հանրապետության տարածքից վտարման մասին վարչական հրամանը չի կիրառվում նրանց նկատմամբ, բացառությամբ դեպքերի, երբ քրեական գործը հասցված է ավարտին:

20.3 Ադրբեջանի Հանրապետության վարչական օրենքով նախատեսված երկրից վտարումը չի կիրառվում երեխաների նկատմամբ, որոնք դարձել են մարդկանց թրաֆիքինգի զոհեր: Մարդկանց թրաֆիքինգի զոհ դարձած երեխաները վերադառնում են տուն և ընտանիք, եթե չկա կասկած, որ երեխան նորից կարող է մարդկանց թրաֆիքինգի զոհ դառնալ: Մարդկանց թրաֆիքինգի զոհ դարձած երեխաներին իրենց տուն և իրենց ընտանիք վերադարձնելուց առաջ նախօրոք հարցնում են և հաշվի են առնում 10 տարեկանից բարձր երեխաների կարծիքն ու ցանկությունը:

20.4 Եթե մարդկանց թրաֆիքինգի զոհը ցանկություն է հայտնում հեռանալ Ադրբեջանի Հանրապետությունից, ապա նրան տալիս են համապատասխան փաստաթղթեր, ապահովում նրա ճանապարհաժախսը և հոգում այլ անհրաժեշտ ծախսեր, ինչպես նաև տրամադրում են մանրամասն խորհրդատվություն, որպեսզի հնարավորինս բացառվի մարդկանց թրաֆիքինգի զոհ դառնալու վտանգը:

20.5 Եթե օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը մարդկանց թրաֆիքինգի զոհ է դառնում, ապա Ադրբեջանի Հանրապետության համապատասխան օրենսդիր մարմնի սահմանված կարգի համաձայն, զոհը կարող է դիմել համապատասխան պետական մարմիններին Ադրբեջանի Հանրապետության տարածքում սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետով բնակվելու իրավունք ձեռք բերելու համար: Քրեական հետապնդում իրականացնող մարմինների հետ համագործակցելու ցանկության դեպքում պետք է նախ հաշվի առնել զոհի կրած հոգեբանական և բարոյական տառապանքը, զոհի կարգավիճակում լինելու ժամանակահատվածի տևողությունը, հայրենիք վերադառնալուց հետո կրկին մարդկանց թրաֆիքինգի զոհ դառնալու կամ մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչների կողմից հալածանքների ենթարկվելու վտանգը:

20.6 Եթե հնարավոր չէ պարզել օտարերկրացու կամ քաղաքացիություն չունեցող անձի ինքնությունը, ապա այդ անձինք չեն կարող ստանալ Ադրբեջանի Հանրապետության տարածքում բնակվելու իրավունք և Ադրբեջանի Հանրապետության վարչական կարգի համաձայն ենթակա են երկրից անհապաղ վտարման:

20.7 Մարդկանց թրաֆիքինգի գոհը, որը ստացել է Ադրբեջանի Հանրապետության տարածքում ապրելու իրավունք, ստանում է նաև ներգաղթյալի կարգավիճակ, և կարող է օգտվել այդ կարգավիճակի ընձեռած բոլոր իրավունքներից, նաև պարտավոր է կատարել այդ կարգավիճակից բխող պարտականությունները:

## **Գլուխ V: Մարդկանց թրաֆիքինգի դեպքերի դեմ պայքարի առանձնահատկությունները և մարդկանց թրաֆիքինգի համար պատասխանատվությունը**

### **Հոդված 21. Մարդկանց թրաֆիքինգի համար պատասխանատվությունը**

21.1 Մարդկանց թրաֆիքինգի իրականացմանը մասնակից բոլոր անձինք ենթակա են քրեական պատասխանատվության Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

21.2 Մարդկանց թրաֆիքինգի իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծող արարքի կամ դրա հանդեպ անտարբերության համար պաշտոնյա անձը ենթակա է քրեական պատասխանատվության՝ Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

21.3 Եթե ենթադրվում է, որ օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը ներգրավված է մարդկանց թրաֆիքինգի մեջ, ապա նա չի կարող ստանալ Ադրբեջանի Հանրապետության տարածք մտնելու իրավունք, իսկ նրան տրված վիզան կհամարվի անվավեր:

### **Հոդված 22: Մարդկանց թրաֆիքինգի միջոցով ձեռք բերված կայքի առգրավումը և օգտագործումը**

22.1 Մարդկանց թրաֆիքինգի միջոցով ձեռք բերված ամբողջ կայքը (անշարժ գույք, դրամական միջոցներ, անվտանգության միջոցներ և այլն) ենթակա է առգրավման համաձայն Ադրբեջանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի: Այնուհետև այն հանձնվելու է մարդկանց թրաֆիքինգի գոհերի աջակցության հատուկ հիմնադրամներին:

22.2 Մարդկանց թրաֆիքինգի գոհերի աջակցության հատուկ հիմնադրամներում կուտակված միջոցները օգտագործվում են մարդկանց թրաֆիքինգի գոհերին

փոխհատուցում վճարելու, նրանց սոցիալական ռեաբիլիտացիան իրականացնելու, բուժ. օգնություն ցույց տալու, և այլ կարիքներ հոգալու համար:

22.3 Մարդկանց թրաֆիքինգի զոհերի աջակցության հատուկ հիմնադրամների միջոցների կառավարումը և ծախսը պիտի թափանցիկ բնույթ կրի: Մարդկանց թրաֆիքինգի զոհերի աջակցության հատուկ հիմնադրամների գործունեությունը կարգավորող իրավաբանական հիմունքները սահմանում է Ադրբեջանի Հանրապետության համապատասխան գործադիր իշխանության մարմինը:

### **Հոդված 23: Մարդկանց թրաֆիքինգի զոհերին հասցված վնասի փոխհատուցում**

23.1 Դատարանները որոշում են կայացնում մարդկանց թրաֆիքինգի հետևանքով տուժած անձանց նյութական և բարոյական վնասի դիմաց փոխհատուցում վճարելու մասին:

23.2 Մարդկանց թրաֆիքինգի հետևանքով տուժած անձանց նյութական և բարոյական վնասի դիմաց փոխհատուցումը վճարվում է մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչներից ունեցվածքի բռնագրավման հաշվին՝ գործող օրենսդրության համաձայն: Եթե այդ միջոցները չեն բավարարում վնասը ամբողջովին փոխհատուցելու համար, ապա դատարանի հատուկ որոշմամբ փոխհատուցումը վճարվում է մարդկանց թրաֆիքինգի զոհերի աջակցության հատուկ հիմնադրամների միջոցների հաշվին:

### **Հոդված 24: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի առանձնահատկությունները**

24.1 Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության համաձայն, մարդկանց թրաֆիքինգին վերաբերող քրեական գործերը և վնասի փոխհատուցման դեպքերը կարող են քննարկվել դատարանի փակ նիստում՝ ելնելով մարդկանց թրաֆիքինգի զոհի դիմումի վերաբերյալ դատարանի հատուկ որոշումից:

24.2 Նպատակ ունենալով ապահովել մարդկանց թրաֆիքինգի զոհերի անվտանգությունը և կանխել զոհի վրա մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչների ազդեցությունը, ինչպես նաև հաշվի առնելով զոհի ֆիզիկական և հոգեբանական դրությունը, նրանց հնարավորություն է ընձեռվում դատաքննության ժամանակ վկայություն տալ, օգտագործելով տարբեր տեխնիկական միջոցներ (հեռուստակամուրջ, տեսաձայնագրություն և այլն):

### **Հոդված 25: Իրավաբանական անձանց պատասխանատվությունը մարդկանց թրաֆիքինգի համար**

25.1 Ադրբեջանի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձր կամ կազմակերպությունը (նրա մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը) Ադրբեջանի

Հանրապետության օրենսդրության համաձայն կարող է լուծարվել մարդկանց թրաֆիքինգի հետ կապված լինելու պատճառով:

25.2 Մարդկանց թրաֆիքինգի հետ կապ ունեցող իրավաբանական անձի կամ կազմակերպության լուծարումից հետո, նրա բոլոր միջոցներն ու կայքը տրամադրվում են մարդկանց թրաֆիքինգի գոհերի աջակցության հատուկ հիմնադրամներին:

**Գլուխ VI: Միջազգային համագործակցությունը մարդկանց թրաֆիքինգի դեմ  
պայքարի ոլորտում**

**Հոդված 26: Միջազգային համագործակցությունը մարդկանց թրաֆիքինգի դեմ  
պայքարի ոլորտում**

Ադրբեջանի Հանրապետությունը, ըստ իր կողմից ստորագրված միջազգային պայմանագրերի, համագործակցում է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարող այլ երկրների ու նրանց օրենսդիր գործակալությունների և միջազգային կազմակերպությունների հետ:

**Հոդված 27: Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների  
վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության արդարադատությունը**

Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցանք են գործել, ենթակա են օրենքի առաջ պատասխանատվության Ադրբեջանի Հանրապետության Քրեական օրենսգրքի համաձայն, անկախ հանցանքի իրագործման վայրից:

**Հոդված 28: Մարդկանց թրաֆիքինգի քրեական գործերով ցուցաբերվող  
իրավաբանական օգնությունը**

Մարդկանց թրաֆիքինգի քրեական գործերով տրամադրվում է իրավաբանական օգնություն, համաձայն Ադրբեջանի Հանրապետության կողմից ստորագրված միջազգային պայմանագրերի և քրեական գործերով իրավաբանական օգնություն տրամադրելու մասին Ադրբեջանի Հանրապետության օրենքի:

**Հոդված 29: Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցանք գործած մարդկանց  
անձնատուր լինելը**

Մարդկանց թրաֆիքինգի կազմակերպիչների և այլ անձինք, որոնք ներգրավված են մարդկանց թրաֆիքինգին առնչվող գործարքներում, ենթակա են ձերբակալման և համապատասխան արտասահմանյան երկրի համապատասխան մարմիններին հանձնման, որպեսզի ենթարկվեն քրեական պատասխանատվության կամ պատժի՝ Ադրբեջանի Հանրապետության կողմից ստորագրված միջազգային պայմանագրերի և Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

**Գլուխ VII: Անփոփիչ դրույթներ**

**Հոդված 30: Պատասխանատվություն օրենքը խախտելու դեպքում**

Սույն օրենքը խախտելու դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձինք ենթակա են քրեական պատասխանատվության՝ Ադրբեջանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

**Ադրբեջանի Հանրապետության Քրեական Օրենսգիրքը<sup>25</sup>  
Հատվածներ**

**Հոդված 106**

**Ստրկատիրություն**

(1) Ստրկատիրությունը (Այլ անձի իրավունքների մասնակի կամ ամբողջովին տնօրինումը կամ այդ մարդուն որպես սեփականության վերաբերվելը) պատժվում է 5–10 տարի ազատազրկմամբ:

(2) Եթե վերը նշված արարքների թիրախը երեխա է և նման վարմունքը երեխային թրաֆիքինգի գոհ դարձնելու նպատակ է ունեցել, այդ դեպքում արարքն իրականացնողը պատժվում է 7–10 տարի ազատազրկմամբ:

<sup>25</sup> <http://www.legislationline.org>

(3) Ստրկավաճառությունը, այսինքն բռնությամբ ստրկացումը կամ անձին որպես ստրուկ վերաբերվելը, ստրուկ պահելը, (ապագայում ստրուկին վաճառելու կամ փոխանակելու նպատակով), ստրուկների տնօրինումը, ստրկավաճառությունը կամ թրաֆիքինգի հետ առնչություն ունեցող ցանկացած գործունեություն, ինչպես նաև սեռական ստրկությունը, սեռական անկախությունից զրկելը ստրկության միջոցով, պատժվում է 5–10 տարի ազատազրկմամբ:

### **Սեռական ճնշում**

Անձի դեմ բռնության կիրառումը, մարմնավաճառությամբ զբաղվելու դրդումը, հարկադրական ստերիլիզացիան և սեռական ճնշում գործադրելու հետ կապված այլ արարքները պատժվում են 5-10 տարի կամ ցմահ ազատազրկմամբ:

### **Հոդված 150**

### **Սեռական բնույթի բռնություն**

1. Պեդոֆիլիան կամ անձի նկատմամբ սեռական բնույթ կրող այլ բռնությունները ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքի տակ կամ զոհի անպաշտպանությունից օգտվելու միջոցով պատժվում են 3-5 տարի ազատազրկմամբ:

2. Նույնպիսի հանցանքը կպատժվի 5-8 տարի ազատազրկմամբ, եթե՝

2.1 կատարվել է խմբի կողմից, նախօրոք համաձայնության եկած և պայմանավորված խմբի կողմից կամ կազմակերպված հանցագործ խմբի կողմից

2.2 բռնության հետևանքով զոհը վարակիչ հիվանդություն է ձեռք բերել

2.3 գիտակցաբար կատարվել է 18 տարեկանից ցածր անհատի նկատմամբ

2.4 կատարվել է հատուկ դաժանությամբ

2.5 պարբերական բնույթ է կրել

3. Նույն հանցանքները պատժվում են 8-15 տարի բանտարկությամբ եթե՝

3.1 անտարբերության պատճառով հանգեցրել են զոհի մահվան

3.2 անփութության հետևանքով զոհը վարակվել է ՄԻԱՎ-ով կամ այլ վարակիչ հիվանդություններով

3.3 գիտակցաբար կատարվել է մինչև 14 տարեկան երեխայի նկատմամբ



## **Հոդված 151**

### **Սեռական հարաբերության դրդում**

Ունեցվածքի ոչնչացման, վնասման կամ յուրացման սպառնալիքի տակ կամ գոհի անպաշտպան վիճակից օգտվելու միջոցով սեռական հարաբերություն ունենալու, պեդոֆիլիայի կամ այլ սեռական բնույթի արարքի դրդումը պատժվում է մինիմալ աշխատավարձի 500-1000-ապատիկը կազմող գումարի տույժով, 2 տարի ազատազրկմամբ ուղղիչ աշխատանքային գաղութում կամ 3 տարի ազատազրկմամբ:

## **Հոդված 152**

**16 տարին դեռ չլրացած անչափահասների հետ սեռական գործողություն կամ կապ ունենալը**

16 տարին դեռ չլրացած անչափահասների հետ գիտակցաբար սեռական գործողություն կամ կապ ունենալը պատժվում է 3 տարի բնակավայրից բացակայելու իրավունք չունենալով կամ նույնքան ժամանակով ազատազրկմամբ:

## **Հոդված 171**

### **Դեռահասների ներգրավումը մարմնավաճառության կամ անպարկեշտության մեջ**

1. Մարմնավաճառության կամ անպարկեշտության մեջ դեռահասների ներգրավումը պատժվում է 3-6 տարի ազատազրկմամբ
2. Նույն հանցանքը պատժվում է 4-8 տարի ազատազրկմամբ, եթե`
  - 2.1 կատարվել է ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման ազդեցության տակ
  - 2.2 կատարվել է հանցագործ խմբի կողմից

## **Հոդված 173**

### **Դեռահասների վաճառքը**

1. Դեռահասների վաճառքի կամ դեռահասին մեկ այլ անձին տրամադրելու գործարքի մասնակիցները պատժվում են 3 տարի ազատազրկմամբ

2. Նույն հանցագործությունը պատժվում է 3-8 տարի ազատազրկմամբ, եթե՝

2.1 պարբերական բնույթ է կրում

2.2 կատարվել է 2 կամ ավելի դեռահասների նկատմամբ

2.3 կատարվել է նախօրոք պայմանավորված խմբի կամ կազմավորված հանցագործ խմբի կողմից

2.4 իրականացվել է պաշտոնի չարաշահման միջոցով

2.5 կատարվել է դեռահասի՝ Արբեջանի տարածք ապօրինի ներթափանցելու կամ լքելու պարագայում

2.6 տեղի է ունեցել դեռահասի օրգանների կամ սերմնահեղուկի օգտագործման նպատակով

3. Եթե սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված հանցագործությունն անվտուրության հետևանքով հանգեցնում է մահվան, ապա այն պատժվում է 8-10 տարի ազատազրկմամբ:

### **Հոդված 243**

#### **Մարմնավաճառության մեջ ներգրավում**

1. Մարմնավաճառության մեջ ներգրավումը ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքի, շանտաժի, ունեցվածքի ոչնչացման կամ վնասման սպառնալիքների միջոցով ու դրանից օգուտ կամ շահույթ ստանալու ակնկալիքով, պատժվում է մինիմալ աշխատավարձի 500-5000-ապատիկը կազմող տուգանքով, 160-240 ժամ ուղղիչ աշխատանքներով կամ մինչև 3 տարի ազատազրկմամբ:

2. Նույն հանցանքը պատժվում է 3-6 տարի ազատազրկմամբ, եթե՝

2.1 կատարվել է անդամալույծ մարդու կամ ֆիզիկական կամ մտավոր արատներ ունեցող անհատի նկատմամբ,

2.2 կատարվել է հանցագործ խմբի կողմից:

### **Հոդված 244**

## Հասարակաց տներ

1. Հասարակաց տների կազմակերպումը, վարումը կամ դրանց համար տարածքի վարձակալումը պատժվում է 200-240 ժամ հասարակական պիտանի աշխատանք կատարելով, 2 տարի ուղղիչ աշխատանքային գաղութում անցկացնելով կամ մինչև 3 տարի ազատազրկմամբ:
2. Նույն հանցանքը պատժվում է 3-6 տարի ազատազրկմամբ, եթե՝
  - 2.1 պարբերական բնույթ է կրում

## Թուրքիա

### Քրաֆիքինգի օրենսդրությունը Թուրքիայում<sup>26</sup>

Ոչ Թուրքիայի Քրեական Օրենսգիրքը, ոչ էլ երկրի այլ նորմատիվ ակտեր չեն տալիս մարդկանց թրաֆիքինգի հստակ սահմանումը: Օրենսդրությամբ հաստատված են այնպիսի իրավական մեխանիզմներ, ինչպիսիք են կազմակերպված հանցավորության հետախուզությունը և քրեական հետապնդումը: Մարդկանց թրաֆիքինգը կազմակերպված հանցավորության տարատեսակ է, թեև օրենքը չի նախատեսում մարդկանց թրաֆիքինգի գոհերի իրավունքների պաշտպանության հատուկ միջոցներ (օրինակ, եթե մարդկանց թրաֆիքինգի գոհը օտարերկրացի է, ապա նրան վտարում են իր երկիր և չկա ոչ մի հատուկ իրավական նախապատրաստում կամ միջոց՝ պաշտպանելու նրանց իրավունքները): Պայքարի իրավական միջոցներից նախապատվությունը տրվում է օրենքի խստագույն կիրառմանը, կազմակերպված հանցավոր խմբերի հայտնաբերմանը և պատժմանը:

2002թ. օգոստոսի 3-ին ընդունված նոր օրենքը թեև ամբողջապես չի վերաբերում այս մոտեցմանը, այնուամենայնիվ այն արտահայտում է թրաֆիքինգի և հատկապես կանանց թրաֆիքինգի վերաբերյալ գերազանց իրազեկություն: Թեև շեշտը հիմնականում դրվում է ապօրինի ներգաղթը կանխելու միջոցների վրա, ավելի ծանր պատիժ և առավել հստակ

<sup>26</sup> <http://www.legislationline.org>

չափանիշներ են նշվում մարդկանց կամ մարդու օրգանների թրաֆիքինգը կազմակերպողներին պատժելու համար:

Իրավական միջոցների մեծամասնությունը վերաբերում է սեռական շահագործմանը: Չնայած որ մարմնավաճառությունը օրինական է, որոշ դեպքերում ու ոչ օտարերկրացիների համար, և պատժի չի ենթարկվում Թուրքիայում, դրդումը դեպի մարմնավաճառությամբ զբաղվելը կամ սեռական շահագործումը որակվում են որպես հանցագործություն և ենթակա են պատժի ըստ Քրեական օրենսգրքի և ըստ շահութամետ հանցագործ կազմակերպությունների դեմ ուղղված պայքարի օրենքի:

Ի լրումն այս ամենի, Թուրքիայում գործող «Անձնագրային ռեժիմի մասին» օրենքը և «Փողերի լվացման կանխարգելման մասին» օրենքը, ինչպես նաև այլ վարչական ակտերը իրենց մեջ պարունակում են թրաֆիքինգի դեմ նախազուշական միջոցներ: Մարմնավաճառությամբ զբաղվելու դրդման դեմ պատիժը սահմանվում է Քրեական օրենսգրքի 435-436 Հոդվածներով (1926 թ. ուժի մեջ մտած N 765 օրենք):

ա. Եթե դրդել են մարմնավաճառությամբ զբաղվել մինչև 15 տարեկան անձանց, ապա դրդողը ազատազրկվում է ոչ պակաս, քան 2 տարով: Եթե դրդողը գոհի բարեկամներից է, ապա նրան ազատազրկում են ոչ պակաս, քան 3 տարով:

բ. 15-21 տարեկան անձանց մարմնավաճառությամբ զբաղվելու դրդելու համար, պատիժը կազմում է 6 ամսից մինչև 2 տարի ազատազրկում: Եթե դրդողը գոհի բարեկամներից է, ապա պատիժը կազմում է ոչ պակաս քան 2 տարի ազատազրկում:

գ. 21 տարեկանից բարձր անձանց մարմնավաճառությամբ զբաղվելու դրդելու համար նախատեսված է 6 ամսից մինչև 2 տարի ազատազրկում:

դ. Ըստ Քրեական օրենսգրքի 436 հոդվածի, այն անձինք, որոնք որևէ միջոցներով (ուժային, ահաբեկման, ծեծի և այլն) դրդել են կանանց (21 տարեկանից ցածր կամ 21-ը լրացած) մարմնավաճառությամբ զբաղվել, պատժվում են 1-3 տարի ազատազրկմամբ: Եթե դրդողը գոհի բարեկամն է, ապա պատիժը կազմում է 2-5 տարի ազատազրկում:

Այս պատժամիջոցների ավելի ծանր ձևերը կարող են կիրառվել ըստ Քրեական Օրենսգրքի 313 հոդվածի, եթե թրաֆիքինգ կազմակերպող անձը ներգրավված է հանցախմբում կամ գլխավորում է կազմակերպված հանցագործ խմբերի ցանց:

2002թ. օգոստոսի 3-ին ընդունված նոր օրենքը խստացնում է ապօրինի ներգաղթի և թրաֆիքինգի դեմ ուղղված պատժամիջոցները:

Այս օրենքն ունի 2 նպատակ. առաջինը՝ այն քրեական օրենսգիրք է ներմուծում մի հոդված, որը բացահայտում է և բնորոշում ապօրինի ներգաղթը և սահմանում է 2-5 տարի ազատազրկում ու մեկ միլիարդ թուրքական լիրայից ոչ պակաս տույժ, իսկ եթե գոհը մահանում է տրանսպորտով փոխադրման պայմանների հետևանքով, ապա ապօրինի

ներգադրով զբաղվողները դատապարտվում են 10 տարի ազատազրկման: Երկրորդը՝ 5-10 տարի բանտարկում է սպառնում (10-20 տարի այն դեպքում, եթե մեղադրվողը կազմակերպված հանցագործ ցանցի անդամ է) թրաֆիքինգ կազմակերպող այն անձանց, որոնք բռնագրավում են զոհերի անձնագրերը, վերջիններիս թրաֆիքինգի ենթարկելու կամ նրանց օրգանները վաճառելու համար:

Թուրքիայում օտարերկրացիների համար գործող Անձնագրերի մասին 5682 օրենքը և Բնակության ու ճանապարհորդության մասին 5683 օրենքը, որոնք երկուսն էլ ընդունվել են 1950թ., պարունակում են հատկապես կանանց թրաֆիքինգին վերաբերող հոդվածներ: Ըստ անձնագրի մասին օրենքի, եթե մարմնավաճառը կամ թրաֆիքինգով զբաղվող անձն օտարերկրացի են, նրանք ենթակա են անհապաղ արտաքսման:

Նույն օրենքի 8-րդ հոդվածում ասվում է, որ «նրանց, ովքեր զբաղվում են մարմնավաճառությամբ, իրենց ապրուստի միջոցները հայթայթում են կանանց դրդելով մարմնավաճառությամբ զբաղվելու և նրանց, ովքեր զբաղվում են կանանց թրաֆիքինգով, արգելվում է մուտք գործել այս երկիր»: Հետևաբար, նրանց վկայությունը հաշվի չի առնվի: Նմանապես, 5683 օրենքի 19-րդ հոդվածում ասվում է, որ ՆԳ նախարարը, կառավարիչները և փոխկառավարիչները իրավասու են երկրից վտարելու այն օտարերկրացիներին, բոլոր նրանց, ովքեր ներգրավված են թրաֆիքինգի մեջ, մարմնավաճառներին, թրաֆիքինգի կազմակերպիչներին՝ այդ մասին նախազգուշացում ստանալուց 15 օր հետո: Եթե նույն անձին նմանատիպ հանցանքի մեջ են կասկածում երկրորդ անգամ, այլևս զգուշացում չի արվում, և այդ մարդուն անհապաղ արտաքսում են երկրից անմիջապես ձերբակալումից հետո:

2002թ. օգոստոսի 3-ին ընդունված նոր օրենքը սահմանում է 5-10 տարով ազատազրկում այն անձանց համար, որոնք բռնագրավել են թրաֆիքինգի զոհերի անձնագրերը, և 10-20 տարով ազատազրկում, եթե վերը նշված հանցագործությունը կազմակերպված հանցագործ խմբի արարք է:

Անվտանգության ընդհանուր վարչության կազմում դեռևս գոյություն չունի հատուկ այս նպատակով կազմավորված ստորաբաժանում, բայց կան որոշ բաժիններ, օրինակ՝ ընդհանուր անվտանգության բաժինը, երեխաների անվտանգության բաժինը և այլն, որոնք ներգրավված են երեխաների և կանանց թրաֆիքինգի դեմ պայքարում:

Ստորև ներկայացվում են Թուրքիայի Քրեական օրենսգրքի 201a և 201b ենթահոդվածները, որոնք ուժի մեջ են մտել 2002թ. օգոստոսին:

### **Ենթահոդված 201a**

Իրականացնել միգրանտների ապօրինի ներթափանցումը (smuggling) երկրի տարածք, նշանակում է օտարերկրացի, քաղաքացիություն չունեցող կամ Թուրքիայում մշտական բնակվելու իրավունք չունեցող անձանց համար ապահովել Թուրքիա անօրինական ճանապարհով մուտք գործելու և այնտեղ մնալու հնարավորությունը, կամ կազմակերպել և ապահովել Թուրքիայից ապօրինի արտագաղթ՝ ուղղակի կամ անուղղակի շահույթի ակնկալմամբ:

Գլխավոր հանցագործը իր օգնականների և հրահրողների հետ, որոնք օգնել և նախաձեռնել էին համապատասխան պայմանավորվածությունները (ներառյալ անհատի ապօրինի ժամանումը, մնալու կամ մեկնելու համար կեղծ անձնագրերի և ճամփորդական փաստաթղթերի պատրաստումը), ինչպես նաև այն անձինք, որոնք ստանձնել էին այս հանցագործության ղեկավարումը, դատապարտվելու են 2-5 տարի ազատազրկման և մեկ միլիարդ լիրայից ոչ պակաս տույժի մուծման, առանց խոչընդոտ հանդիսանալու այլ հանցագործությունների համար պատիժների կիրառմանը: Հանցագործության կատարման համար օգտագործված տրանսպորտային և այլ միջոցները ենթակա են բռնագրավման:

Այս հանցագործության համար նախատեսված պատժիչ միջոցները կիսով չափ ծանրանալու են զոհերի կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու դեպքում, իսկ զոհերի մահվան դեպքում՝ կրկնապատկվելու են:

Եթե վերը նշված հանցագործությունը գաղտնի դավադրության մաս է կազմում, ապա այս դեպքում նույնպես պատիժը կրկնապատկվում է:

### **Ենթահոդված 201b**

Հանցանք գործած անձը դատապարտվելու է 5-10 տարի ազատազրկման և մեկ միլիարդ լիրայից ոչ պակաս տույժի մուծման, եթե նա հայթայթում, առևանգում, պահում, տեղափոխում կամ ընդունում է մարդկանց, հարկադրում նրանց իր համար աշխատել և ծառայություններ մատուցել, նրանց ստրկացնում, ահաբեկելով և ուժ գործադրելով ստիպում է հրաժարվել սեփական ներքին օրգաններից, կամ այս նպատակներով կիրառում է անպատշաճ ազդեցություն, խաբեությամբ արդարացնում իր արարքները կամ օգտվում զոհի անելանելի վիճակից:

Եթե հանցագործությունը կատարվել է առաջին հոդվածում նկարագրված միջոցների կիրառմամբ, ապա ենթադրվում է, որ զոհը համաձայնություն չի տվել:

Սույն հոդվածի առաջին պարբերությունում ամրագրված պատժամիջոցները կիրառվելու են, եթե հանցանքը կատարվել է մինչև 18 տարեկան երեխայի նկատմամբ՝

նույնիսկ այն դեպքերում, երբ ամրագրված հոդվածում նշված հանցագործության բոլոր տարրերը առկա են:

Եթե վերը նշված հանցագործությունը գաղտնի դավադրության մաս է կազմում, ապա պատիժը կրկնապատկվում է:

#### **«Հույս և օգնություն» ՀԿ-ի աշխատանքի փորձը մարդկանց թրաֆիքինգի ոլորտում**

«Հույս և օգնություն» ՀԿ-ն աշխատում է թրաֆիքինգի խնդրի ոլորտում սկսած 2000թ.-ից, երբ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ կանխարգելումը միգրանտ մարմնավաճառների շրջանում» ծրագրի շրջանակներում բացահայտվեցին և արձանագրվեցին մարդկանց թրաֆիքինգի դեպքեր: Ծրագրին ֆինանսական աջակցություն էր ցուցաբերում ՄՄԿ-ն:

2000թ.-ին ՀԿ-ն մասնակցել է կանանց և երեխաների անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի հետազոտությանը, որն իրականացվում էր ՄՄԿ-ի կողմից՝ «Հայկական սոցիոլոգիական ասոցիացիա»-ի, ԵԱՀԿ-ի, ՅՈՒՆԻՍԵֆ-ի, «Գործարար կին» ՀԿ-ի մասնակցությամբ: Հետազոտության հիման վրա կազմվել է ՄՄԿ Հայաստանի գրասենյակի «Կանանց և երեխաների անօրինական միգրացիան Հայաստանից» զեկույցը, որը տպագրվել է 2001թ.-ին:

2002-2003թթ. իրականացվել է «Համայնքների իրազեկության բարձրացումը կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման հարցում» ծրագիրը, որը ֆինանսավորել է «World Learning» կազմակերպությունը:

2003թ.-ն իրականացվել է «Թրաֆիքինգի կանխարգելումը և ՄՃՓՀ/ՁԻԱՀ ռիսկի նվազեցումը Երևանի մարմնավաճառների շրջանում» ծրագիրը, որը ֆինանսավորել է Հայաստանի Բաց հասարակության հիմնադրամը:

Ծրագրի շրջանակներում տպագրվել է բուկլետ:

2003-2006թթ. ԱՄՆ Պետ. Դեպարտամենտի ֆինանսավորմամբ իրականացվել է «Թրաֆիքինգի գոհերին աջակցության տրամադրման ծառայություն» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում գործում է ապաստարան, «Օգնության հեռախոս» թեժ գիծը, թրաֆիքինգի գոհերին տրամադրվում է բժշկական, հոգեբանական, իրավաբանական խորհրդատվություն և սոցիալական վերականգնման ծառայություն:

2005թ.-ից «Հույս և օգնություն» ՀԿ-ն թրաֆիքինգի դեմ ծրագրեր իրականացնող տեղական և տարածաշրջանային կազմակերպությունների ցանցի անդամ է:



## Գրքում օգտագործվող հապավումները

ՀԿ - հասարակական կազմակերպություն

ՄՄԿ - միգրացիայի միջազգային կազմակերպություն

ԱԳՆ - արտաքին գործոց նախարարություն

ԱՄԿ - աշխատանքի միջազգային կոմիտե

ՄՃՓՀ - սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ

ԵԱՀԿ - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

UNICEF - միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ

# Բովանդակություն

Ներածություն .....	3	
Թրաֆիքինգ: Իրավիճակը Հայաստանում .....	7	
Անօրինական միգրացիան և թրաֆիքինգը Հայաստանից Թուրքիա .....	9	
Հանդիպումներ՝ խնդիրներ, դժվարություններ և առաջարկություններ		
Սարվիի .....	11	
Ստամբուլ .....	18	
Անկարա .....	26	
Տրապիզոն .....	31	
Հարցազրույցներ .....		41
Մարդկանց թրաֆիքինգի բնագավառում ազգային և միջազգային օրենսդրությունը .....	51	
Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը .....	56	
Այլ երկրներ օրենսդրությունները		
Վրաստան .....	60	
Ադրբեջան .....	62	
Թուրքիա .....	84	
«Հույս և օգնություն» ՀԿ-ի աշխատանքի փորձը մարդկանց թրաֆիքինգի ոլորտում .....	88	
Գրքում օգտագործվող հապավումները .....	89	

## ՆՈՐԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Թրաֆիքինգը և անօրինական միգրացիան Հարավային Կովկասում

#

Սրբագրումը`	Մ. Շատվորյանի
Համակարգչային շարվածքը`	Մ. Շատվորյանի
Մակետավորումը`	Ֆ. Խաչատուրյանի
Կազմի ձևավորումը`	Ե. Վանոյանի